вслу'шиваться *ուշադրությամբ լսել, լավ լսել*:

всма'триваться *ուշադրությամբ նայել, լավ դիտել, լավ զննել*:

всмотре'ться (— рю'сь, — ришься, — рятся; hрм. — три'сь) տես **всма'триваться**.

всмя'тку *թերխաչ, թերխորով*. яйцо всмятку *թերխաչ ձու*:

ВСНХ (Высший совет народного хозяйства) *ԺՏԳԽ (ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդ), ԺՏԲԽ (ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհուրդ)*:

всо'вывать *ներս կոխել, մեջը ճխտել, ներկոխել, ներմղել*:

всо'вываться *խցկվել, ճխտվել*:

всоса'ть տես **вса'сывать**.

всоса'ться տես **вса'сываться**.

вспа'ивать *դիեցնել, կաթով կերակրել, ջուր խմացնել, ջրել*:

вспада'ть, вспасть (— аду', — дёшь. — ду'т; hрм. — ади') **на ум** *միտքն ընկնել, մտածել*:

вспа'лзывать տես **всполза'ть**.

вспа'ривать *փափկացնել, կակղացնել, ջերմացնել, քրտնեցնել*. պտկր. *սաստիկ ծեծել, քոթակել*. — землю *հողը ցելել*:

вспа'рить տես **вспа'ривать**.

вспа'рхивать *վեր թռչել, ճախրել, սավառնել*:

вспа'рывать *քանդել, բաց անել*:

вспа'ханный *վարած, հերկած*. — участок земли *վարած հողամաս, հերկած հողամաս*:

вспаха'ть (— шу', — а'шешь. — а'шут; hрм. — ши') տես **вспа'хивать**.

вспа'хивание *վարելը, հերկելը, վարում, հերկում*:

вспа'хивать *վարել, հերկել*:

вспа'шка *վար, հերկ*. — зяблевая *աշնան վար, աշնան հերկ, աշնանավար, աշնանահերկ, աշնավար*:

вспе'нивать, вспе'нить *փրփրացնել*:

вспе'ниваться *փրփրել*:

всплакну'ть *մի փոքր լաց լինել, տրտղալ*:

вспле'ск *ճղփյուն, կարկաչյուն, ծփյուն*:

всплесну'ть *ճղփղփացնել*. всплеснуть рука'ми *ձեռքերն իրար զարկել*:

всплошну'ю *խիտ-խիտ, կիպ*:

всплыва'ть *ջրի յերեսը դուրս գալ, ջրի յերեսն յելնել*. պտկր. *հայտնվել, յերևան գալ*:

всплы'ть (— лыву', — лывёшь, — лыву'т; hрм. — ви') տես **всплыва'ть**.

вспои'ть տես **вспа'ивать**.

вспола'скивать, всполоска'ть (— ощу', — щешь, — щут; hрм. — щи') **всполосну'ть** *վողողել, ողողել, ցողել*:

всполза'ть, всползти' (— зу', — зёшь, — зу'т; hрм. — зи') *սողալով վեր բարձրանալ, վերև սողալ*:

всполохну'ть, всполоши'ть *անհանդըստացնել, խռովել, իրարանցում առաջ բերել, տագնապեցնել*:

всполохну'ться, всполоши'ться *անհանգստանալ, հուզվել, իրար անցնել, տագնապել*:

вспомина'ть, вспо'мнить *հիշել, մտաբերել*. не могу вспомнить *չեմ կարողանում հիշել, միտս չի գալիս*:

вспомина'ться *միտքն ընկնել*:

вспо'мнить տես **вспомина'ть**.

вспомога'тельный *ոգնական, ժամանդակ*. — глаго'л *ժամանդակ բայ*. — тра'нспорт *ռազմ. ժամանդակ տրանսպորտ*. — ые войска' *ոգնական զորքեր, ժամանդակ զորքեր*:

вспоможе'ние, вспомоществова'ние *նպաստավորում, ոգնություն, ժամանդակություն, ոգնում, ժամանդակում*:

вспомяну'ть տես **вспомина'ть**.

вспоро'ть (— рю', — решь, — рют; hрм. — пори') տես **вспа'рывать**.

вспорхну'ть տես **вспа'рхивать**.

вспоте'ть տես **поте'ть**.

вспры'гивать, вспры'гнуть *վերև թռչել, թռչել-բարձրանալ, վերև ցատկել*. — на что-либо *մի բանի վրա թռչել, մի բանի բարձրանալ, մի բանի վրա ցատկել*. — на ло'-

шаль, и т. п. *ձիու վրա թռչել և այլն*:

вспры'скивание *ներարկում, սրբում, ցրցամում*. — подкожное *ենթամաշկյա ներարկում, ներարկում կաշվի տակ, ներարկում մորթի տակը*:

вспры'скивать, вспры'снуть 1. *սրբում, ներարկել, ցրցամել*. 2. *կոնծել, կոնծաբանել*:

вспу'гивать, вспугну'ть *խրտնեցնել, զարհուրեցնել, վախեցնել*:

вспуха'ние *ուռչելը, ուռչում*:

вспуха'ть *ուռչել, ուռել*:

вспу'хнуть (անց. вспу'хнул, — ла, — ло և вспух, — хла, — хло) տես **вспуха'ть.**

вспу'чивать, вспу'чить տես **пучить.**

вспуши'ть տես **пушить.**

вспыли'ть *զայրանալ, կատաղել, սաստիկ բորբոքվել*. — на кого'-ли'бо *մեկի վրա զայրանալ, մեկի վրա կատաղել*:

вспы'льчиво *դյուրադրդիռ, դյուրաբորբոք կերպով, դրդռված կերպով, տաքարյունությամբ*:

вспы'льчивость ի. *դյուրադրդռություն, դյուրաբորբոքություն, տաքարյունություն*:

вспы'льчивый *դյուրադրդիռ, դյուրաբորբոք, տաքարյուն*:

вспы'хивать, вспы'хнуть *բռնկել, բռնկվել, բորբոքվել, վռթալ*. պտկր. *զայրանալ, կատաղել, կրակ կտրել, կարմրել, կարմրատակել*:

вспы'хивание տես **вспы'шка.**

вспы'шка *բռնկում, բռնկոց, վռթոց*:

вспя'ть *դեպի հետ, հետ-հետ*:

встава'ние *վեր կենալը, վոտքի կելնելը*:

встава'ть (встаю', — ёшь, — ю'т) *վոտքի կելնել, վերկենալ*. — с левой ноги *ձախ վոտի վրա վեր կենալ, վատ տրամադրությամբ վեր կենալ*. — из-за стола *սեղանից վեր կենալ*. солнце встало *արևը ծագեց, արևը բարձրացավ, արևն կելավ*. я нашёл его' вста'вшим *կես նրան վերկացած դտա*. пора вставать! *ժամանակ է վեր կենալու*:

вста'вить (— влю, — вишь, — вят) տես **вставля'ть.**

вста'вка *ագուցյց, հավելված, ավելացրած կտոր, ներդիր, ընդմիջարկություն*:

вставля'ть *ագուցանել, մեջը դնտեղել, մտցնել, վրան ավելացնել, ներդնել, ընդմիջարկել*. — словечко *խոսք ավելացնել, խոսք վրա բերել*. — в раму *դետեղել շրջանակի մեջ, շրջանակի մեջ հագցնել*:

вставно'й *ագուցիկ, ներդրվող, ներդնելի, դնովի*. — ые зубы *դրված ատամներ, դնովի ատամներ, կեղծ ատամներ*:

вста'вочный *ներդրած, ներարկած*:

встарину', **вста'рь** *հին ժամանակ, առաջվա ժամանակները, առեներ*:

встать (вста'ну, — нешь, — нут; прш. — а'нь) տես **встава'ть.**

встрево'жить տես **трево'жить.**

встрево'житься տես **трево'житься.**

встрево'женный *անհանգստացած, հուզված, վրդովված*:

встрепа'ть (— плю', — плешь, — плют; прш. — пли') *ղողղել, խճճել, քրքրել*:

встрёпанный: как встрёпанный *բոլորովին սթափված, բոլորովին թարմացած, լիասթափված, լիասթափ*:

встрепену'ться 1. *ցնցվել*. (յերկյուղից) *սարսել, դողալ, ցնցվել*. она вступену'лась при зву'ке его' го'лоса *նրա ձայնը լսելիս՝ նա ցնցվեց*. 2. (թռչունների մասին) *արթնանալ, իրենց թափահարել, թրթփալ*:

встрёпка, встрёпывание *ղողղելը, խճճելը, քրքրելը, ղողղում, խճճում, քրքրում, խիստ նախատինք, խիստ հանդիմանություն*. задать встрёпку *լավ ծեծել*:

встре'тить (— чу, — тишь, — тят; прш. — е'ть) տես **встреча'ть.**

встре'титься (— чусь, — тишься, — тятся; прш. — е'ться) տես **встреча'ться.**

встре'ча *հանդիպում, պատահում, ընդունելություն, դիմավորում*:

встреча'ть *պատահել, հանդիպել, ընդունել, դիմավորել*:

встреча'ться 1. *հանդիպել, պատահել*. 2. *դեպք պատահել*:

встре'чный *հանդիպական, հակառակ, ընդդեմ, դեմի*. пе'рвый встре'чный *առաջին հանդիպողը, ամեն մի պատահական անցորդ, ամեն ոք*. встречный поезд *հանդիպադնացք*. встре'чный бой *ռազմ. դիմամարտություն, ընդդիմամարտություն*.

встре'чный илан *հանդիպակաս պլան*. — иск *հակահայց*:

встру'нку *չոփ-չիտակ, մոմի պես չիտակ, ուղիղ ձգված*:

встря'ска *թափահարում, ցնցելը, ցնցում*. задать встряску *ջարդել, ծեծ կերցնել*:

встря'хивать, встряхну'ть *թափ տալ, թափահարել, ցնցել*:

встря'хиваться, встряхну'ться *իրեն թափ տալ, թափահարվել*. պտկր. *կաղդուրվել, զորանալ*:

вступа'ть, вступи'ть (— плю', — пишь, — пят) *մտնել, ներս մրտնել, ատանձնել (պաշտոնի մասին)*. — в профессиональный союз *արհեստակցական միության մեջ մրտնել*. — в силу *ուժի մեջ մտնել*. — в должность *պաշտոնի մեջ մտնել, պաշտոն ստանձնել*. — в соглашение *համաձայնության մեջ մտնել, համաձայնության կնքել*:

вступа'ться за к.-п. *մեկին պաշտպան հանդիսանալ, մեկին հովանավորել, մեկին պաշտպանել*:

вступи'ться (— плю'сь, — пишься, — пятся) տես **вступаться.**

вступи'тельный *ներս մտնելու, ներածական, մուտքի*. — ое слово *ներածական խոսք*. — ая речь *ներածական ճառ, պաշտոնի ստանձման ճառ*. — ые замечания *ներածական դիտողություններ*. — ый взнос *մուտքի վճար, մուտքավճար*:

вступле'ние *մտնելը, ներածություն, ատանձնում*. յերժշտ. *ճայնամուտ*. — в союз молодёжи *յերիտասարդության միության մեջ մտնելը*:

всу'е *ղուր տեղը, ապարդյուն կերպով, ունայնորեն, անօտիաբար*:

всу'нуть տես **все'вывать.**

всухомя'тку *ցամաք, չոր*. есть всухомя'тку *ցամաք ուտել, չոր-չոր կռնել*:

всуча'ть, всу'чивать, всучи'ть *հետը վոլորել, ղռռով մեկի ձեռքը կամ դրպանը դնել, ղռռով մեկի ձեռքը կամ դրպանը խոթել*:

всхли'пывание *հեկեկալը, հեծկլտալը, հեկեկում, հեծկլտում, հեծկլտոց*:

всхли'пывать, всхли'пнуть *հեկեկալ, հեծկլտալ*:

всход *յերևելը, ծագում, ծիլ, բողբոջ (բույսերի)*:

всходи'ть (— хожу', — хо'дишь, — хо'дят) *յերևել, բարձրանալ, ծագել, ծլել, բողբոջել*:

всхо'дный տես **всхожий.**

всходя'щий *посе'в ամող ցանք, ծլող ցանք*:

всхожде'ние տես **восхождение.**

всхо'жесть *f. ծլունակություն, բեղունություն, առուղություն, աստքություն*:

всхо'жий (— ая, — ее) *ծլունակ, բեղուն, աստք, առուղ*:

всхра'пывание *խռմփալը, խռմփոց*:

всхра'пывать, всхрапну'ть *խռմփալ, խռմփացնել*:

всыпа'ть (— па'ю, — па'ешь, — па'ют) *մեջն ածել, մեջը թափել, լցնել*:

всы'пать (— плю, — плешь, — плют; *hpm*. — сыпь) տես **всыпать.** — кому-либо *վռեհկ. մեկին մի լավ ծեծել, հարվածներ հասցնել, մեկի կաշին քերթել*:

всы'пка *մեջն ածելը, մեջը թափելը, լցնելը*:

всю'ду *ամենուրեք, ամեն տեղ*:

вся տես **весь.**

вся'к *ամեն վոք, յուրաքանչյուր մարդ, ամեն մարդ*:

вся'кий (— ая, — ое) *ամեն մեկ, յուրաքանչյուր*. — за себя отвечает *ամեն մեկը պատասխանատու է իրեն համար*. — раз как... *ամեն անգամ, յերբ... յուրաքանչյուր անգամ, յերբ...* всякий может это сделать *ամեն մեկը կարող է այդ բանն անել*:

вся'чески *ամեն կերպ, ամեն ձևով*:

вся'ческий (— ая, — ое) *ամեն տեսակ, ամեն տեսակի*:

вся'чина *ամեն տեսակ բան*. вся'кая вся'чина *ամեն տեսակ բաներ, խառնուրդ, խառնիխուռն բաներ*:

вта йне *ծածուկ, թաղուն, գաղտնի, ծածկաբար, թաղուն կերպով, գաղտնորեն, գողտուկ*:

вта'лкивание *հրելով ներս մտցնելը, ներհրում*:

вта'лкивать *հրելով ներս մտցնել, ներհրել*:

вта'птывание *տրորելով ներս կոխելը, ներտրորում*:

вта'птывать *տրորելով ներս կոխել, ներս մղել, ներտրորել*. — в грязь *ցեխը կոխել, ցեխի մեջ տրորել*:

вта'скивание ներս քաշելը, ներս քարշ տալը, ներքաշում:
вта'скивать, втащи'ть ներս քաշել, ներս քարշ տալ, ներքաշել:
вта'скиваться, втащи'ться քաշ դալով ներս մտնել, հաղիվ-հաղ շարժվելով ներս մտնել:
вта'чивать, втача'ть ներս կարել, ներկարել:
втащи'ть տես вта'скивать.
втека'ние հոսելը, թափվելը, ներհոսում, ներթափում:
втека'ть, вте'чь (— еку', — ечёшь, — еку'т; հրմ. — еки'; անց. — тёк, — екла') հոսել, թափվել, ներհոսել, ներթափվել:
втёмную մութը, մութ-մութ, մթնաբար:
втемя'шить գլուխը մտցնել, ներշնչել, հասկացնել. — кому'-либо в голову մեկի գլուխը մտցնել, մեկին հասկացնել:
втемя'шиться գլուխը մտնել, գլխին փչել, մտքումը դնել. мне это втемяшилось в голову այդ բանն իմ գլուխս եր մտել:
втере'ть (вотру', вотрёшь, вотру'т; հրմ. — три'; անց. втёр, — рла) տես втирать.
втерпёж հանդուրժելի, տանելի. это не втерпёж այս հանդուրժելի բան չէ, այս տանելու բան չէ, այս անտանելի բան է:
втесни'ть, втесня'ть ներս մղել, ներս կոխել, ներմղել, ներկոխել:
втечь տես втекать.
в течение ընթացքում. — года տարվա ընթացքում:
втира'ние չփելով, քսելով ներս թափանցեցնելը, ներշփում, ներքսում:
втира'ть, втере'ть չփելով, քսելով ներս թափանցեցնել, ներշփել, ներքսել. — кому-либо очки մեկի աչքին թող փչել:
втира'ться իրեն չփել տալ, քսել տալ. պտկր. ներս խցկվել:
втиру'ша սմեն բանի մեջ ընկնող, սմեն բանի մեջ խառնվող, «ճանի ճանճ», «անպոչ դդալ»:
вти'скивать, вти'снуть ներս սեղմել, ներս մղել, ներս մտցնել, ներսեղմել, ներմղել, ներխցկել:
вти'скиваться, вти'снуться ներս սեղմվել, ներս մղվել, ներս խցկվել, ներսեղմվել, ներմղվել, ներխցկվել:
втихомо'лку դաղտնի, թաքուն, ծածուկ, դաղտնաբար, թաքունորեն, ծածկաբար:
втиши' հանգիստ, խաղաղ, անդորրության մեջ:
втолкну'ть տես вта'лкивать.
втолкова'ть (— лку'ю, — ку'ешь, — ку'ют), втолко'вывать բացատրել, հասկացնել, մեկնել. втолкуйте ему, что он должен это сделать հասկացրեք նրան, վոր նա պարտավոր է այդ անել:
втопта'ть (— пчу', — чешь, — пчут; հրմ. — пчи') տես втаптывать.
вто'ра յերժշտ. յերկրորդ ջութակ կամ յերկրորդ ձայն:
вторга'ться ներս խուժել, ներխուժել, ներս թափվել, ներթափվել. պտկր. խառնվել, միշամտել:
вто'ргнуться տես вторгаться.
вторже'ние խուժում, ներխուժում:
вто'рить կրկնել, ուրիշի ասածը ասել. յերժշտ. յերկրորդ ջութակը նվագել կամ յերկրորդ ձայն յերգել:
втори'чно յերկրորդ անգամ, մի անգամ ել:
втори'чный կրկնակի, կրկնվող, յերկրորդվող:
вто'рник յերեքշաբթի:
второбра'чный 1. յերկրորդ անգամ ամուսնացած. 2. (յերեխայի մասին) յերկրորդ ամուսնությունից ծնված:
второго'дник յերկրորդ տարեցի (յերկու տարի միևնույն խմբում նստած աշակերտ):
второзако'ние յերկրորդ որենք, Յերկրորդումն որինաց (աստվածաշնչի հինգերորդ գիրքը):
второ'й յերկրորդ. — ая скрипка յերկրորդ ջութակ. պտկր. յերկրորդական դեր. второй Интернационал յերկրորդ Ինտերնացիոնալ:
второкла'ссник յերկրորդ դասարանցի, յերկրորդ դասարանի աշակերտ:
второкла'ссный յերկրորդ դասարանի, յերկրորդ կարգի, յերկրորդ աստիճանի, յերկրորդական:
второ-: չտասը-չտասը, չտասով:
второр-я'дный յերկրորդ տարակարգի:
второстепе'нный յերկրորդակարգ, յերկրորդ կարգի. պտկր. յերկրորդական, անկարևոր:
втрави'ть (— влю', — вишь, — вят; հրմ. — тра'вь), втравля'ть ընտե-

լացնել, վարժեցնել, հրապուրել, գայթակղեցնել. պտկր. *խճճել:*

втре'скаться գռեհկ. *սիրահարվել, խրվել:*

втри'дорога *յերեք անգամ ավելի թանգ, յեռապատիկ թանգ.* платить втри'дорога *յեռապատիկ թանգ վճարել:*

втро'е, втройне' *յերեք անգամ ավելի, յեռապատիկ.* враг был втро'е многочисленнее *թշնամին յեռապատիկ ավելի բազմաթիվ եր:*

втроём *յերեքով, յերեք հոգով:*

втуз (высшее техническое учебное заведение) *տեխբուհ (տեխնիկական բարձրագույն ուսումնական հիմնարկ):*

ату'лка *անվի ոզակ, տակառի խցան.* տեխն. *վոան, ականոց, անվակալ, անուր, գլանագույց:*

ату'не *դուր, ապարդյուն ջերպով, դուր տեղը:*

втупи'к: поста'вить втупи'к *անհարմար դրության մեջ դնել, չմարեցնել.* ста'ть втупи'к *անհարմար դրության մեջ ընկնել, ապշել, չվարել:*

втыка'ть *խրել, ցցել:*

втю'риваться, втю'риться գռեհկ. *խճճվել վորևե բանի մեջ, սիրահարվել:*

втя'гивание *ներս քաշելը, ներս ծծելը, ներքաշում, ներծծում:*

втя'гивать, втяну'ть *ներս քաշել, ներս ծծել, ներքաշել, ներծծել:*

втя'гиваться *ներս քաշվել.* պտկր. *վորևե բանի վարժվել, ընտելանալ.* — в беду *փորձանքի մեջ խրվել, փորձանքի մեջ ընկնել.* — в рабо'ту *աշխատանքին վարժվել, գործին ընտելանալ, աշխատանքի մեջ մտնել:*

вуа'ль ի. *քող, շղարշ:*

вуз (вы'сшее уче'бное заведе'ние) *բուհ (բարձրագույն ուսումնական հիմնարկ):*

ву'зовец (— вца) *բուհի ուսանող:*

Вукоспи'лка (Всеукраи'нский союз потребительских кооперативных организаций) *Սպառողական կոոպերատիվ կազմակերպությունների համաուկրաինական միություն:*

вулка'н *հրաբուխ:*

вулканиза'ция *վուլկանացում, հրաբխացում:*

вулканизи'ровать (— рую, — руешь, — руют) *վուլկանացնել, հրաբխել, կրակով ու ծծումբ խառնելով յեռացնել (կաուչուկ և այլն):*

вулкани'зм *հրաբխականություն:*

вулкани'ческий (— ая, — ое) *հրաբխային:*

вульга'рность ի. *գռեհկություն:*

вульга'рный *գռեհիկ, վուլգար.* делать вульгарным *գռեհկացնել:*

Вульга'та *Վուլգատա (աստվածաշնչի լատիներեն թարգմանություն):*

ву'ндеркинд *հրաշամանուկ, հրաշքներ գործող յերեխա:*

вурдала'к *գայլամարդ, գայլ դարձած մարդ:*

ВУЦИК (Всеукраи'нский Центральный Исполнительный Комитет) *Հ. Ու. Կ. Գ. Կ. (Համաուկրաինական կենտրոնական Գործադիր Կոմիտե):*

вход *մուտք, մտնելը.* главный вход *գլխավոր մուտք.* вход воспрещён *մուտքն արգելված է:*

вхожде'ние տես **вход.**

входи'ть (— жу', — дишь, —дят), **войти'** *ներս մտնել, մտնել.* — в соста'в *կազմի մեջ մտնել, պատկանել.* — в послo'вицу *առած դառնալ.* — в привы'чку *սովորության դառնալ.* — в переговоры *բանակցության մեջ մտնել.* — в употребле'ние *գործածության մեջ մտնել, գործածական դառնալ.* это не входит в мои расчёты *այդ իմ հաշիվների մեջ չի մտնում:*

входно'й *մուտքի, մտից:*

входя'щий журнал *մտից մատյան, մտից որագիր.* — ая бумага *մտից թուղթ, մտնող թուղթ, ստացված գրություն, ստացվող գրություն:*

вхо'жий (— ая, — ее) *մուտք ունեցող, դնալ-գալ ունեցող.* он не будет вхож к нам в дом *նա մեր տուն գնալ-գալ չի ունենա:*

вцепи'ться (— плю'сь, — пишься, — пятся), **вцепля'ться** *կառչել մի բանից, կպչել.* պտկր. *մի բանի խառնվել, մի բանի մեջ խճճվել.* — в каждое слово *ամեն մի բառի պոչից բռնել.* — в кого-либо *մեկի ոձիփող կպչել:*

ВЦИК (Всероссийский Центральный Исполнительный Комитет) *Հ. Կ. Գ. Կ. (Համառուսաստանյան կենտրոնական Գործադիր Կոմիտե):*

ВЦСПС (Всесоюзный центральный совет профессиональных союзов) *ԱՄՀԿԽ* (*Արհմիությունների Համամիութենական Կենտրոնական Խորհուրդ*):

вчера' *յերեկ.* — вечером *յերեկ յերեկոյան:*

вчера'шний *յերեկվա:*

вчерне' *սևագրած, սեր պատրաստած, ուրվագծած.* дом готов вчерне *տունն ընդհանուր գծերով պատրաստ է:*

вче'тверо *չորս անգամ, քառապատիկ:*

вчетверо'м *չորսով, չորս հոգով.* мы бы'ли вчетверо'м *մենք չորսով եյինք, մենք չորս հոգով եյինք, մենք չորս հոգի եյինք:*

вчина'ть տես **начинать.** вчина'ть иск իրվբ. *հայց սկսել, դատապահանջ հարուցել, դատ սկսել:*

вчита'ться, вчи'тываться *կարդալով՝ լավ հասկանալ, կարդալով՝ խոր ըմբռնել:*

ВЧК (Всероссийская чрезвычайная комиссия по борьбе с контр-революцией) *ՀԱՀ* (*Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով հակահեղափոխության դեմ կռվելու համար*):

вчу'же *օտար լինելով, հեռու լինելով, ազգական չլինելով.* мне вчу'же его жаль *յես խղճում եմ նրան, թեև օտար եմ նրան. յես խղճում եմ նրան, թեև անծանոթ եմ նրան:*

вше'стеро *վեց անգամ, վեցպատիկ:*

вшестеро'м *վեցով, վեց հոգով:*

вшива'ть, вши'ть (вошью', — шьёшь, — шью'т; հրմ. вше'й) *ներկարել, մի բանի մեջ կարել:*

вшивно'й *ներկարած, ներկարելի, ներկարովի:*

вши'веть *վոջլոտել:*

вши'вый *վոջլոտ:*

вши'вость ի. *վոջլոտություն:*

въеда'ться, въе'сться (въе'мся, — е'шься, — е'стся, — еди'мся, — еди'тесь, — дя'тся) 1. *ուտելով խրվել մեջը.* 2. *հագենալ, կշտանալ.* 3. *վորևէ կերի ընտելանալ, վորևէ կերի վարժվել.* 4. *ուտել, մաշել:*

въе'зд *մուտք, մտնելը, մուտք գործելը.* въездные деньги *մուտքի, մուտք գործելու փողերը:*

въезжа'ть *մուտք գործել, մտնել:*

въе'хать (въе'ду, въе'дешь, въе'дут) տես **въезжа'ть.**

въя'вь *պարզ, հայտնի կերպով, աշկարա, ակնհայտ:*

вы I (вы, вас, вам, ва'ми) *դուք.* вам письмо *դուք նամակ ունեք.* она была вам хорошей женой *նա ձեզ համար լավ կին եր.* благодарю вас *շնորհակալ եմ ձեզնից.* я вам задам *յես ձեզ ցույց կտամ.* что с вами? *ի՞նչ է պատահել ձեզ.* пусть будет по вашему *թող ձեր ուզածը (ասածը) լինի:*

вы II ածանց. ցույց է տալիս 1. *շարժում դեպի դուրս.* 2. *գործողության լրացում, ավարտում:*

выба'лтывать 1. *թափահարելով խառնել.* 2. *դուրս տալ, գաղտնիքն հայտնել:*

выбега'ть, вы'бежать (— бегу, — бежишь, — бегут; հրմ. — беги) *դուրս վազել, դուրս փախչել:*

вы'белить տես **белить.**

вы'белка *սպիտակացնելը, ծեփելը, սպիտակացում, ծեփում, բռում:*

выбива'ть, вы'бить (— бью, — бьешь, — бьют; հրմ. — бей) 1. *ծեծելով դուրս հանել, դուրս խփել, դուրս գցել, դուրս շպրտել.* 2. *դրոշմել, փող կտրել, կոխել.* 3. *վանել, քշել, դուրս վռնդել.* — о'кна *լուսամուտները ջարդուփշուր անել.* — из к.-л. дурь *մեկի եծերը դուրս քշել.* — щёткой տպգր. (*շարվածքը*) *խոզանակով ծեծել:*

выбива'ться, вы'биться (— бьюсь, — бьешься, — бьются; հրմ. — бейся) *ազատվել, իրեն ազատել, դուրս պրծնել, ընկնել.* — из колеи *ակուրից դուրս գալ, ճանապարհից շեղվել, ճանապարհից յելնել.* — из сил *ուժից ընկնել, հալից ընկնել.* — на дорогу *ուղիղ ճանապարհն ընկնել, մարդ դառնալ:*

выбира'ть, вы'брать *ընտրել, ջոկել:*

выбира'ться, вы'браться 1. (*շենքից*) *դուրս գալ, տեղափոխվել.* 2. *ընտրվել, ջոկվել.* տես **выбраться.**

вы'боина *փոս, փոս ընկած տեղ, խորխոր:*

вы'болтнуть, вы'болтать տես **выба'лтывать.**

вы'бор *ընտրություն, ջոկում.* տես **вы'боры.** остановить свой выбор *վերջնականապես ընտրել.* у меня

нет выбора *չես ընտրություն չունեմ, չես ուրիշ ճար չունեմ*:
Вы́борг Վիբորգ:
вы́боргский (— ая, — ое) Վիբորգի:
вы́борка քաղվածք:
вы́борный 1. *ընտրված*. 2. *պատգամավոր*. 3. *ընտրովի*. — ый люллете́нь *ընտրության տոմս, ընտրատոմս, ընտրաթերթ*:
вы́борочный *ընտրովի, ջոկովի*:
вы́борщик *ընտրող, ընտրիչ*:
вы́боры ա. *ընտրություններ*. — в совет *խորհրդի ընտրություններ*. — всеобщие *ընդհանուր ընտրություններ, ընդհանրական ընտրություններ*. — дополнительные *լրացուցիչ ընտրություններ*:
вы́бранить *նախատել, հայհոյել, անարգել*:
выбра́сывать *դուրս նետել, դուրս ածել, դուրս թափել, դուրս թողնել, ժայթքել*. — на берег *ափը դուրս գցել*:
выбра́сываться *դուրս նետվել, դուրս թռչել*:
вы́брать (— беру, — берешь, — берут; hpf. — бери) տես **выбира́ть.**
вы́браться (— берусь, — берешься, — берутся; hpf. — берись) տես **выбира́ться.** это помо́жет тебе́ вы́браться из затрудне́ния *այդ քանը կողնե քեզ դուրս գալու դժվարությունից (դժվար կացությունից)*:
вы́брить (— брею, — еешь, — еют; hpf. — брей) տես **брить.**
вы́бриться (— бреюсь, — еешься, — еются; hpf. — ейся) տես **бриться.**
вы́бросить (— шу, — сишь, — сят; hpf. — брось) տես **выбра́сывать.**
вы́брошенный *դուրս գցված, դուրս նետված*. он был выброшен из экипажа *նա դուրս գցվեց կառքից, նա դուրս չպրտվեց կառքից*. выброшенное волнами на берег *ալիքների ափ նետած բան*:
выбыва́ть, вы́быть (— буду, — будешь, — будут; hpf. — будь) *դուրս գալ (պաշտոնից), հեռանալ*. — из стро́я *շարքից դուրս գալ, անմարտունակ դառնալ*:
вы́бытие *դուրս գալը, հեռանալը, պաշտոնը թողնելը*. — из университе́та *համալսարանից հեռանալը, համալսարանից յեղնելը*:
выва́ливать, вы́валить *դուրս ածել, դուրս նետել*:
выва́ливаться, вы́валиться *դուրս թափվել, դուրս ընկնել, թափվել, վայր ընկնել*:
выва́ривать, вы́варить *եփել, եփելով հյութը հանել*:
выва́риваться, вы́вариться *եփվել, եփվելով հանվել*:
вы́варка *եփում, եփելով հանելը (հյութը)*:
вы́варки հ. *տակուց*:
вы́варочная соль *եփելով ստացված աղ*:
вывё́дывать, вы́ведать *հարցուփորձել, հարցափորձել, տեղեկանալ, դաղտնիքն իմանալ*:
вы́везти (— зу, — зешь, — зут; hpf. — зи) տես **вывозить.**
вы́верить, выверя́ть *ստուգել, ճըշտել, կարդավորել*:
вы́верка *ստուգում, ճշտում, ստուգելը, ճշտելը*:
вывёртывать, вы́вернуть *պտտացնելով հանել*:
вывёртываться, вы́вернуться *հանկարծ հայտնվել, լուրջ ընկնել*. պտկր. *դուրս պրծնել, ազատվել, ճողոպրել*:
вы́весить (— шу, — сишь, — сят; hpf. — весь) տես **выве́шивать.**
вы́веска *ցուցանակ*. живописец вывесок *ցուցանակ նկարող, ցուցանակագիր*:
вы́вести (— веду, — ведешь, — дут; hpf. — еди; ntg. — вел, — вела) տես **выводи́ть.**
вывё́тривание *քամհարում, հողմահարում, ողը փոխելը*:
вывё́тривать, вы́ветрить *քամհարել, հողմահարել, ողը փոխել*:
вывё́триваться *ողահարվել, ողի ազդեցությամբ քայքայվել*:
вы́ветрившийся (— шаяся, — шееся) *ողահարված, ողի ազդեցությամբ քայքայված*:
вывё́шивать *դուրսը կախել*. — объявление *հայտարարություն կախել*:
вы́винтить (— чу, — тишь, — тят) տես **вывинчивать.**
выви́нчивать *հետ պտուտակել, պտուտակը հետ պտտելով հանել*:
вы́вих *հոդաթափություն, հոդանկություն, հոդախախտում, դուրս ընկած տեղը (մարմնի)*:

вы'вихнуть *դուրս դնել, հոդաթափ անել, խախտել:*

вы'вихнутый *դուրս ընկած, հոդաթափված, հոդանկված, հոդախախտված:*

вы'вод *դուրս բերելը, հանելը, ածանցում, արտածություն. պոկր. հետևություն, եզրակացություն.* делать вывод *եզրակացություն անել, եզրակացնել, հետևություն հանել:*

выводи'ть (— жу', — дишь, — дят) 1. *դուրս բերել, դուրս հանել.* 2. *վոչնչացնել, արմատախիլ անել.* 3. *կատուկել, կերտել:* 4. *պոկր. հետևցնել, եզրակացնել.* выводить (буквы) *նկարել (տառերը), հաղիվ դրել.* — на свежую воду *մեկի ածածը լերևան հանել, պարզ կացուցանել.* — из терпения *համբերությունից հանել.* — из заблуждения *մոլորությունից հանել.* — к.-л. из себя *մեկին համբերությունից հանել.* — лошаль напоказ *ձին դուրս բերել ի ցույց, ձին ցույց տալու դուրս բերել.* — пятно *բիծն հանել, բիծը վոչնչացնել:*

вы'водка *բծահան, կեղտահան:*

вы'водок (— дка) *թուխս ու ճուտեր, մայր ու ձագեր:*

вы'воз *արտահանում, արտահանություն, արտածում, եքսպորտ, բացահանում, բացահանություն:*

вывози'ть (— жу', — зишь, — зят) *արտահանել, արտածել, դուրս կրել, դուրս հանել.* — ору'дия на позу'цию *թնդանոթները դիրքերն հանել, թնդանոթները դիրքերը տանել:*

вывозно'й *արտահանելի, արտահանման, արտածման.* — ая пре'мия *արտահանման պարգև.* — ые пошлины *արտահանման մաքսեր:*

вывола'кивать, вы'волочить *դուրս քաշել, քաշելով դուրս հանել:*

вывора'чивать, вы'воротить (— рочу, — ротишь, — тят) *շուռ տալ, շրջել, շուռ տալով հանել:*

вы'вороченный *շուռ տված:*

вы'вязать (— вяжу, — вяжешь — жут; հրմ. — жи) տես **вывя'зывать.**

вывя'зывать *կապն արձակելով հանել:*

вы'гадать, выга'дывать *հնարել, ճար դանել, հերյուրել, չահել, վաստակել.* что вы на этом выгадали *դուք դրանից ի՞նչ ոգուտ տեսաք, դուք դրանից ի՞նչ չահվեցիք:*

вы'гарки ա. *տականք, տակը մնացած մասը, տակուցք (այրվածի, յեփվածի):*

вы'гиб *դուրս ճկվածք, կորացրած տեղը, կորություն:*

выгиба'ние *կորացնելը, կռացնելը, կորացում, կռացում, ծռում:*

выгиба'ть *ճկել, կորացնել, կռացնել, ծռել:*

выгиба'ться *ճկվել, կորանալ, կռանալ, ծռվել:*

вы'гладить (— жу, — дишь, — дят; հրմ. — адь), **выгла'живать** *հարթել, կոկել, արդուկել:*

вы'глядеть (— жу, — дишь, — дят; հրմ. — яди) *տեսք ունենալ:* она плохо выглядит *նա վատ տեսք ունի, նրա տեսքը լավ չե:*

выгля'дывать, вы'глянуть 1. *դուրս նայել.* 2. *յերևալ, տեսք ունենալ, կերպարանք ունենալ:*

вы'гнать (— гоню, — гонишь, — гонят; հրմ. — гони) տես **выгоня'ть**

вы'гнуть տես **выгиба'ть.**

вы'гнуться տես **выгиба'ться.**

вы'гнутый *կորընթարդ, ուռուցիկ:*

выгова'ривать, вы'говорить 1. *արտասանել.* 2. *ձեռք բերել (պայմանով), պայմանախոսել.* 3. *հանդիմանել, կշտամբել.* не мог выговорить ни слова *վոչ մի խոսք չկարողացավ արտասանել.* выговорить что-либо себе *իրեն համար մի բան ձեռք բերել, իրեն համար մի բան պայմանախոսել:*

вы'говор 1. *արտասանություն, առոգանություն.* 2. *հանդիմանություն, կշտամբանք.* де'лать вы'говор ко'му-ли'бо *մեկին հանդիմանություն անել, հանդիմանել:*

вы'года *ոգուտ, չահ.* извлекать из чего-либо выгоду *վորևե բանից ոգուտ քաղել:*

вы'годный *ոգտավետ, չահավետ.* — ое предприятие *ոգտավետ ձեռնարկություն, չահավետ ձեռնարկություն:*

вы'гон *արոտավայր, արոտատեղ.* право на общественный выгон *հասարակական արոտավայրի իրավունք, համայնական արոտատեղի իրավունք:*

вы'гонка *քաշելը, թորելը, քաշում, թորում*:
вы'гонное хозя'йство գյուղտնտ. *արոտային տնտեսություն, արոտատնտեսություն*:
вы'гонщик *քշող (անասուններին), քշորդ, վորսահալած*:
выгоня'ть, вы'гнать *դուրս քշել, վռնդել*:
выгора'живать, вы'городить (— жу, — дишь, — дят) 1. *ցանկապատել*. 2. *մեկին պաշտպանել, հովանավորության տակ առնել*:
выгора'ть, вы'гореть 1. *այրվել*. 2. *խունանալ, գույնը կորցնել (գույների մասին)*. 3. *հալոդվել*. дело выгорело *գործն հաջողվեց, գործը գլուխ եկավ*. дело не вы'горело *գործն անհաջող անցավ, գործը չհաջողվեց, գործը գլուխ չեկավ*:
вы'горелый *այրված, խանձված*:
вы'городить տես **выгора'живать.**
выгреба'ть, вы'грести (— ребу, — ребешь, — бут; hրմ. — би; անց. — реб, — ребла) *փորփրելով հանել, դուրս հանել*. выгребна'я я'ма *աղբահոր*:
выгружа'ть, вы'грузить (— жу, — зишь, — зят) *բեռը դատարկել, բեռնաթափել*:
вы'грузка *բեռնաթափում, դատարկում*:
выгрузно'й *բեռնաթափման, բեռնաթափելի, դատարկելի*:
выгрыза'ть, вы'грызть (— зу, — зешь, — зут; hրմ. — зи; անց. — грыз, — грызла) *կրծելով ծակ բաց անել*:
выдава'ть (— даю', — даёшь, — даю'т), **вы'дать** (— дам, — дашь, — даст, — дадим, — дите, — дут; hրմ. — дай) 1. *տալ*. 2. *վճարել, հատուցել (դրամը և այլն)*. 3. *հանձնել (վճռագործին և այլն), ձեռքը տալ*. 4. *մատնել*. — секрет *գաղտնիքը մատնել*. — зарплату *աշխատավարձ վճարել*. — замуж *ամուսնացնել, մարդու տալ, կարգել*. — преступника - эмигранта *վճռագործ-վտարանդուն հանձնել*:
выдава'ться (— даю'сь, — даёшься, — аю'тся; hրմ. — дава'йся), **вы'даться** (— дамся, — дашься, — дастся, — дадимся, — дадитесь, — дадутся; hրմ. — дайся) *դուրս ցցվել, կարկառվել, ցցտեղ. պտկր. աչքի ընկնել, հռչակվել*. как только выдался случай *հենց վոր տեղն եկավ, հենց վոր դեպք լինեցավ*:
вы'давить (— влю, — вишь, — вят), **выда'вливать** *սեղմելով դուրս մղել, մղել*:
выда'ивать *կթել*:
выда'лбливать *փորել, փոսացնել, ծակել, խոռոչել*:
вы'дать (— дам, — дашь, — даст, — дадим, — дадите, — дадут) տես **выдава'ть.**
вы'дача 1. *տալը, տացք*. 2. *հատուցում, վճարում*. 3. *հանձնում*. 4. *մատնում*. — зарплаты *աշխատավարձի վճարում*. — пайка *պարենաբաժնի տացք*. — преступника *վոճրագործի հանձնում*:
выдаю'щийся (— щаяся, — щееся) *կարկառուն, ցայտուն, աչքի ընկնող, ականավոր*. он самый выдающийся человек своего времени *նա իր ժամանակի ամենից աչքի ընկնող մարդն է*:
выдвига'ть, вы'двинуть *առաջ տանել, առաջ շարժել, առաջ քաշել, դուրս քաշել*. каждая эпоха выдвигает свои проблемы *ամեն դարաշրջան իր խնդիրներն է առաջ մղում*:
выдвига'ться, вы'двинуться *տեղից շարժվել, առաջանալ, աչքի ընկնել, դուրս քաշվել*:
выдвиже'нец (— нца) *առաջքաշված տղամարդ*:
выдвиже'ние *առաջքաշում*:
выдвиже'нка *առաջքաշված կին*:
выдвижно'й *դուրս եկող, առաջ ու հետ շարժվող, դուրս քաշովի*. — прице'л воен. *շարժվող նշանոց*. — ая лестница *դուրս քաշովի սանդուխք*. — ое око'шечко *պատի մեջ առաջ ու հետ շարժվող դռնակ*. — ой ящик *դղրոց*:
вы'двинуть տես **выдвига'ть.**
вы'двинуться տես **выдвига'ться.**
вы'двинутый вперёд *առաջ շարժած, առաջ տարված*:
вы'дел *բաժանություն, բաժանում, բաժին հանելը*:
выделе'ние *գատում, բաժանելը, բաժին հանելը, հանած բաժինը, մասը*:
вы'делить տես **выделя'ть.**

вы'делка *մշակելը, դործելը, պատրաստելը, մշակում, դործում, պատրաստում.* овчинка выделки не стоит *չարչարանքին չարժե, չարչարանքը չարժե:*

вы'делать, выде'лывать *արտադրել, շինել, մշակել, դործել, պատրաստել:*

выделя'ть, вы'делить 1. *բաժանել, ջոկել, դատել, բաժին հանել.* 2. (ժառանգներին) *մաս տալ, բաժին տալ, մասնահանել:*

выделя'ться 1. *բաժանվել, ջոկվել, դատվել, աչքի ընկնել.* 2. *իր մասն ստանալ, իր ժառանգաբաժինն ստանալ:*

выдёргивать, вы'дернуть *դուրս քաշել, ձղելով դուրս հանել.* — зуб *ատամը հանել, ատամը քաշել:*

выде'рживать, вы'держать *դիմանալ, տանել, համբերել, տոկալ.* выдерживать критику *քննադատությանը դիմանալ.* — экзамен удовлетворительно *բավարար քննություն տալ.* не быть в состоянии больше выдерживать *այլևս ի վիճակի չլինել համբերելու, դիմանալու.* она не выдержала и расплакалась *նա չդիմացավ և լաց եղավ:*

вы'держанный *լավ պահած, վարժեցրած, դուսպ, տոկուն, հասած, պահորակ:*

вы'держка 1. *քաղվածք.* 2. *դիմացկունություն, տոկունություն.* պտկր. *փորձ:*

вы'дернуть տես **выдёргивать.**

выдира'ть *պոկել:*

вы'доить տես **выда'ивать.**

вы'долбить (— блю, — бишь, — бят) տես **выда'лбливать.**

вы'дох *արտաշնչում (ոդի):*

вы'дохнуть տես **выдыха'ть.**

вы'дра *ջրասամույր, հասարակ սամույր:*

вы'драть (— деру, — дерешь, — дерут; հրմ. — ери) *լավ ծեծել.* տես **выдира'ть.**

выдува'льщик *փչող, փչորդ:*

выдува'ть, вы'дуть *դուրս փչել.* (ապակի) *փչել:*

вы'думать տես **выду'мывать.**

вы'думка *մտացածին բան, հնարք. ոուս:*

вы'думщик *հարատար մարդ, հնարադետ մարդ, փչան:*

вы'думщица *հարատար կին, հնարադետ կին, փչան կին:*

выду'мывание *հնարելը, դտնելը, հնարում, մոդոնում, սարքում:*

выду'мывать *հնարել, սարքել, դըտնել, մոդոնել.* он пороха не выдумает *նա վառոդ դտնողը չե, նրա խելքը հետ չի դնում:*

вы'дуть տես **выдува'ть.**

выдыха'ние *արտաշնչելը, արտաշընչում:*

выдыха'ть *արտաշնչել:*

выдыха'ться 1. *արտաշնչվել.* 2. *չբռնել, չամաքել, դոլորշիանալ.* 3. *համ ու հոտը կորցնել.* он выдохся *նա ներքնապես սպառվել է:*

выеда'ть *կրծել, ուտելով քայքայել, մինչև վերջն ուտել:*

вы'езд 1. *յեղնելը, դուրս դալը.* 2. *մեկնելը, մեկնում:*

выездно'й *դուրս դալու, մեկնելու համար նշանակված:*

выезжа'ть, вы'ехать *մեկնել, ուղևորվել, դուրս գնալ, հեռանալ.* — верхо'м *ձիով ման դալ, ձիով գնալ.* — на прогу'лку *ձիով կամ կառքով զբոսնելու յեղնել.* — за границу *արտասահման մեկնել:*

выезжа'ть, вы'ездить *վարժեցնել, մարզել:*

вы'емка 1. *դուրս հանելը, դուրս բերելը, վերցնելը.* 2. (զգեստի) *կորվածք.* 3. (փաստաթղթերի) *դրավում, առդրավումն.* 4. տեխն. *փորոք, հանում, հանվածք, ակոս, փորվածք.* շին. *արմհաձև ծռվածք.* выемка документов *փաստաթղթերի առդրավում, վավերաթղթերի դրավում:*

вы'емочный штерк հանքգրծ. (հանքագործության մեջ) *խավանցք, տարածություն:*

вы'есть (— ем, — ешь, — ест, — едим, — едите, — едят; հրմ. — ешь) տես **выеда'ть.**

вы'ехать (— еду, — едешь, — едут) տես **выезжа'ть.**

вы'жать I (вы'жму, — мешь, — мут; հրմ. — жми) տես **выжима'ть, жать.** выжатый лимон *մլած լիմոն, ճղմած լիմոն:*

вы'жать II (вы'жну, — жнешь, — жнут; հրմ. — жни) տես **выжина'ть.**

вы'ждать (— жду, — ждешь,

— ждут; прш. — жди) տես **выжида́ть.**

вы́жечь (— жгу, — жжешь, — жгут; прш. — жги; шіф. вы́жег, — жгла, — жгло) տես **выжига́ть.**

выжива́ние *ապրելը, կենդանի մնալը, հարատեւում.* — наиболее приспособленных կենս. *ամենից ավելի հարմարեցվածների կենդանի մնալը, ապրելը:*

выжива́ть, вы́жить 1. *կենդանի մնալ, ապրել, ծառայության ժամանակը լրացնել, ծառայությամբ (պարտքը) հատուցանել.* 2. (անից) *դուրս անել, դուրս վռնդել.* — из ума *ցնդել, խելքը կորցնել.* — из дому *տնից դուրս անել:*

вы́жига պտկր. *ճարպիկ մարդ, հետևակած մարդ, ընկած-դուրս յեկած, խարեբա:*

выжига́ние 1. *այրելը, խանձելը, թրծելը, այրում, խանձում, թրծում,* 2. *հրագծում, հրափորում, հրադրում, հրանկարում, հրաքանդակում:*

выжига́ть 1. *այրել, խանձել, կրակ տալ, հրդեհել, թրծել.* 2. *հրագծել, հրափորել, հրադրել, հրանկարել, հրաքանդակել:*

выжида́ние *սպասելը, սպասում:*

выжида́тельный *սպասողական.* — ая пози́ция воен. *սպասողական դիրք:*

выжида́ть *սպասել, հարմար ժամանակի սպասել:*

выжима́ние *մղելը, քամելը, մղում, քամում:*

выжима́ть, вы́жать *մղել, քամել.* — соки из к.-л. *մեկի հյութերը քամել, մեկին կեղեքել.* — виногра́д *խաղող տրորել, խաղող մղել:*

вы́жимка *մղվածը, քամվածը:*

вы́жимки մ. *չանչերը, քուսպ:*

выжина́ть *հնձել:*

вы́жить (— живу, — вешь, — вут; прш. — ви) տես **выжива́ть.**

вы́жлец *վորսաշուն, բարակ, քերծե:*

вы́жло́вка *քած բարակ, վորսի շուն, քերծե:*

выжля́тник *շնապան, բարակապան:*

вызва́нивать *դանդահարել:*

вы́звать (— зову, — зовешь, — зовут; прш. — зови) տես **вызыва́ть.**

вы́зваться (— зовусь, — вешься, — вутся; прш. — вись) տես **вызыва́ться.**

вы́звездить (— звезжу, — звездишь, — звездят) *վատնեցնել, ալևլացնել, սպսպացնել:*

вы́зволить *նեղությունից ազատել, նեղությունից փրկել, փորձանքից հանել:*

выздора́вливать, вы́здороветь *ապաքինվել, առողջանալ:*

выздора́вливающий (— ая, — ее) *ապաքինվող, առողջացող:*

выздоровле́ние *ապաքինում, առողջանալը, առողջացում:*

вы́зов 1. *հրավեր, կոչ, դատակոչ.* 2. (телефо́нный *հեռախոսով*) *կանչելը, մարտահրավեր.* — по телефо́ну *հեռախոսով կանչելը, հեռականչ.* бросить вызов *մարտահրավիրել, ձեռնոց նետել, մարտի հրավիրել:*

вы́золотить (— лочу, — лотишь, — лотят) *վոսկեզոծել, վոսկեջրել:*

вызрева́ть *հասունանալ, հասնել:*

вы́зубрить տես **зубрить.**

вызыва́ть, вы́звать 1. *դուրս կանչել, հրավիրել, առաջացնել, դարթեցնել.* 2. (դատարան) *հրավիրել, կանչել.* — на дуэль *մենամարտության հրավիրել.* — подозрения *կասկածներ դարթեցնել, կասկածներ առաջացնել.* — эхо *արձագանգ առաջացնել.* — на соревнование *մրցակցության հրավիրել, մրցակցության կանչել.* — (врага) *դուրս կանչել (թշնամուն), հրավեր կարդալ (թշնամուն).* — воспомина́ния *հուշեր դարթեցնել, հիշողություններ առաջացնել.* это вызвало у него повышение температуры *այդ բանը բարձրացրեց նրա ջերմաստիճանը, այդ բանը ջերմաստիճանի բարձրացում առաջացրեց նրա մեջ.* — (духов) (*վոգիներ*) *կանչել, վոգեկանչել, վոգեկոչել.* — (ученика) *հարցնել (աշակերտին):*

вызыва́ться *իր ծառայությունն առաջարկել, մի բան հանձն առնել.* он вызвался сделать это *նա հանձն առավ կատարելու այդ բանը:*

вызыва́ющий (— ая, — ее) *դրդռիչ, դայրացուցիչ:*

вызыва́юще *դրդռիչ կերպով, դայրացուցիչ կերպով:*

вы́играть, выи́грывать *շահել, տանել.* — сражение *ճակատամարտը տանել, ճակատամարտը շահել, ճա-*

կատամարտում հաղթություն տանել:

вы́игрыш *հահում, տարածք.* быть в выигрыше *հահել, տանել, հահած լինել, տարած լինել.* гла́вный вы́игрыш *գլխավոր հահումը:*

вы́игрышный *վիճակախաղի, խաղարկության.* — заём *հահող փոխառություն:*

выи́скивать, вы́искать (— ищу, — ищешь, — ищут; hրմ. — ищи) *հետախուզել, փնտռել, հարմար ժամանակի սպասել.* — удобный случай *հարմար դեպք փնտռել, հարմար ժամանակի սպասել:*

вы́йти (выйду, выйдешь, выйдут; hրմ. выйди) տես **выходи́ть.** из него ничего не выйдет *նրանից ոչինչ չի՛ դուրս գա, նրանից բան դուրս չի գա:*

вы́казать (— кажу, — кажешь, — жут; hրմ. — кажи), **выка́зывать** *ցույց տալ, ցուցադրել, արտահայտել.* — мужество *արիություն ցույց տալ:*

выка́зываться *իրեն ցույց տալ, ցուցամոլություն անել:*

выка́лывать *փորել-հանել, սրածայր դործիքով բրել:*

выка́пывание *փորելը, քանդելը, փորում, քանդում, հանում:*

выка́пывать *փորել, քանդել, հանել:*

вы́карабкаться, выкара́бкиваться *դուրս մագլցել, դժվարությունից դուրս գալ, իրեն ազատել դժվարությունից:*

выка́рмливать *անուցանել, կերակրել.* պակр. *մեծացնել, կրթել:*

вы́кат *դուրս գլորելը, թավալելը, գլորում, թավալում.* глаза́ на вы́кате *աչքերը դուրս ցցված, աչքերը դուրս սրծած:*

выка́тывание 1. *թավալելով, գլորելով դուրս հանելը.* 2. *հարթում, հղկում:*

вы́катать, выка́тывать, вы́катить (— качу, — катишь, — тят) 1. *դուրս գլորել, դուրս թավալել.* 2. *հարթել, կոկել.* — руду *հանքանյութը հանել, հանքանյութը դուրս բերել:*

вы́кать մտեր. *մեկի հետ «դուրս»-ով խոսել, դուբաբանել:*

вы́качать, выка́чивать *ջրհանով ջուր հանել, հանոցել, ջրհանել, դուրս քաշել.* — деньги *փող դուրս քաշել:*

выка́чивание *ջրհանով ջուր հանելը, ջրհանում, դուրս քաշում:*

выки́дывать, вы́кинуть *դուրս նետել, դուրս դցել,* (ծննդկանի մասին) *վիժել, ժամանակից շուտ ծնել.* — флаг *դրոշակ պարզել:*

вы́кидыш *վիժում, վիժեցում, անցուցք, վաղածնունդ, վիժվածք:*

выкипа́ть, вы́кипеть (— киплю, — кипишь, — кипят; hրմ. — кипи) *յեռալով դոլորշիանալ:*

вы́кладка 1. *ցուցադրում, դուրսը դնելը.* 2. *հաշվում, հաշվարարություն, մոտավոր հաշիվ.* 3. *չարվածք (պատի).* 4. *կիրարկում (ուժի):*

выкла́дывать, вы́класть (— кладу, — кладешь, — кладут; hրմ. — ди), **вы́ложить** 1. *ցուցադրել, դուրս հանել.* 2. *հաշվել, հաշվարկել.* 3. խոհար. *զարնիրել (բանջարեղենով զարդարել կերակուրը).* 4. բուժ. *կտաել, վորձատել, մաքել:*

выклёвывать, вы́клюнуть, вы́клевать (— клюю, — клюешь, — клюют) *կոցահարել, կտցով ուտել՝ վերչացնել.* ворон ворону не выклюнет глаза *ընկերը չի թաթ չի ծամի, ազգայն ազգայի աչք չի հանի:*

выклёвываться 1. *կոցահարվել.* 2. *ձվից դուրս գալ (մոեղի մասին):*

выкле́ивать, вы́клеить (— клею, — клеишь, — клеят; hրմ. — клей) *սոսնձել, կպցնել (ներսից կամ դրսից):*

выкли́кивать, выкликáть, вы́кликать (— чу, — чешь, — чут) **вы́кликнуть** *անունով կանչել, դուրս կանչել, անվանականչել:*

вы́кличка *անունով կանչելը, անվանականչում, անվանականչ:*

вы́клюнуть տես **выклёвывать.**

вы́клюнуться տես **выклёвываться**

выключа́тель ա. *անջատիչ:*

выключа́ть, вы́ключить *հանել, դուրս դցել, արձակել.* էլեկտր. *անջատել, հանգցնել:*

выключа́я *բացառությամբ, է բաց առյալ, բացառելով:*

выключе́ние էլեկտր. *անջատում, մարում:*

выкля'нчивать, вы'клянчить աղերսել, թախանձել, չատ խնդրել։

выко'вывать, вы'ковать (— кую, — куешь, — куют) կռել, դարբնել։

выкозы'ривать, вы'козырнуть, вы'козырять բգր. կռվիը խաղալ, հաղթաթուղթ խաղալ, կոզիրները հակառակորդների ձեռքից խլել։

выкола'чивать, вы'колотить (— лочу, — лотишь, — тят) ձեռքով թափ տալ, դուրս դցել, դուրս խլել. պտկր. չահել, վաստակել։

вы'колоть (— колю, — колешь, — колют; հրմ. — коли) տես **выка'лывать.**

вы'копать տես **выка'пывать.**

вы'кормить (— млю, — мишь, — мят) տես **выка'рмливать.**

вы'корчевать (— рчую, — рчуешь, — рчуют) **выкорчёвывать** տես **корчева'ть.**

выкра'дывать գողանալ։

выкра'ивать ձևել, չափ ու ձևով կըտրել։

вы'красить (— шу, — сишь, — сят) տես **красить.**

вы'красть (— ду, — дешь, — дут; հրմ. — ади; պից. — рал) տես **выкра'дывать.**

вы'крест քրիստոնյա դարձած, մկրտված հրեա, մկրտված մահմեդական և այլն։

вы'крестка քրիստոնյա դարձած, մկրտված հրեուհի, մկրտված մահմեդականուհի և այլն։

вы'крик կանչ, դոչ, աղաղակ։

выкри'кивание ճայնելը, կանչելը, բացականչելը, ճայնում, կանչում, բացականչում։

выкри'кивать, вы'крикнуть կանչել, ճայնել, աղաղակել։

вы'кристаллизоваться (— зуюсь, — зуешься, — зуются) բյուրեղանալ։

вы'кроить տես **выкра'ивать.**

вы'кройка չափումձևով կտրվածք, ձևվածք, որինակ, ձև, տարազ։

вы'круглить, выкругля'ть կլորացնել։

выкрута'сы ա. վոլորածո զարդագիը, պարուրաձև զարդագիր, կեռումեռ ստորագրություն. պտկր. պատըրվակ, խուսափանք, պատճառանք։

выкру'чивание վոլորելով հյուսելը, վոլորահյուսում։

выкру'чивать, вы'крутить (— чу, — тишь, — тят) վոլորելով հյուսել, վոլորահյուսել, գալարել. պտկր. մեկին խճճված դրությունից ազատել, արդարացնել փորձել, պրծացնել։

выкру'чиваться հյուսվել, պատրվակներ վորոնել, դուրս պրծնել, լրեն նեղ դրությունից ազատել։

вы'крутиться (— ручусь, — рутишься, — тятся) տես **выкру'чиваться.**

вы'куп փրկանք, հետ գնում. требовать выкуп փրկանք պահանջել։

выкупа'ть, вы'купить (— плю, — пишь, — пят) հետ գնել, փրկանել, թափել։

вы'купать լողացնել։

вы'купаться լողանալ։

вы'купленный գրավից ազատված, հետ գնած, փրկանած, թափած։

выкупно'й հետ գնելի, թափելի, հետ գնելու, թափելու, փրկանելու, հետ գնման, փրկանման. — платёж հետ գնման վճար, փրկանավճար. — ые де'ньги փրկանադրամ։

выку'ривать, вы'курить 1. պապիրոս քաշել, ծխախոտ քաշել, գլանակ ծխել. 2. ծուխ գնելով դուրս քշել, խրկել. 3. (վոգելից խմիչքներ) քաշել, թորել. — гостя հյուրին գըլխից ցանել։

вы'курить տես **выку'ривать.**

выку'сывать, вы'кусить (— шу, — сишь, — сят) կրծել, կծոտելով ուտել։

вы'кушать խմել, անուշ անել, վայելել. не угодно ли вам вы'кушать чашку чая? չե՞ք կամենա մի բաժակ թեյ անուշ անել։

выла'вливать վորսալ բոլորը, սպառել. — ры'бу ամբողջ ձուկը վորսալ, սպառել։

вы'лазка արտելք, գրոհ դեպի դուրս։

вы'лакать լակել վերջացնել, լակել վերջացնել։

выла'мывать կոտրելով բանալ, խորտակել, կոտրելով դուրս հանել։

вы'лежать (— лежу, — лежишь, — лежат; հրմ. — лежи), **выле'живать** յերկար ժամանակ պառկած անցկացնել, հարապատկել։

вылеза'ние դուրս գալը, (մազերի) թափվելը, թափում։

вылеза'ть, вы'лезть (— езу, — езешь,

— езут) 1. դուրս գալ, դուրս յիլ-նել. 2. թափվել (մազերի մասին):
вы'лепка կաղապարում:
вы'лепить (— плю, — пишь, — пят), выепля'ть տես лепить.
вы'лет դուրս թռչելը, արտաթռիչք. на вылет թափանց, թափընթափ. быть на вылете վայր ընկնելու վրա լինել, թևակուռ լինել, թևերը բուսած լինել, թռիչքի ընդունակ լինել:
вылета'ть, вы'лететь (— лечу, — летишь, — тят; hрм. — летн) դուրս թռչել, արտաթռչել. вылететь в трубу բոլորովին ավերվել, ամեն բան կորցնել:
выле'чивать, вы'лечить բուժել, բժշկել, առողջացնել:
выле'чиваться, вы'лечиться բժըշկվել, առողջանալ, ապաքինվել:
вылива'ние դուրս ածելը, դուրս թափելը, դուրս ածում, դուրս թափում:
вылива'ть դուրս ածել, դուրս թափել:
вы'лизать (— лижу, — лижешь, — лижут; hрм. — лижи), выли'зывать լիզելով մաքրել:
вы'линять տես линять.
вы'литый ձուլած. պտկր. աստիկ նման. он вылитый отец նա իսկը հայրն է, նա աստիկ նման է իր հորը, նա իսկը հոր պնչից է թռած:
вы'пить (— лью, — льешь, — льют; hрм. — лей) տես вылива'ть.
вы'повить (— влю, — вишь, — вят) տես выпа'вливать.
вы'пожить տես выкпа'дывать.
вы'помать, вы'помить (— млю, — мишь, — мят) տես выпа'мывать.
вы'пудить (— жу, — дишь, — дят) կլայկել, կլեկել:
вы'пупить (— луплю, — лупишь, — лупят), выпупля'ть կճեպը հանել, կլեպր հանել, կլպել, մաքրել:
выпупля'ться (մկից) դուրս գալ, կեղևը գցել, կեղևից դուրս գալ, կճեպից դուրս գալ:
выпуща'ть, вы'пущить կեղևը հանել, կճեպր հանել:
вы'мазать (— жу, — жешь, — жут; hрм. — ажь), выма'зывать ծեփել, քսել, ներկել, յուղել:
вы'мазаться (— жусь, — жешься, — жутся; hрм. — мажься) ներկվել, ծեփվել, չպարվել, քսվել:
вы'мазанный ներկված, ծեփված, չպարված, քսված:
выма'ливать աղաչել, պաղատել, թախանձել, աղերսել:
выма'лывание աղալը, աղացում:
выма'лывать աղալ:
выма'нивать, вы'манить (— ню, — нишь, — нят) դուրս հրապուրել, դրավել. — деньги у кого-либо մեկի փողերը դուրս քաշել, մեկի փողերը ձեռքից հանել:
выма'ривание կոտորելը, կոտորում, բնաջնջում, վոչնչացում (գլխավորապես սովի միջոցով):
выма'ривать, вы'морить կոտորել, բնաջնջել, վոչնչացնել (գլխավորապես սովի միջոցով):
выма'рывание 1. ջնջելը, ջնջում. 2. կեղտոտելը, կեղտոտում:
выма'рывать, вы'марать 1. ջնջել. 2. կեղտոտել, աղտոտել:
выма'тывать կծիկը հետ տալ, հետ կծկել. я из него всё вымотаю, что мне знать нужно յես նրանից դուրս կքաշեմ այն ամենը, ինչ վոր ինձ պետք է իմանալ:
выма'чивать թրջել, փափկացնել, կակղացնել, ջուրը դնել, թրջոց դնել:
выма'щивать սալարկել, սալահատակել, քարել, հատակել:
выме'нивать, вы'менить, вы'менять փոխել, փոխանակել:
вымерза'ть, вы'мерзнуть սառչել, սառույց դառնալ:
вы'мереть (— мру, — мрешь, — мрут; hрм. — мри) տես вымира'ть.
выме'ривать, вы'мерить, вымеря'ть չափել:
вы'местить (— щу, — стишь, — стят) տես вымеща'ть.
вымета'ть, вы'мести (— ету, — етешь, — тут; hрм. — ети; шдg. — мел, — мела) ավելով հանել, ավելել, մաքրել:
вымётывать (петли) կոճակածակերը կարել, լամբակ կարել, մերակը լցնել:
вымеща'ть, вы'местить վրեժխնդիր լինել, վրեժն առնել, բարկությունը թափել. — злобу на ком-л. բարկությունը թափել մեկի վրա:

вымира'ть *մահաբնկվել, մարել, վերջնանալ, բնաջինջ լինել*· семья вымерла *ընտանիքը մարել է, ընտանիքը վոչնչացել է, ընտանիքը բնաջինջ է յեղել*:

вымога'тель ա· *կորզիչ, կորզող, չորթիչ, հարստահարիչ*· — денег *դրամաչորթ*:

вымога'тельство *կորզում, չորթում, հարստահարություն*:

вымога'ть *կորզել, չորթել, հարստահարել*· — деньги у к.-л. *մեկից փող կորզել, մեկից դրամ չորթել*:

вы'моина *լրաիոս, լրի փոս*:

вымока'ть, вы'мокнуть (wlig· вы'мок, — кла, — кло) *լավ թրջվել, ջուր դառնալ*· он вымок до последней нитки *նա ջուր է դառել, թրջվել է մինչև վերջին թելը*:

вымола'чивать, вы'молотить (— лочу, — лотишь, — лотят) *կալսել*:

вы'молот *կալսած արդյունքը, կալի տված բերքը*:

вы'молвить (— влю, — вишь, — вят) *ասել, արտասանել*· он не мог слова вымолвить *նա չկարողացավ խոսք ասել, նա չկարողացավ ծպտուն հանել*:

вы'молить տես **выма'ливать**.

вымора'живать, вы'морозить (— жу, — зишь, — зят) *սառցնել*· — насекомых *միջատներին սառցնելով բնաջնջել, միջատներին սառնաշնչել*:

вы'морить *սովից կոտորել, բնաջնջել*:

вы'морозить տես **вымора'живать**.

вы'морочный *անժառանգ, անտեր, մահալքյալ*· — ое имение *անժառանգ կալվածք, անտեր կալվածք, մահալքյալ կալվածք*:

вы'мостить (— щу, — стишь, — стят) տես **выма'щивать**.

вы'мотать տես **выма'тывать**.

вы'мочить տես **выма'чивать**.

вы'мпел *վիմպել (ծովային ռազմական դրոշակ), ռազմադրոշակ*:

вы'мученный *կործած, չորթած*:

выму'чивать, вы'мучить 1· *բռնությամբ կորզել, չորթել*· 2· *տանջել*:

вы'муштровать (— трую, — труешь. — труют) տես **муштрова'ть**.

вымыва'ть, вы'мыть (— мою, — моешь, — моют; հրմ· — мой) *լվանալ*:

вы'мысел *մտացածին բան, ստեա, հնարովի բան, հնարանք*:

вы'мыслить, вымышля'ть *հնարել, հերյուրել, մոգոնել*:

вы'мышленный *հնարովի, մտացածին, մոգոնովի, հերյուրած*:

вы'мыть տես **вымыва'ть**.

вы'мя (— мени) *ստինք, կուրծ (կենդանիների)*:

вына'шивать 1· *դուրս հանել*· 2· *արգանդում կրել (յերեխային)*· 3. *դաստիարակել, մեծացնել*· 4. *մաշել*· вына'шивать сокола *բազեին վորսորդության համար պատրաստել, բազեին վարժեցնել*:

вы'нести (— су, — сешь, — сут; հրմ· — еси; wlig· вынес, — сла, — сло) տես **выноси'ть**.

вынима'ть *վերցնել, դուրս քաշել, դուրս հանել, հանել*· — деньги из банка *բանկից փող հանել*· — из ножен *պատյանից հանել*· — пулю из раны *գնդակը վերքից հանել*:

вы'нос 1· *դուրս տանելը*· 2· *հուղարկավորություն*· 3· *հորիկ (յուծքի)*· — те'ла *ննջեցյալի հուղարկավորությունը*· на вы'нос *արտավաճառք, (խմիչքների) արտավաճառում, արտածախ, դուրս տալը*· торговля вином на вы'нос *ողու արտավաճառում, գինու արտածախ*:

выноси'ть (— шу', — сишь, — сят) *հանել, դուրս բերել, կրել*· պտկր· *տանել, դիմանալ*· — приговор *դատավճիռ կայացնել*· *դատավճիռ հանել*· — резолюцию *բանաձև հանել*· — впечатление *տպավորություն ստանալ*· — сор из избы' *տան մեջ յեղած վեճը դուրս տանել, պատմել դուրսը*· — тяжёлые испытания *ծանր փորձություններ դիմանալ, ծանր փորձություններ կրել*· она его не выносит *նա նրան տանել չի կարողանում*· мой желудок не выносит фруктов *իմ ստամոքսը պտուղներ չի մարսում, իմ ստամոքսը պտուղներ չի վերցնում*:

вы'носка *լուսանցագրություն, դիտողություն (լուսանցքում կամ ծնկի տակ)*:

выно'сли'вость ի· *դիմացկունություն, տոկունություն*:

выно'сли'вый *դիմացկուն, տոկուն*· — человек *դիմացկուն մարդ, տոկուն մարդ*:

вы'нудить (— жу, — дишь, — дят), **вынужда'ть** 1· *հարկադրել, բռնա-*

դատել, ստիպել. 2. *մեկին բռնութ֊յամբ մի բան անել տալ, մեկից բռնութ֊յամբ մի բան կորզել.* я вынужден это сделать *յես ստիպված եմ այդ անելու:*

вы'нужденный *հարկադրված, բռնադատված; ստիպված.* — спуск самолёта (или причал) *ապառնակի հարկադրված եջք:*

вы'нуть տես **вынима'ть.** он вынул меч из ножен *նա սուրը հանեց պատյանից.* он вынул часы из кармана *նա ժամացույցն հանեց գրպանից:*

выны'ривать, вы'нырнуть *ջրի տակից դուրս գալ, դուրս լողալ:*

выню'хивать, вы'нюхать *քաշել վերջացնել, հոտվտալ, հոտառութ֊յամբ գլխի ընկնել, տեղեկանալ:*

вы'няньчить *խնամել, պահել, մեծացնել:*

вы'пад 1. *վայր ընկնելը, դուրս թափվելը, դուրս ընկնելը, արտաթափում, արտահոսում, վայրանկում.* 2. *հարձակում, յեղութ֊* ответный выпад *պատասխան հարձակում.* сатирический выпад *յերգիծական հարձակում.* делать выпад *հարձակում գործել:*

выпада'ть *վայր ընկնել, թափվել, դուրս թափվել, դուրս ընկնել,* տես. у него выпадают зубы *նրա ատամները թափվում են.* — на до'лю *վիճակվել, բաժին ընկնել.* выпало много снегу *շատ ձյուն յեկավ:*

выпаде'ние *վայր ընկնելը, դուրս թափվելը, վայրանկում, դուրս թափում.* բուժ. *անկում (վորևե գործարանի).* — сне'га *ձյան տեղում, ձյան դալը:*

выпа'лзывать *սողալով դուրս գալ, արտասողալ:*

выпа'ливать, вы'палить *կրակել, այրել, խանձել.* պտկր. *հանկարծակի վրա բերել, չրխկացնել:*

выпа'лывать *քաղհանել:*

выпа'ривание fիմ. *գոլորշացում, շոգիացում:*

выпа'ривать, вы'парить 1. *գոլորշացնել, շոգիացնել.* 2. *գոլորշիով մաքրել, շոգիով փափկացնել:*

выпа'риваться (в бане) *լողանալ գոլորշու մեջ, լողանալ շոգու մեջ քաղնիսում, սաստիկ քրտնել:*

выпа'рхивать *ճախրել, սավառնել:*

выпа'рывать *կարը քանդել, կարած կտորը իրարից բաժանել:*

вы'пасть (— паду, — падешь, — падут; шіg. вы'пал, — ла, — ло: hրմ. — ади) տես **выпада'ть.**

вы'пахать, (— пашу, — пашешь. — шут; hրմ. — аши) տես **пахать.**

выпа'хивать *վարել, հերկել:*

вы'пачкать տես **па'чкать.**

вы'пачкаться տես **па'чкаться.**

выпека'ть, вы'печь (— пеку, — ечешь, — екут; hրմ. — еки; шіg. — пек, — пекла) *թխել, յեփել:*

выпека'ться, вы'печься (— екусь — ечешься, — кутся; hրմ. — екись; шіg. — пекся, — еклась) *թխվել, յեփվել:*

вы'переть (— пру, — прешь, — прут; hրմ. — при; шіg. — пер, — перла) տես **выпира'ть.**

выпива'ть *բաժակը խմել, պարպել. քեֆ անել, կոնծել, կոնծաբանել.* — до дна *մինչև հատակը խմել.* — чашку чая *մի բաժակ թեյ խմել:*

вы'пивка *կերուխում, քեֆ, խրախճան, կոնծաբանութ֊յուն, կոնծում.* у них была выпивка *նրանց մոտ կերուխում կար, նրանք քեֆ ունեյին:*

вы'пивший (— ая, — ее) *խմած, հարբած, կոնծած:*

выпи'ливать, вы'пилить *սղոցել. սղոցելով գործ անել:*

выпи'ливание *սղոցում, սղոցելով աշխատելը:*

выпира'ть 1. *դուրս պրծնել, դուրս ընկնել, դուրս կարկառվել.* 2. *դուրս մղել, դուրս չպրտել, դուրս հրել, վռնդել, արտաքսել:*

вы'писать (— шу, — шешь, — шут; hրմ. — ишши) տես **выпи'сывать.**

вы'писаться (— ишусь, — шешься — шутся; hրմ. — ишись) տես **выпи'сываться.**

вы'писка 1. *քաղվածք, արտագրութ֊յուն.* 2. *բերել տալը, ապսպրելը, դուրս գրելը, ապսպրում, դուրս գրում.* — периодических изданий *պարբերական հրատարակութ֊յուններ բերել տալը:*

выписно'й *ապսպրած, բերել տված:*

выпи'сывать, вы'писать 1. *արտագրել, դուրս գրել.* 2. *ապսպրել, պատվիրել (լրագիր և այլն).*

3. *քաղվածք անել*. 4. *արձակել, հեռացնել, դուրս հանել*:

выпи'сываться *դուրս դալ, արձակվել, ապաղրվել, դուրս դրվել*. больной выписался *հիվանդը դուրս դրվեց*:

вы'пись *f*. *քաղվածք, արտագրություն, արտակիր, ընդօրինակություն*. — метрическая *չափաբերական քաղվածք, ծննդագիր*:

вы'пить (вы'пью, — пьешь, — пьют; *hpm*. — пей) տես **выпива'ть**.

выпи'хивать, вы'пихнуть *դուրս գցել, արտաքսել, վռնդել*:

вы'плавить (— влю, — вишь, — вят) **выплавля'ть** *հալել, հալելով մաքրել, հալելով դտել*:

вы'плавка *ճուլում*:

вы'плакать (— чу, — чешь, — чут; *hpm*. — ачь) *լալով ձեռք բերել, լալ, վողբալ*. (— глаза') *շատ լաց լինելով (աչքերը) փչացնել*:

вы'плакаться (— чусь, — чешься, — чутся; *hpm*. — ачься) *կուշտ լաց լինել, լաց լինելուց դադարել*:

вы'плата *վճարում, վճարելիք*:

вы'платить (— чу, — тишь, — тят), **выпла'чивать** *վճարել, հատուցանել (պարտքը)*. — в рассрочку *մաս-մաս վճարել, ժամկետներով վճարել*:

выплёвывать, вы'плюнуть *թքել, դուրս թքել, արտաթքել*:

выплёскивать, вы'плескать (— лещу, — ещешь, — щут; *hpm*. — ещи), **вы'плеснуть** *դուրս ցայտեցնել, շաղ տալ, դուրս չփել*:

затяжно'й յերկարատև, յերկարաձիգ. — ая болезнь յերկարատև հիվանդություն:
зау'мный անմիտ, անխելք, անդիտակից:
зауны'вно թախծով, տխրորեն, վշտագին, տխուր:
зауны'вность f. տխրալիություն, թախծոտություն, վշտալիություն:
зауны'вный տխուր, թախծոտ, թախծալի, վշտագին:
заупоко'йный հոգեհանգստի, հոգեհանգստյան. — ая обе'дня հոգեհանգստյան պատարագ:
заупря'миться (— млюсь, — мишься, — мятся; hpm. — я'мься) կողբի ընկնել, կամակորություն անել, համառել:
Заура'лье Զաուրալիե, Անդրուրալ, Անդրուրալյան յերկիր:
зауря'д, зауря'дный 1. սովորական, միջակ, չափավոր. 2. դերակալ. зауряд врач դերակալ բժիշկ:
заусе'нец (— нца) տեխն. քեց, քոլիմ, յլեպ:
заусе'ница քիստ:
зау'тра վաղը, վաղն առավոտ:
зау'треня առավոտյան ժամերգություն, առավոտյան պատարագ:
заутю'живать, заутю'жить սկսել արդուկել, արդուկել:
зау'чивать, заучи'ть անդիր անել, անդիր սովորել, սերտել, բերան անել:
зау'чиваться, заучи'ться անդիր արվել, սերտվել:
зауша'ть, зауши'ть ապտակել, ականջակոթը դաղել:
зау'шница բուժ. ականջազեղձի ուռուցք, խոզուկ:
зау'шный ականջի հետևի, ականջի հետևում դտնվող:
зафальши'вить (— влю, — вишь, — вят; hpm. — ши'вь) սկսել սխալ նվագել, սխալ յերգել:
зафилосо'фствовать (— вую, — вуешь, — вуют) սկսել փիլիսոփայել, փիլիսոփայություն անել:
зафорси'ть (— форшу', — форси'шь, — ся'т) սկսել մեծամտել, պարծենալ, հպարտանալ:
зафрахтова'ть (— ту'ю, — ту'ешь, — ту'ют), **зафрахто'вывать** վարձել, նավավարձել:

зафы́ркать սկսել փնչացնել, փնչացնել:
заха́живать այցելել, անցնել մեկի մոտ, մտնել մեկի մոտ:
захва́ливать, захвали́ть սկսել գովել, գովաբանել, չափից դուրս գովել:
захва́т գրավում, զավթում, հափշտակում, գրավելը, զավթելը, հափշտակելը. — власти իշխանությունը գրավում, իշխանությունը զավթելը:
захва́танный շոշափելուց մաշված, շատ ձեռք տալուց կեղտոտած, հնացած, ձեռնահարած:
захвати́ть (— хвачу́, — хва́тишь, — тят) տես **захва́тывать.**
захва́тка 1. բռնում, գրավում. 2. տեխն. բռնիչ, ճանկ:
захва́тный զավթողական, հափշտակողական, գրավման. — ые клещи աքցան, ունելիք:
захва́тывание բռնում, ճանկում, բռնելը, ճանկելը. — цели в вилку ռազմ. նպատակը ճանկի մեջ առնելը, նպատակի ճանկումը:
захва́тывать 1. գրավել, զավթել, հափշտակել. 2. բռնել, վերցնել. я не захватил с собой денег ես հետս փող չեմ վերցրել. дождь меня захватил անձրևը վրա տվեց ինձ, ես անձրևի տակ ընկա. он захватил лихора́дку նա ջերմ ստացավ, նա ջերմով բռնվեց. у меня захватило дух չունչս կտրվեց, չունչս բռնվեց:
захва́ченный գրաված, հափշտակած, բռնված:
захвора́ть սկսել հիվանդանալ, տկարանալ:
захире́ть սկսել նվազել, նիհարել, թուլանալ:
захихи́кать սկսել հռհռալ, քրքջալ, քա՛հ-քա՛հ ծիծաղել:
захлебну́ться, захлёбываться շնչասպառ լինել, թուլանալ, խեղդվել. захлебнуться от счастья ջերմանությունից շնչասպառ լինել:
захлесну́ть, захлёстывать 1. կլանել, տակով անել (ալիքների մասին). 2. պրկել, կապել, կապ դցել. захлесну́ло верёвку պարանը կապ ընկավ:
захлеста́ть (— хлещу́, — щешь, — щут; հրմ. — ещи́) 1. սկսել մտրակել, հարվածել. 2. մահու չափ մտրակել:
захло́пнуть, захло́пывать ուժգին փակել, աղմուկով դոցել, արագ ծածկել (դուռը և այլն):
захлопота́ться (— почу́сь, — чешься, — чутся) չերկար հոգալ, շատ հոգալ, հոգսով տարվել, հոգսերով կլանվել:
захо́д 1. մայր մտնելը, մայրամուտ. 2. նեղ անցք. заход солнца արևմուտ, արևմտոց, արևի մայր մտնելը:
заходи́ть (— хожу́, — хо́дишь, — дят) տես **заха́живать.** заходить за тучу ամպի հետևն անցնել, ամպի հետևը մտնել. заходить в порт նավահանգիստ մտնել. заходить слишком далеко շատ հեռու գնալ. речь зашла о нем խոսք բացվեց նրա մասին, խոսք ընկավ նրա մասին. беседа заходит за́полночь զրույցը կես գիշերից անցնում է, խոսակցությունը կես գիշերից ուշ է վերջանում. солнце заходит արևը մայր է մտնում, արևը մտնում է. у него ум за ра́зум захо́дит նա խելոքությունից խելքը կորցնում է, նա խելքին զոռ է տալիս:
захожде́ние ընդում, թիկնանցում, հետևն անցնելը:
захолу́стный հետընկած, խուլ:
захолу́стье խուլ անկյուն, հետընկած վայր:
захорони́ть թաղել, հորել:
захоте́ть (— хочу́, — чешь, — чет, — хоти́м, — ти́те, — тя́т; հրմ. — хоти́) ուզել, ցանկանալ, կամենալ:
захоте́ться: мне захоте́лось ես ցանկացա, ես ուզեցի, սիրտս ուզեց:
захохота́ть (— хохочу́, — чешь, — чут; հրմ. — хочи́) սկսել ծիծաղել, քրքջալ, հռհռալ:
захребе́тник 1. ձրիակեր, պորտաբույծ. 2. ընչազուրկ գյուղացի:
захрипе́ть (— плю́, — пи́шь, — пя́т; հրմ. — рипи́) սկսել խռպոտել, խռպոտանալ:
захрома́ть սկսել կաղալ:
захуда́лый նիհարած, նվազած, հաղից ընկած:
зацара́пать սկսել ճանկռել, ճանկըռտել:
зацвести́ (—цвету́, — тёшь, — ту́т; հրմ. — ети́; անց. — цвёл, — ла́), **зацвета́ть** 1. սկսել ծաղկել, բողբո-

ջել, փիթիթել· 2· *սկսել բորբոսնել, բորբոսակալել*:

зацелова́ть (— лу́ю, — лу́ешь, — лу́ют) *սկսել համբուրել, շատ համբուրել, անչափ համբուրել, պաչպչորել*:

зацепи́ть (— плю́, — пишь, — пят), **зацепля́ть** *կախել, ակռել, բռնել, կառչել*:

заце́пка *կեռիք, ճանկ, կեռ, ճանկում, ակռում, կառչում, ակռելը, կառչելը*:

зачаро́ванный *հմայված, կախարդված, թովված*:

зачарова́ть (— ру́ю, — ру́ешь, — ру́ют) *սկսել կախարդել, հմայել, կախարդել, թովել*:

зачасти́ть (— чащу́, — части́шь, — тя́т) *հաճախ կրկնել*· *տես* **зачаща́ть.** он к нам зачасти́л *նա մեզ մոտ հաճախակի յե գալիս*· дождь зачастил *անձրևը վարարեց*:

зачасту́ю *հաճախ, հաճախակի*:

зача́тие *սաղմնավորում, հղություն, բեղմնավորություն*:

зача́ток (— тка) *սաղմ, սկզբնավորություն*:

зача́точный *սաղմնային, սկզբնական*· — ые о́рганы *թերած որգաններ, իրնե անդաստրացած որգաններ*:

зача́ть (— чну́, — нёшь, — нут; hрм· — чни́) 1· *հղիանալ, բեղմնավորվել, սաղմնավորվել*· 2· *սկսել, սկզբնավորել, սկիզբ դնել*:

зача́хнуть *նվազել, նիհարել, ցամաքել, հյուծվել*:

зачаща́ть *հաճախանալ, հաճախակի կատարել, կրկնել*:

зачва́ниться *սկսել փքվել, հպարտանալ, մեծամտել*:

заче́м *ինչու, ինչի համար, ինչ նպատակով*· не - зачем было приходить *պետք չեր գալ, գալու կարիք չկար, գալ հարկավոր չեր*:

зачёркивание *ընդում, ընդելը, վրայից գիծ քաշելը*:

зачёркивать, зачеркну́ть *ընդել, վրայից գիծ քաշել*:

зачерни́ть *սկսել սևացնել, ամբողջովին սևացնել, կեղտոտել*:

зачерпну́ть, зачерпывать *քաշել, հանել (ջուր, հեղուկ)*:

зачерстве́лость *ի*· *կարծրացածություն, չորացածություն, բրտություն, կոպտություն, քարքվություն*:

зачерстве́лый *կարծրացած, քարքվացած, կոպտացած, չորացած*:

зачерстве́ть *կարծրանալ, քարքվանալ, բրտանալ, կոպտանալ, չորանալ*:

зачерти́ть, заче́рчивать (— черчу́, — ртишь, — тя́т) *սկսել գծել, ամբողջը գծագրել, գծանշել*:

зачеса́ть (— чешу́, — шешь, — шут; hрм· — чеши́), **зачёсывать** 1. *սկսել սանրել, սանրելով ծածկել, հետ սանրել, սանրել*· 2; *քորել*· зачёсывать лысину *սանրելով հաղատամասը ծածկել*· зачесать затылок *ծոծրակը քորել, դժվարանալ, դժվար դրության մեջ ընկնել*:

зачеса́ться (— чешу́сь, — шешься, — шутся; hрм· — чеши́сь) 1· *սանրվել, մազերը հետ սանրել*· 2· *քոր գալ*· 3· *իրեն քորել*:

заче́сть (— чту́, — тёшь, — ту́т; hрм· — чти́; ailg· — ҷёл, — чла́) *տես* **зачи́тывать.**

зачёт 1· *հաշվանցում*· 2· *քննություն, հաշվենշում (ուսանողական), քննահաշիվ*· не в зачёт *չհաշվանցելով, վոչ ի հաշիվ*· в зачёт жа́лованья *ի հաշիվ ռոճկից, ռոճկի հաշվին*· сда́ть зачёт *քննություն տալ, քննահաշիվ տալ*:

зачётный 1· *հաշվանցման*· 2· *հաշվենչման, քննահաշվական*· — ая кни́жка *հաշվենչման դրքույկ, հաշվանցման դրքույկ*:

зачи́н *սկիզբ, սկզբնավորություն, նախաձեռնություն*:

зачина́ть *տես* **зача́ть.**

зачини́ть *կարկատել, լցնել (կարվածքով)*:

зачи́нщик *սկզբնապատճառ, սկսող, պատճառ, հեղինակ, դրդիչ, դերդրիչ*:

зачи́нщица *սկզբնապատճառուհի, հեղինակուհի, դրդիչուհի*:

зачири́кать *սկսել ծլվլալ, ճռլոզել, ծլվլալ*:

зачисле́ние *հաշվում, հաշվելը, հաշվառում, հաշվառելը*· — по а́рмии *բանակի մեջ հաշվառում, բանակի մեջ հաշվառելը*· — в счёт платы *վճարի դիմաց հաշվելը*· — в запа́с *պահեստի մեջ հաշվելը, պահեստի մեջ հաշվեդրելը*:

зачи'слить, зачисля'ть 1· հաշվել, հաշվառել, հաշվեգրել· 2· մտցնել, ընդունել· зачислить по армии բանակի մեջ հաշվեգրել, բանակի մեջ հաշվել· зачислить в запас պահեստի մեջ հաշվեգրել· зачислить на службу ծառայության ընդունել· зачислить в список ցուցակի մեջ մտցնել· зачислить на социальное страхование սոցիալական ապահովության նշանակել:

зачи'стить (— чи'щу, — чи'стишь, — тят) տես **зачища'ть.**

зачита'ть, зачи'тывать 1· հաշվակցել, հաշվառել, հաշվել· 2· կեղտոտել, փչացնել, չվերադարձնել (ուրիշի դիրքը)· 3· սկսել կարդալ, բարձրաձայն կարդալով հոգնեցնել:

зачита'ться, зачи'тываться յերկար կարդալ, խորասուզվել ընթերցանության մեջ, ընթերցանությամբ տարվել:

зачиха'ть սկսել փռշտալ, յերկար փռշտալ:

зачища'ть հարթել, վողորկել, հղկել:

зачо'кать, зачо'каться սկսել զարկել, չրխկացնել (բաժակները):

зачуми'ть, зачумля'ть (— млю', — ми'шь, — мя'т) ժանտախտով վարակել, ժանտախտավորել:

зачумле'ние ժանտախտով վարակում, ժանտախտով վարակելը (վարակվելը), ժանտախտավորում:

зачумлённый ժանտախտով վարակված, ժանտախտով բռնված:

зачу'ять (— чу'ю, — чу'ешь, — чу'ют) տես **почу'ять.**

зашага'ть սկսել քայլել, մեծ-մեծ քայլերով գալ:

зашвартова'ть (— ту'ю, — ту'ешь, — ту'ют), **зашварто'вывать** ծով. կապել, ամրացնել (նավը՝ նավահանգստում):

зашата'ться սկսել յերերալ, սկսել չարժվել, սկսել տատանվել:

зашвы'ривать, зашвырну'ть սկսել շպրտել, դեն գցել, շպրտել, դեն նետել:

зашевели'ть սկսել չարժել:

зашевели'ться սկսել չարժվել:

зашелести'ть (— лещу', — лести'шь, — стя'т) սկսել խշշալ, սոսափել, խշխշալ, չրշալ:

зашепта'ть (— шепчу', — чешь, — чут; հրմ· — шепчи'), **зашёпты-вать** 1· սկսել չշնջալ, փսփսալ· 2· հմայել, կախարդել, թովել:

зашерша'веть սկսել փշաքաղվել, բիղբիղ կանդնել, ցից-ցից կանգնել, քաոմնել:

зашиба'ть, зашиби'ть (— бу', — бёшь, — бу'т) 1· խփել, հարվածել, վիրավորել· 2· պտկր· դատել (փող)· 3· խմել, հարբել· зашибать деньгу գռեհկ· փող դատել, փող խփել:

зашива'ть սկսել կարել, կարել-ծածկել, չրչակարել, կարկատել:

заши'кать սկսել սուլել, չվացնել, «չը՛չ» անել:

зашипе'ть (— плю', — пи'шь, — пя'т) սկսել թշշալ, չաչել, վրփրալ, յոռալ:

заши'ть (— шью', — шьёшь, — шью'т; հրմ· — ше'й) տես **зашивать.**

заши'ться (— шью'сь, — шьёшься, — шью'тся; հրմ· — ше'йся) 1· ներս ընկնել· 2· չատ աշխատել, բավականաչափ աշխատել:

зашифрова'ть (— ру'ю, — ру'ешь, — ру'ют) ծածկագրել:

зашмы'гать քաշքշել, տարուբերել, սկսել այս ու այն կողմն ընկնել, վազվզել, քստքստացնել, մաչել:

зашнурова'ть (— ру'ю, — ру'ешь, — ру'ют), **зашнуро'вывать** ժապավինել:

зашпи'ливать, зашпи'лить ասղապնդել, ասեղել, ամրացնել (ասեղով, դամբկով):

зашта'тный արտահաստիքային, արտահաստիք, հաստիքից դուրս:

зашто'пать, зашто'пывать կարկատել, լցնել (դուլպան և այլն):

заштукату'ривать, заштукату'рить սկսել սվաղել, ծեփել, ավազապատել:

зашуме'ть (— млю', — ми'шь, — мя'т; հրմ· — шуми') 1· սկսել աղմկել, հանկարծ աղմկել· 2· դժժալ, թշշալ, խշշալ· в уша'х зашуме'ло ականջներս սկսեցին դժժալ· самова'р зашуме'л ինքնայեռը թշշաց· у меня' в голове' зашуме'ло от вина' գլուխս գինուց սկսեց դժժալ, գինին գլուխս ընկավ· мо'ре зашуме'ло ծովն սկսեց աղմկել:

зашушу'кать սկսել փսփսալ, չշնջալ, քչփչալ:

защебета́ть (— бечу́, — чешь, — чут; прш. — ещи́) սկսել ծլվլալ, ծլվվալ, ճռվողել:
защекота́ть (— кочу́, — чешь, — чут; прш. — очи́) սկսել խոտոտ ածել, խոտոտուտ տալ:
защёлка մղլակ, չըխկ:
защёлкивать, защёлкнуть 1. մղլակել, մղլակը դցել, չըխկը դցել, փակել. 2. ղեղղեղել, դայլայլել:
защеми́ть (— млю́, — ми́шь, — мя́т), **защемля́ть** ճմլել, տակովն անել (գոռան), տրորել, ջարդել (մի բանի արանքում). у меня́ се́рдце защеми́ло սիրտս ճմլվեց:
защемле́ние ճմլում, ճմլելը, մի բանի տակով անելը, տրորելը:
защёчный: защёчные мешки այտապարկեր:
защи́та 1. պաշտպանություն, պաշտպանում, պաշտպանելը. 2. պատըպարան. — интере́сов շահերի պաշտպանություն:
защити́тельный պաշտպանողական, պաշտպանական. — ая речь պաշտպանողական ճառ:
защити́ть (— щищу́, — щити́шь, — тя́т) տես **защища́ть.**
защи́тник պաշտպան, դատապաշտպան. коллегия защитников դատապաշտպանների կոլեգիա:
защи́тница պաշտպանուհի, դատապաշտպանուհի:
защи́тный պաշտպանական. защи́тного цвета́ պաշտպանական գույնի, խաքի:
защища́ть պաշտպանել, պատսպարել:
заяви́тель ա. հայտարարիչ, դիմում տվող, հայտատու, դիմորդ:
заяви́тельница հայտատուհի, դիմորդուհի:
заяви́ть (— влю́, — вишь, — вят) տես **заявля́ть.**
зая́вка հայտարք, հայտ:
заявле́ние հայտարարություն, դիմում:
заявля́ть հայտարարել, հայտնել:
зая́длый մոլեռանդ, ֆունդ. — католик մոլեռանդ կաթոլիկ, ֆունդ կաթոլիկ:
за́яц (за́йца) 1. նապաստակ. 2. յերկրդ. անտոմս ուղևոր, դաշնարար ճանապարհորդող. — бирже́вой անարտոնագիր բորսային մի-նորդ. ра́дио-за́яц ռադիոննդ, դաշնի ռադիոունկնդիր. за двумя́ зайцами погонишься, ни одного́ не поймаешь մի ձեռքով յերկու ճմերուկ բռնել չի լինի. забега́ть зайцем вперёд հաճոյանալ, չողոքորթել:
за́ячий (— чья, — чье) նապաստակի. — корень ра́иа. սթեր, աղարիտն. — чья губа́ չրթնատ, չրթնահերձ մարդ, պռատ. — чья ла́пка քունքակնճիռ, քունքախորշոմ (հասակավորների):
зва́ние 1. կոչում. 2. կոչունք, կոչելը, հրավեր, հրավիրելը. люди всякого звания ամեն կոչման տեր մարդիկ, զանազան կոչման տեր մարդիկ:
зва́ный կանչված, հրավիրված, հրավիրովի. — обе́д հրավիրատաճ. много званых, а мало избранных շատերն են կոչված, բայց քչերն են ընտրված:
зва́тельный падеж ել. կոչական հոլով:
зва́ть (зову́, — вёшь, — ву́т; прш. зови́), **позвать** 1. կանչել, կոչ անել. 2. հրավիրել. 3. անվանել, կոչել. как вас зову́т? ձեր անունն ի՞նչ է:
звезда́ աստղ. պտկր. բախտավորություն, բախտ. — блуждающая չրջմոլիկ աստղ, չրջուն աստղ. — неподвижная անշարժ աստղ. — вечерняя դիշերավար. — полярная հեհոյին աստղ, հեհոաստղ. — утренняя լուսաստղ, Արուսիակ, արուսյակ. — падающая վայր ընկնող աստղ, աստուղ. его звезда́ закати́лась նրա աստղը մայր մտավ, նրա աստղը թեքվել է. родиться под счастли́вой звездой բախտավոր աստղի տակ ծնվել:
звёздный աստղային, աստղալից, աստղազարդ. — пробе́г աստղավազք, աստղերի ընթացք. — ая ночь աստղալից գիշեր, աստղազարդ գիշեր:
звездообра́зный աստղաձև, աստղակերպ:
звездочёт աստղահմա, աստղադետ:
звёздочка աստղիկ, աստղանշան:
звене́ть (— ню́, — ни́шь, — ня́т; прш. — ни́) հնչել, ղողանջել, զրնգալ, ծլնգալ, զրնգալ, զնգացնել,

ընդացնել· у меня звенит в ушах *ականջս կանչում է, ականջս ղըժ-ժում է*:

звено' (hnqû· — нья, — ньев) *ողկ, ողակ*:

зверёк (— рька') *գազանիկ, փոքրիկ գազան, փոքրիկ կենդանի*:

звери'нец (— нца) *գազանանոց*:

звери'ный *գազանի, գազանային, գազանական*· — про'мысел *գազանորսություն, վորսորդություն*:

зверобо'й բուս. 1· *խնճորածաղիկ, հիպերիկոն*· 2· *ճահճային վոսկեծաղիկ*· 3· — ка'менный *բոլի, քաղցրամատ, մորմ*· 4· — лугово'й *դաշտամորմատ*:

звероло'в *գազանորս*:

звероло'вный *գազանորսի, գազանորսական*:

звероло'вство *գազանորսություն*:

звероподо'бный *գազանանման, գազանակերպ*:

звероподо'бие *գազանանմանություն, գազանակերպություն*:

звероя'дный *գազանակեր*:

зве'рский (— ая, — ое) *գազանային, գազանաբարո, գազանի, գազանական*:

зве'рство *գազանություն, վայրագություն, գազանաբարոյություն*:

зве'рствовать (— вую, — вуешь, — вуют) *գազանություն անել, վայրագություն անել*:

зве'рь ա· *գազան, կենդանի*· — кра'сный վարս· *կարմիր գազան (գայլ, աղվես, կզաքիս)*· — пушной *մուշտակավոր գազան, մուշտակատու կենդանի*· — хи'щный *գիշատիչ գազան*· укроти'тель зверей պտկր· *գազաններին զսպող, գազաններին սանձահարող*· *գազանազուսպ*:

зверьё *վայրենի գազաններ, վայրի գազաններ*:

зво'н *հնչյուն, ձայն, զողանջ, խշշոց, զնգոց, զանգահարություն*· звон в ушах *ականջակախչ, ականջը կանչելը, ականջի ղժժոց*· — похоро'нный *հուղարկավորության զանգահարություն, սգազողանջ*:

звона'рь ա· *ժամհար, ժամկոչ*:

звони'ть *զանգահարել, զանգ տալ, զանգերը տալ*· звонить во все колокола *բոլոր զանգերը տալ, աստիճ աղմուկ բարձրացնել, աղմկել*· звонить по телефону *հեռախոսով զանգահարել*:

зво'нкий (— ая, — ое) *հնչուն, հնչեղ, բարձրահնչուն*· — ая моне'та *հընչուն դրամ*:

зво'нко *բարձրաձայն, զիլ, սուր ձայնով, հնչեղ ձայնով*:

звонкоголо'сый *հնչեղաձայն, զիլ ձայն ունեցող*:

зво'нкость ի· *հնչունություն, հնչեղություն*:

звоно'к (— нка), **звоно'чек** (— чка) *զանգ, զանգակ, հնչակ*· — электри'ческий *էլեկտրական զանգակ, էլեկտրազանգ*· был звоно'к *զանգը տվեց, զանգը խփեց*:

звук *հնչյուն, ձայն, շաչյուն, շառաչյուն*· — гласный *ձայնավոր հընչյուն*· — согласный *բաղաձայն հնչյուն*· — цепей *շղթաների շառաչյուն*· — ору'жия *զենքի շաչյուն*:

звуково'й *հնչյունական, ձայնական, հնչյունի, հնչյունային*:

звукоподража'ние *ձայնանմանություն*:

звукоподража'тельный *ձայնանմանական, ձայնանմանության*:

звуча'ние *հնչում, հնչելը*:

звуча'ть (— чу', — чи'шь, — ча'т; hրմ. — чи') *հնչել*· его голос звучит у меня в ушах *նրա ձայնը հնչում է իմ ականջին*:

зву'чно *հնչեղաձայն, պարզ, հնչուն ձայնով*:

зву'чность ի· *հնչեղություն, հնչունություն, պարզահնչունություն*:

зву'чный *հնչեղ, հնչուն, պարզահընչյուն*· — голос *հնչեղ ձայն, պարզահնչյուն ձայն*:

зва'ть, зва'кнуть 1· *զընգալ, զընգալ, զնդացնել, ծնդացնել, զանգահարել*· 2· *դուրս տալ, փչել, դատարկաքանել*:

зга' *խավար, մթություն*· ни зги не видно *սաստիկ մութն է, վոչինչ չի կարելի տեսնել*:

зда'ние *շենք*· — школьное *դպրոցական շենք*· — станционное *կայարանի շենք*· — паровозное *շոգեկառուռն, շոգեկառարան*:

здесь *այստեղ, աստ*:

зде'шний *այստեղի, այստեղացի*:

здоро'ваться *բարևել, վողջունել*:

здорове'нный *քնջատողջ, հաղթանդամ, վիթխարի, ուժեղ, ահագին*:

здорове́ть առողջանալ:
здо́рово լավ, բավականաչափ, զորս դու պատվիրեցեր:
здо́рово! լա՛վ, լա՛վ բան է:
здоро́во 1· բարև, վողջույն· 2· վողջառողջ:
здоро́вый առողջ, առողջարար, վողջ, առողջակազմ, ուժեղ, մեծ· бу́дьте здоро́вы! մնաք բարով, վողջ յեղեք· задать здоровую трёпку մի լավ քոթակել, լավ ծեծել· здорово живёшь զուր տեղը, առանց պատճառի, անտեղի:
здоро́вье առողջութիւն, վողջութիւն· на здоро́вье! անուշ լինի, առողջ մարսական· носи на здоровье! բարով մաշե՛ս· ешь на здоровье! կե՛ր, անուշ լինի, անուշ ա՛բար· пить за чье-либо здоровье մեկի կենացը խմել· как ваше здоровье? ինչպե՞ս է ձեր առողջութիւնը, վո՞նց եք:
здоровя́к առողջ մարդ, քաջառողջ մարդ, հաղթանդամ մարդ, պնդակազմ մարդ (նաև կենդանի):
здра́вие տես **здоро́вье.**
здравомы́слие առողջամտութիւն, առողջ դատողութիւն, վողջամտութիւն:
здравомы́слящий (— ая, — ее) առողջամիտ, առողջ դատողութեան տէր, վողջամիտ:
здравоохране́ние առողջապահութիւն· Наркомздра́в (народный комиссариат здравоохранения) Առժողկոմատ (Առողջապահութեան ժողովրդական կոմիսարիատ)· отдел здравоохранения առողջապահական բաժին (առբաժին):
здравотде́л առբաժին:
здра́вствовать (— вую, — вуешь, — вуют) առողջ լինել, վողջ-առողջ ապրել· здра́вствуйте! բարև, վողջույն, բարև՛ քեզ, բարև՛ ձեզ· да здра́вствует! կեցցե՛...:
здра́вица կենաց բաժակ, կենաց, կենացի բաժակ, կենացաբաժակ:
здра́вница առողջարան, սանատորիա:
здра́во առողջ կերպով, առողջամտորէն· судить о чем-либо здраво մի բանի մասին առողջ կերպով դատել:
здра́вый առողջ, վողջ· — смысл առողջ միտք· — ое сужде́ние առողջ դատողութիւն· здрав и невредим վողջ և անվնաս· в здравом уме առողջ դատողութեամբ:
зе́бра կենդ· զեբր, վագերաձի:
зе́бу կենդ· զեբու:
зе́в յերախ, բերնախոռոչ, սոսորդ· մնծգ· խորչ, աչք· воспале́ние зева բուժ· սոսորդատապ, սոսորդի բորբոքում:
зева́ка բնդ· բերանաբաց (մարդ):
зева́ть I բերանաբաց մտիկ տալ, ապշած նայել· не зевай! ուշդ գլխիդ պահի՛ր, ուշադիր յեղիր, անուշադրութեան չմատնես:
зева́ть II, зевну́ть հորանջել, արչկոտալ:
зево́к (— вка́) հորանջ, հորանջում:
зево́та հորանջում, հորանջկոտութիւն, հորանջելը, արչկոտալը· на меня́ нападае́т зево́та յես հորանջել եմ սկսում, հորանջս գալիս է:
Зеве́с, Зевс Զևս, Արամազդ:
зела́ндец (— дца) զելանդացի:
зела́ндка զելանդուհի:
Зела́ндия աշխգր· Զելանդիա (կղզի)· Но́вая Зела́ндия Նոր-Զելանդիա (կղզի):
зела́ндский (— ая, — ое) զելանդական, Զելանդիայի:
зелене́ть կանաչել, կանաչ զոյն ստանալ, կանաչին տալ:
зеленно́й կանաչեղենի, կանաչու· — а́я ла́вка, зеленна́я կանաչեղենի խանութ, կանաչու կրպակ:
зеленова́тый կանաչավուն, քիչ կանաչ:
зеленщи́к կանաչավաճառ:
зеленщи́ца կանաչավաճառուհի:
зелёный կանաչ, թարմ, խակ· պտկր· տհաս· — пло́д խակ պտուղ· — сыр թերով պանիր, կանաչ պանիր, բանջարով պանիր:
зе́лень ի· 1· կանաչ, կանաչի, կանաչեղեն· 2· կանաչութիւն, կանաչ զոյն:
зело́ չատ:
зе́лье բույս, խոտ, բուժախոտ, թունախոտ:
земе́лька հողիկ, հողակտոր, մի կտոր հող:
земе́льный հողի, հողային· — вопрос հողային հարց· — голод հողի սով, հողասով· — отдел հողային բաժին· — участок հողամաս· — ая

собственность հողային սեփականություն. —ая рента հողային ռենտա:
зе'мец (—мца) պատմ. զեմստվոյի անդամ, զեմստվոյական գործիչ:
землеве'д յերկրագետ, աշխարհագրագետ:
землеве'дение յերկրագիտություն, աշխարհագրություն:
землевладе'лец (—льца) հողատեր:
землевладе'лица հողատիրուհի:
землевладе'ние հողատիրություն:
земледе'лец (—льца) հողագործ, յերկրագործ:
земледе'льческий (—ая, —ое) հողագործական, հողագործ. —ое государство հողագործական պետություն. —ое население հողագործ բնակչություն. —ое орудие յերկրագործական գործիք:
землеко'п հողափոր:
земледе'р հողաչափ:
земледе'рие հողաչափություն:
земледе'рный հողաչափական. —ая цепь հողաչափական չղթա, հողաչափական պարան:
землепа'шец (—шца) տես земледелец.
землепо'льзование հողօգտագործություն, հողօգտագործում:
земляро'йка կենդ. սրընչակ:
землетрясе'ние յերկրաշարժ:
землеустро'йство հողաչինարարություն:
землечерпа'лка հողահան (գործիք):
землечерпа'тельный հողահան, հողահանական, հողահանության. —ая машина հողահան մեքենա:
земли'стый հողոտ, հողախառն:
земля' 1. յերկիր, յերկրագունդ, հողագունդ. 2. հող, դետին, ցամաք. —глинистая կավահող. —пахотная վարելահող. —плодородная պտղաբեր հող, արդավանդ հող. мать сыра-земля մայր հող, մայր յերկիր:
земля'к հայրենակից, յերկրացի:
земля'чка հայրենակցուհի, յերկրակցուհի:
земляни'ка բուս. մորի, դետնաթուփ:
земляни'чный մորու, դետնաթփի:
земля'нка դետնատուն, դետնաիւոր:
земляно'й հողի, հողային, դետնի:
земля'чество հայրենակցություն, հայրենակցական մուրթյուն:
земново'дный 1. հողաջրային, հողի ու ջրից կազմված. 2. յերկկենցաղ, ամֆիբիական:
земново'дное յերկկենցաղ (կենդանի), ամֆիբիա:
земно'й յերկրային, յերկրի. —шар յերկրագունդ, հողագունդ. —покло'н խոնարհ վողջույն, ծնրադրություն, յերկրպագություն:
зе'мный յերկրային:
зе'мский (—ая, —ое) զեմստվոյի, զեմստվոյական, զեմստվային:
земотде'л հողբաժին:
зе'мство զեմստվո:
Зендаве'ста, Зенд-Авеста Զենդավեստա, Զենդ-Ավեստա:
земь: на' земь դետին, ցած, հողի վրա, դետնով. о' земь դետնին, հողին, մինչև դետին:
зени'т զենիթ. պտկր. զագաթնակետ:
зени'тный զենիթային, զագաթնակետային. —ая пу'шка ռազմ. զենիթային թնդանոթ, զագաթնակետային թնդանոթ:
зени'ца տես зрачо'к; беречь как зеницу ока իր աչքի լուսի պես պահել:
зенкова'ние յեղրալայնում, յեղրալայնելը:
зенкова'ть (—ку'ю, —ку'ешь, —ку'ют) յեղրալայնել:
зе'ркало (հոգն. —кала', —кал) հայելի:
зерка'льный հայելու, հայելանման, հայելազարդ. —ая пове'рхность воды' ջրի հայելանման մակերևույթ. —ое стекло' հայելու ապակի, հայելապակի:
зе'ркальце փոքրիկ հայելի, հայելյակ:
зерни'стый հատիկավոր, հատիկաձև, հատիկանման, մեծահատիկ. —ая икра հատիկավոր ձկնկիթ:
зерно' (հոգն. зёрна, —рен) հատիկ, հատ, հացահատիկ. —жемчужное մարգարտահատիկ, մարգարիտ:
зерново'й հատիկային, հացահատիկային, հացահատիկի:
зернохрани'лище չամբարան, հացի ամբար, հացապահեստ:
зёрнышко հատիկ, փոքրիկ հատիկ:
зерца'ло հայելի:
зе'товое железо զետաձև յերկաթ (Zn տառի ձևով յերկաթ):
зефи'р զեփյուռ:
зига'г զիգզագ, կեռման, կեռադիծ:

зигомо́рфный *զուգաձև, զուգահամաչափ:*

зижди́тель ш. *ստեղծագործ, ստեղծիչ, հաստիչ, հիմնադիր:*

зижди́тельный *ստեղծագործական, ստեղծագործ.* — ая сила природы *բնության ստեղծագործական ուժ:*

зима́ *ձմեռ.* зимо́ю *ձմեռը, ձմեռ ժամանակ:*

зи́мний *ձմեռնային, ձմեռվա, ձմռան.* — яя спячка *ձմեռային քուն, ձմեռնաքուն.* — ее время *ձմեռ ժամանակ, ձմեռնոց, ձյուն-ձմեռնոց:*

зимова́ние *ձմեռում, ձմեռելը, ձմեռն անցկացնելը:*

зимова́ть (— му́ю, — му́ешь, — у́ют) *ձմեռել, ձմեռն անցկացնել.* он зна́ет, где ра́ки зиму́ют *նա իր բանը լավ գիտե, նա իր չահը լավ է հասկանում:*

зимо́вка 1. *ձմեռում, ձմեռելը.* 2. *ձմեռանոց, ձմեռոց:*

зимо́вище, зимо́вье *ձմեռոց, ձմեռանոց:*

зимо́й *ձմեռը, ձմռանը:*

зиморо́док (— дка) կենդ. *ալիքոն, ծղնի (թռչուն):*

зипу́н *խալաթ, դեղձկական կապա:*

зипуни́шко *անվեռնաք խալաթ, փոքրա խալաթ:*

зия́ние 1. *բերանը բանալը, չերախը բանալը.* 2. fig. *մխահնչյուն ձայնավորների հանդիպում:*

зия́ть *բացվել (անդունդի, վերքի մասին), բերանը բանալ, չերախը բանալ.* зияющая бездна *չերախը բաց անդունդ:*

зла́к *բույս, բանջար, խոտ, կանաչի:*

зла́ки *բանջարեղեններ, ընդեղեններ.* — хлебные *հացարույսեր:*

зла́ковый տես **зла́чный.**

зла́то *ոսկի:*

златогла́вый *ոսկեզագաթ, ոսկեդմբեթ, ոսկեկատար:*

златокры́лый *ոսկեթև:*

златоку́дрый *ոսկեգանդուր:*

златотка́нный *ոսկեհյուս, ոսկեթել, ոսկեհուռ:*

Златоу́ст Иоанн *Ոսկերերան (Հովհան Ոսկերերան):*

златоу́стый *ոսկերերան, չատ պերճախոս:*

златоцве́т (хризанте́ма) *ոսկեծաղիկ:*

зла́чность ի. *բուսավետություն, կանաչավետություն, խոտավետություն:*

зла́чный *բուսավետ, խոտավետ, կանաչավետ.* — ые места́ *կանաչազարդ վայրեր, խոտավետ վայրեր:*

зле́е *ավելի չար:*

зле́йший (— ая, — ее) *ամենաչար, ամենավոխերիմ, չարագույն.* — враг *ամենավոխերիմ թշնամի:*

зли́ть *չարացնել, բարկացնել, զայրացնել:*

зли́ться *չարանալ, բարկանալ, զայրանալ, զաղալել:*

зло (հոգն. սեռ. зол) 1. *չարիք, չարություն.* 2. *բարկություն, զայրույթ.* меня зло берёт *բարկությունս գալիս է, զայրույթն ինձ պատում է.* на зло *ի հեճուկս, հակառակ (մեկի).* как на зло *հակառակի պես, թարսի պես.* употребля́ть во зло *ի չարը գործ դնել, չարաշահել.* наименьшее из двух зол *երկու չարիքներից փոքրագույնը.* я не помню зла *չես հիշաչար չեմ, չես վոխակալ չեմ, չես անհիշաչար եմ:*

зло́ба *չարություն, զայրույթ, վոխ, քեն.* — тайная *զաղտնի վոխ, քեն.* питать против кого-либо тайную злобу *զաղտնի վոխ տածել դեպի մեկը.* зло́ба дня́ *որվա չարիք:*

зло́бно *չարությամբ, չարակամությամբ, թշնամաբար:*

зло́бность ի. *չարություն, վոխակալություն:*

зло́бный *չար, չարամիտ, վոխակալ, քինոտ:*

злободне́вный *որվա չարիք հանդիսացող, հրատապ.* — вопрос *հրատապ հարց:*

зло́бствовать (— вую, — вуешь, — вуют) *վոխ պահել, քեն ունենալ, թշնամություն տածել:*

злове́щий (— ая, — ее) *չարագուշակ:*

злово́ние *գարշահոտություն:*

злово́нный *գարշահոտ:*

зловре́дность ի. *վնասակարություն:*

зловре́дный *վնասակար, վնասատու:*

злоде́й *չարագործ:*

злоде́йка *չարագործուհի:*

злоде́йский (— ая, — ое) *չարագործական, չարագործի:*

злоде́йство *չարագործություն:*

злоде́йствовать (— вую, — вуешь, — вуют) *չարագործություն անել*։
злодея́ние *չարագործություն*։
зложела́тель ա. *չարակամ, չարը կամեցող (մարդ)*։
зложела́тельный *չարակամ, չարակամական*։
зло́й *չար, չարամիտ, վատթար*։
злока́чественность ի. *չարորակություն, վատորակություն*։
злока́чественный *չարորակ, վատորակ*. — ая оспа բուժ. *չարորակ ծաղիկ*։
злоключе́ние *դժբախտություն, դըժբախտ դեպք, դժբախտ պատահար*։
злоко́зненность ի. *չարադավություն, չարանենդություն*։
злоко́зненный *չարադավ, չարանենդ*։
злонаме́ренно *չար դիտավորությամբ, չարադիտորեն, չարամտաբար*։
злонаме́ренность ի. *չարադիտություն, չարամիտ լինելը*։
злонаме́ренный *չարամիտ, չարամետ, չար դիտավորություն ունեցող (մարդ)*։
злонра́вие *չարաբարոյություն, չար բնավորություն*։
злонра́вный *չարաբարո, չար բնավորության տեր*։
злопа́мятность ի., **злопа́мятство** *հիշաչարություն, վրխտակատություն*։
злопа́мятный *հիշաչար, վրխտակատ*։
злополу́чие *դժբախտություն, անբախտություն, չարաբախտություն*։
злополу́чно *դժբախտությամբ, դըժբախտաբերն, անբախտաբերն, չարաբախտաբերն*։
злополу́чный *չարաբախտ, դժբախտ, չարաբաստիկ, քամբախտ*։
злопыха́тельный *չարասիրտ, չարակամ*։
злора́дный *չարախինդ*։
злора́дство *չարախնդություն*։
злора́дствовать (— вую, — вуешь, — ют) *չարախնդալ, չարախնդություն անել*։
злосе́рдие *չարասրտություն, դաժանություն*։
злосе́рдый *չարասիրտ, դաժան*։
злосло́вие *չարախոսություն, վատաբանություն, բամբասանք*։
злосло́вить (— влю, — вишь, — вят; հրմ. — о́вь) *չարախոսել, վատաբանել, բամբասել*։
злосло́вный *չարախոսական, վատաբանական, բամբասական*։
зло́стно *չարանենդորեն, չարամտորեն, նենդամտորեն*։
зло́стный *չարանենդ, չարամիտ, նենդամիտ*. — ое банкротство *չարանենդ սնանկություն*։
злость ի. *չարություն, չարասրտություն, չարամտություն*։
злосча́стный *չարաբախտ, անբախտ, չարաբաստիկ, դժբախտ*։
злосча́стие *չարաբախտություն, դըժբախտություն, անբախտություն*։
злоумы́слить տես **злоумышля́ть**.
злоумышле́ние *չարագործություն, չարագործություն անելը*։
злоумы́шленник *չարագործ*։
злоумы́шленница *չարագործուհի*։
злоумы́шленный *չարամիտ, չարամետ*։
злоумышля́ть *չարագործություն անել, չարիք նյութել*։
злоупотребле́ние *չարարկություն, ի չարը գործ դնելը*։
злоупотреби́ть (— блю́, — би́шь, — бя́т), **злоупотребля́ть** *չարարկել, ի չարը գործ դնել*։
злоязы́чный *չարալեզու, չարախոս*։
злю́ка, злю́чка *չար մարդ, չարասիրտ մարդ*։
злю́щий. (— ая, — ее) *խիստ չար, չարաչուն*։
змееви́дный *ոձաձև, ոձակերպ, ոձանման*։
змееви́к 1. հաևif. *ոձաքար*. 2. տեխն. *դալարք, դալարուկ, պարուրակ*։
змеёныш *ոձի ձագ, ոձաճուտ*։
зми́ный *ոձի, ոձային*։
зме́й *մեծ ոձ, վիշապ, ոձ*. — бумажный *ոդապարուկ, թղթե ոձ (խաղալիք)*։
зме́йка 1. *ոձիկ, փոքր ոձ*. 2. ռազմ. *ոձաշարք*. 3. *ոդապարուկ*։
змея́ *ոձ*. — гремучая *բոժոժավոր ոձ, խարամանի*. — летучая *թռչող ոձ*. — очковая *ակնոցավոր ոձ, հնդկոձ*։
зми́й տես **зме́й**. допиться до зелёного змия *թունդ հարբել, դինու տիկ դառնալ, իրեն կորցնելու աստիճան հարբել*։
знава́ть տես **знать** I.
знай 1. տես **знать** II. 2. то и знай *անընդհատ, անդադար*. знай на-

ших! *մեղ լա՛վ ճանաչիր, մեղ հետ հանաք մի՛ արեք*· он знай себе орёт *նա անդադար գոռում է, նա մի դլուխ բղավում է*· так и знай *դե լավ իմացիր*:

знак *նշան, նիշ*· в знак того, что... *ի նշան այն բանի, որ*... — отли'чия *ռազմ*· *տարբերանշան, պատվանշան, չքանշան*· — памяти *հիշատակ*· — почтовый *փոստանիշ*· делать знаки *նշաններ անել*:

знако'мая *ծանոթուհի, ծանոթ կին*:

знако'мить (— млю, — мишь, — мят; hրմ· — ко'мь) *ծանոթացնել*:

знако'миться (— млюсь, — мишься, — мятся; hրմ· — ко'мься) *ծանոթանալ*· (с кем - ли'бо—*մեկի հետ*, с чем - ли'бо—*մի բանի*):

знако'мство *ծանոթություն*· завязать знакомство *ծանոթություն հաստատել*· у него большое знакомство *նա մեծ թվով ծանոթներ ունի*· у меня с ним только шапочное знакомство *յես նրա հետ միայն բարեւի ծանոթություն ունեմ (դլխարկի ծանոթություն ունեմ)*:

знако'мый 1· *ծանոթ (անձ)*· 2· *ծանոթ (հայտնի, իրաղեկ)*· хорошо знакомый с предметом *առարկային լավ ծանոթ*· быть знакомым *ծանոթ լինել, տեղյակ լինել*:

знамена'тель ա· *մաթ*· *հայտարար*· — о'бщий *ընդհանուր հայտարար*· приводить дроби к одному знаменателю *կոտորակները մի հայտարարի բերել*:

знамена'тельно *կարևորաբար, նշանակալիորեն, նշանակալից կերպով*:

знамена'тельность իւ· *կարևորություն, նշանավորություն, նշանակալից լինելը*:

знамена'тельный *կարևոր, նշանակալից, նշանավոր, կարևորություն ունեցող*:

зна'мение *նշան, հատկանիշ, նշանակ, դրոշմ, կնիք*· — чуде'сное *հրաշք*:

знамени'тость իւ· *հռչակավորություն, ականավորություն, համբավավորություն*· она знаменитость *նա հռչակված է, նա հռչակավոր դեմք (ուժ) է*:

знамени'тый *հռչակավոր, համբավավոր, ականավոր*:

знамённый *դրոշի, դրոշային*· — пост *դրոշի պոստ, դրոշապոստ, դրոշի պահակ*· — ое дре'вко *դրոշակոթ, դրոշարուն*:

знаменова'ть (— ну'ю, — ну'ешь, — ну'ют) 1· *նշանակել, արտահայտել*· 2· *հավերժացնել*:

знаменосец (— сца), **знамёнщик** *դրոշակիր, դրոշակիակիր*:

зна'мя (hոգն· — мёна, — мён) *դրոշ, դրոշակ*· изме'на зна'мени *դրոշադրժում, դրոշին դրժելը, դրոշին դավաճանելը, դավաճանում դրոշին*· освяще'ние зна'мени *դրոշօրհնեք*· призыва'ть под знамёна *դրոշների տակ կոչել, դրոշների տակ հրավիրել*· салютова'ть знамёнами *դրոշներով վողջունել*:

зна'ние *դիտություն, դիտելիք, դիտենալը, իմանալը*· — дела *դործի մասցություն, դործին ծանոթ լինելը*· — поверхностное *մակերեսային դիտելիք*:

зна'тно *ժող*· *նկատելիորեն, աչքի ընկնող կերպով, լավ*:

зна'тность իւ· *հռչակավորություն, ականավորություն, աչքի ընկնելը, մեծաղարմություն*:

зна'тный *հռչակավոր, ականավոր, մեծաղարմ*· — человек, — родом *մեծաղարմ, տոհմիկ մարդ*:

знато'к (— тока') *դիտակ, իրաղեկ, հմուտ, լավ ծանոթ, քաջածանոթ*:

знать I *իմանալ, դիտենալ, ճանաչել*· я его знаю! *յես նրան ճանաչո՛ւմ եմ*· *յես դիտեմ, նա ի՛նչ պատուղ է*· он зна'ет, где ра'ки зиму'ют *նա իր բանը չատ լա՛վ դիտե, նրան չես խաբի*· заранее знать *նախորոք իմանալ*· дать знать *իմաց տալ, տեղեկացնել*· а кто его знает! *ո՛վ դիտե, ի՛նչ իմանաս*· дать себя' знать *իրեն դուշ տալ*· знать в глаза *անձամբ ճանաչել, աչքով տեսած լինել*· знать не знаю! *բոլորովին չեմ ճանաչում, ամենևին տեղեկություն չունեմ, չեմ եղ ուղում ճանաչել*:

знать իւ· II *ավագանի, բարձր դաս, աղնվականություն, արիստոկրատիա*:

знать! *ինչպես յերևում է, ուրե՛մն*:

зна'ться *մի մեկի հետ ճանաչել, ծանոթություն պահպանել, ծանոթ լինել*:

зна'ха'рка *վհուհի, կախարդուհի, դրքագուհի*:

зна'ха'рство *վհուհություն, կախարդություն, դրքագություն*:

зна'ха'рь ա· կախարդ, դրբաց, վհուկ:
значе'ние նշանակութիւն, կարևորութիւն. — преде'льное առհմանային նշանակութիւն. — приблизи'тельное մոտաւոր նշանակութիւն:
значи'тельно բավականաչափ, զգալիորեն, նշանակալիորեն, զգալի չափով:
значи'тельность ի· կարևորութիւն, նշանակալիութիւն, բավականաչափ լինելը:
значи'тельный բավականաչափ, զգալի, կարևոր, նշանակալի. — ое большинство զգալի մեծամասնութիւն:
зна'чить նշանակութիւն ունենալ, նշանակել. значит նշանակում է, ուրեմն, հետևապես. вот что значит не слушаться! ահա՛ թե ինչ է նշանակում չլսել. это ничего не значит այդ վոչինչ չի նշանակում. значит, вы согласны ուրեմն, դուք համաձայն եք:
зна'читься համարվել, լինել, հիշատակվել. значиться в списке ցուցակում լինել, ցուցակում հաշվվել:
значо'к (— чка') նշան, նշանակ:
зна'ющий (— ая, — ее) իմացող, գիտակ, իրազեկ, տեղյակ:
зноби'ть (— блю', — би'шь, — бя'т) մրսեցնել, սառցնել, ցրտահար անել. меня' зноби'т ինձ մրսում եմ, դողդողում եմ, մարմինս դողում է.
зной տոթ, տապ, շոգ:
зно'йкий (— ая, — ое) տոթային, շոգ:
зно'йный տոթակեզ, սաստիկ շոգ, տոթ, կիզիչ. — день տոթ որ:
зоб կոնատք, քուլլ, խածի. рвот. խպիպ, ուռուցք:
зоба'тый, зоба'стый մեծակոնատք, մեծախածի, խոխոպավոր:
зов կոչ, կանչ; հրավեր:
зодиа'к կենդանակերպ, գոդիակ:
зодиака'льный կենդանակերպի, գոդիակի:
зо'дческий (— ая, — ое) ճարտարապետական:
зо'дчество ճարտարապետութիւն:
зо'дчий ճարտարապետ:
зол տես злой.
зола' մոխիր:
золо'вка տալ (երկկի քուլրը, մարդի քուլրը):
золота'рь ա· վոսկերիչ, վոսկեգործ. նեզն. արտաքնոց մաքրող:
золоти'льный վոսկեզոծման, վոսկեզոծելու:
золоти'льщик վոսկեզոծիչ, վոսկեչրիչ:
золоти'стый վոսկե, վոսկեգույն, վոսկեվայլ:
золоти'ть (— лочу', — лоти'шь, — тя'т) վոսկեզոծել, վոսկեչրել:
золоти'ться (— лочу'сь, — лоти'шься, — тя'тся) վոսկեզոծվել, վոսկեչրվել:
золотни'к 1· մսխալ. 2· մղակ (չորեմեքենայի), սողնակ. привод золотника մղակի բանեցում:
золотнико'вый 1· տեխն. մղակի, մղակային. 2· մսխալանոց, մի մբսխալ ծանրութեամբ:
зо'лото վոսկի. — листовое թերթոսկի. — красное պղնձախառն վոսկի. — матовое փայլատ վոսկի. — накладное մակաղիր վոսկի. — поддельное կեղծ վոսկի, կեղծոսկի. — пробное հարգավոր վոսկի, հարգորոշված վոսկի. — промывное լվացական վոսկի. — самородное բնածին վոսկի. — сусальное թիթեղոսկի, վարագոսկի. — червонное չերվոն վոսկի, կարմիր վոսկի — в слитках ձուլլ վոսկի, ձուլոսկի. блеск золота վոսկու փայլ. добыча золота վոսկու հանույթ, վոսկու արդյունահանում. проба золота վոսկու հարդ. не все то золото, что блести'т ամեն պսպղուն բան վոսկի չե. рубль золотом մեկ ռուբլի վոսկի փողով. золото моё! հոգյա՛կս, ապրո՛ւս:
золото'й 1· վոսկե, վոսկյա, վոսկեղեն, վոսկի. 2· հրաշալի, սքանչելի, անզուգական. 3· վոսկի (10 ռուբլիանոց). — человек սքանչելի մարդ, վոսկի մարդ. — век վոսկեդար. — ая валюта վոսկե արժույթ, վոսկե վալյուտա. — ое руно վոսկեգեղմ, վոսկե գեղմ. золотых дел мастер վոսկերիչ, վոսկեգործ. — ые прииски վոսկու հանքեր:
золотоиска'тель ա· վոսկեխույզ:
золотоно'сный վոսկեբեր. — ая жила վոսկեբեր յիրակ:
золотообре'зный վոսկեհատած:
золотопромы'шленник վոսկի արդյունաբերող:

золоторо'тец (— тца) գռեհկ. *թախտաձիրկին, չրմոլիկ, բոսյակ*։
золототы'сячник բուս. *տերեփուկ, դեղնալեղի*։
золотошве'йка *վոսկեկարուհի*։
золотошве'йный *վոսկեկարչի, վոսկեկարական*։ — — ая мастерска'я *վոսկեկարական արհեստանոց*։
золоту'ха *դեղձախտ*։
золоту'шный *դեղձախտի, դեղձախտային, դեղձախտավոր*։
золоче'ние *վոսկեզոծում, վոսկեզոծելը, վոսկեկրում, վոսկեկրելը*։
золочёный *վոսկեզոծ, վոսկեզոծած, վոսկեկրած*։
зо'лушка 1. *մրխրատ, մնջոտ*. 2. *Մոխրատիկ* (հեքիաթներում)։
зо'льный *մոխրի*։
зо'на *գոտի*։
зонд *զոնդ, մխան*։
зонди'рование 1. *զոնդում, մխանում, զոնդելը, մխանելը*. 2. *փորձում, չոշափում, փորձելը, չոշափելը*։
зонди'ровать (— рую, — руешь, — руют) 1. *զոնդել, մխանել*. 2. *փորձել, չոշափել*. зондировать почву *հողը չոշափել*։
зонт 1. *հովանոց*. 2. տեխն. *գլխանոց, ծածկոց, վահանակ*։
зо'нтик 1. տես **зонт**. 2. բուս. *հովանոցածաղիկ*։
зо'нтичный 1. *հովանոցի, հովանոցաձև, հովանոցավոր*. 2. բուս. *հովանոցածաղկի*։
зоогра'ф *զոոգրաֆ, կենդանեղիր*։
зоогра'фия *կենդանեղրություն, զոոգրաֆիա*։
зоографи'ческий (— ая, — ое) *զոոգրաֆիական, կենդանեղրական*։
зоопо'г *կենդանաբան*։
зоологи'ческий (— ая — ое) *կենդանաբանական*. — сад *կենդանաբանական այգի*։
зоопо'гия *կենդանաբանություն*։
зооморфи'зм *զոոմորֆիզմ, կենդանակերպություն*։
зоопа'рк տես **зоологический сад**.
зоотера'пи'я *կենդանաբուժություն*։
зооте'хника *զոոտեխնիկա, կենդանաբուծություն*։
зоофи'т *զոոֆիտ, կենդանաբույս, կենդանաոտունկ*։
зоохими'ческий (— ая, — ое) *կենդանաքիմիական*։
зоохи'мия *կենդանաքիմիա, զոոքիմիա*։
зо'ренька, зо'рька, зо'рюшка *գեղեցիկ արշալույս, գեղեցիկ վերջալույս*. տես **заря'**.
зо'ркий (— ая, — ое) *արատես, սուր*. — глаз *արատես աչք, սուր աչք*։
зо'рко *աչալրջորեն, աչալուրջ կերպով, արատեսորեն*. следить зорко *աչալուրջ հետևել, ուշադրությամբ հետևել*։
зо'ркость ի. 1. *արատեսություն*. 2. *աչալրջություն*։
зо'ря' տես **заря'**.
зра'зы հ. *զրագա* (կերակուր)։
зрачо'к (— чка') *բիբ*։
зре'лище *տեսարան, տեսլարան*։
зре'лость ի. 1. *հասունություն*. 2. *արբունք, չափահասություն*. аттестат зрелости *հասունության վկայական*. — половая *սեռական արբունք*։
зре'лый *հասուն, հասած, չափահաս*. — во'зраст *հասուն տարիք, չափահաս տարիք*։
зре'ние I *տեսողություն, տեսանելիք*. — острое *սուր տեսողություն*. — плохо'е *վատ տեսողություն*. обмен зрения *տեսախարություն*. по'ле зрения *տեսադաշտ, տեսողության դաշտ*. точка зрения *տեսակետ, հայեցակետ*։
зре'ние II *հասունացում, հասունանալը, հասնելը*։
зре'ть I (зре'ю, — ре'ешь, — ре'ют) *հասնել, հասունանալ*։
зреть II (зрю, — ришь, — рят) *տեսնել, մտիկ տալ, մտիկ անել*։
зри'тель ա. *հանդիսատես, հանդիսական*. быть зри'телем *հանդիսատես լինել*։
зри'тельница *հանդիսատեսուհի*։
зри'тельный *տեսողական, տեսողության*. — зал *հանդիսարան, հանդիսադահլիճ*. — ая сила *տեսողական ուժ*. — ая труба' *դիտակ, հեռադիտակ*. — ая память *տեսողական հիշողություն*. — ое представле'ние *տեսողական պատկերացում*։
зря *զուր, ավելորդաբար, անհիմն կերպով*. он зря говорит *նա ավելորդ է խոսում, նա հենց այնպես է խոսում, նա զուր է խոսում*։
зря'чий (— ая, — ее) *տեսնող, տեսունակ*։
зря'шный *զուր, անտեղի, ավելորդ*.

— ое дело *գործ բան, ավելորդ գործ, ունայն գործ*։

ЗСФСР (Закавказская Социалистическая Федеративная Советская Республика) *ԱՍՖԽՀ (Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն)*։

зуа́в *զուավ (ժողովուրդ)*։

зуа́вский (— ая, — ое) *զուավական, զուավների*։

зуб 1. (*հոգն.* — бы, — бо́в) *ատամ (կենդանու)*. 2. (— бья, — бьев) *ատամ (գործիքի և այլն)*. — пилы *սղոցատամ, սղոցի ատամ*. — коренной *աղորիք, սեղանատամ*. — молочный *կաթնատամ*. — передний *կտրիչ (ատամ)*. — мудрости *իմաստության ատամ*. положить зубы на полку *քաղցած մնալ, բերանը քամուն բռնել*. скалить зубы *ատամները բաց արած ծիծաղել, հրոհոտալ, սեպելը բաց անել*. точить зубы *ատամները սրել (մեկի վրա)*. ни в зуб толкнуть *վոչինչ չի հասկանում*. зуб за зуб *ատամի փոխարեն ատամ, ատամն ընդ ատաման*. зубы заговорить տես **заговорить**. скрежетать зубами *ատամները կրճել, ատամները կրճատացնել*։

зуба́рь ա. տեխն. *ատամնավոր ռանդա*։

зуба́стый *մեծատամ, չատատամ*. պտկր. *կռվարար, կծան, լեղիանի*։

зубе́ц (— бца́) *ատամ, ատամնիկ*։

зуби́ло տեխն. *հատիչ, կտրիչ, դուր (մետաղ կտրելու համար)*։

зубно́й *ատամի, ատամնային*. — порошок *ատամնափոշի*. — ая боль *ատամնացավ*։

зу́бно - губно́й *հոգն. ատամնաշրթնային*։

зубовраче́бный *ատամնաբուժական*. — кабинет *ատամնաբուժական կաբինետ*. — ое искусство *ատամնաբուժություն*. — ая наука *ատամնաբուժական գիտություն, ատամնաբուժություն*։

зубоврачева́ние *ատամնաբուժում, ատամները բժշկելը*։

зубодёр *ատամնահան, ատամ քաշող*. գռեհկ. *բիթուպտուննկ ջարդող, բերան ջարդող ը*

зубоска́л, зубоска́лка *քրքջացող, հռհռացող, ծաղրող, ծաղր անող*։

зубоска́лить *հռհռալ, քրքջալ, ծաղրել, ծիծաղել (մեկի վրա)*։

зубоска́льство *ծաղրում, ծանակում, ծաղրելը, ծանակելը*։

зуботы́чина *ապտակ, հարվածի (բերանին)*։

зубо́к (— ка́), **зубо́чек** (— чка) *ատամնիկ, փուշ*։

зубочи́стка *ատամփորիչ, ատամմաքրիչ*։

зубр *վայրի ցուլ, բիզոն*. պտկր. *ջանամար, դաշան*։

зубрёжка, зубре́ние *անգիր անելը, սերտում, սերտելը*։

зубри́лка, зубри́ло տես **зубило**.

зубри́ть *անգիր անել, սերտել*։

зубча́тый *ատամնավոր*. — ая желе́зная дорога *ատամնավոր յերկաթուղի*. — ое колесо *ատամնավոր անիվ, ժանանիվ*։

зу́бчик տես **зубе́ц**.

зуд *քոր, մրմուռ, մարմաջ*։

зуде́ть *քոր գալ, մրմռալ*. зудит *քոր է գալիս*։

зуди́ть (зужу́, зу́дишь, — дят) 1. *ղրդռել, ջղայնացնել*. 2. *կրկնել, սերտել*։

зулу́с *զուլուս (ժողովուրդ)*։

зумф *հանիf*. *ջրափոս, ջրարկղ, ջրատաշտ*։

зурна́ *զուռնա*։

зы́бка տես **колыбе́ль**.

зы́бкий (— ая, — ое) 1. *յերերուն, ճոճուն, ճկուն չարժուն*. պտկր. *զիջող, տատանվող*. 2. *ճահճային*։

зы́бкость *ի*. *ճոճունություն, անհաստատություն, յերերունություն, ճկունություն*։

зыбу́чий (— ая, — ее) տես **зы́бкий**.

зыбь *ի*. 1. *ալեկոծություն, ալեծածանություն, ալիքները, ծփանք*. 2. *ճահճոտ գետին, ճահճուտ*. — лёгкая *թեթև ալեծածանություն*. — мёртвая *մեռյալ ալեծածանություն*։

зыря́нин (*հոգն.* — ря́не, — ря́н) *զիրյան (ժողովուրդ)*։

зыря́нка *զիրյանուհի*։

зыря́нский (— ая, — ое) *զիրյանական*։

зы́чность *ի*. *հնչունություն, հնչեղություն, բարձրաձայնություն*։

зы́чный *հնչուն, հնչեղ, բարձրաձայն, աղմկալի, աստկաձայն*։

зюзю'кать *թոթռալել, թլվատ լեզվով խոսել· պտկր· կոնծել, «դցել»:*
зю'зя *խոսկց· թրջված մարդ, «մուկ» դարձած մարդ· պտկր· դինու տիկ (հարբած մարդ):*
зюйд *ծով· հարավ, հարավային քամի:*
зюйдве'стка *ղուլդվեստկա, անջրանցիկ գլխարկ:*
зю'йдовый *հարավային, հարավային քամու:*
зя'бкий (— ая, — ое) *մրսկան, մրսող·* — человек *մրսկան մարդ, մրսուկ:*
зя'бкость *f· մրսկանություն, պաղածություն, սառածություն:*
зя'блевая вспашка *աչնանային վար, աչնանային վար, աչնան հերկ:*
зя'блик *կենդ· սերինոս (սարեկի տեսակը):*
зя'блый *սառած, ցրտահար, ցուրտը տարած:*
зя'бнуть (անց· — зяб, — бла) *սառել, մրսել, ցրտահար լինել:*
зябь *f· աչնանային վար, աչնանային, աչնան հերկ:*
зятёк (— тька') *փեսայիկ:*
зя'ть (հոգն· зятья', — те'й, — тёв и зятевья', — тевье'в) *ա· փեսա:*
зя'тюшка *սիրելի փեսա, փեսայիկ:*

И

И, и *f, ֆ:*
и 1· *և, նաև·* 2· *ել, ևս·* и я приду' *յես ել կգամ·* я и не хотел... *յես չեյի ել ուզում...* иногда и специали'ст ошиба'ется *յերբեմն մասնագետն ել սխալվում է·* 3· *թե', թե'..., և', և'...* и тот и другой *թե' մեկը, թե' մյուսը·* 4· *թեև·* и хочу я, да не могу этого сде'лать *թեև ուզում ել եմ, բայց չեմ կարող այդ անել·* 5· *նույնիսկ, մինչև անգամ·* я даю ему и тысячу, и две, а он не берёт *յես նրան նույնիսկ հազար, նույնիսկ յերկու հազար եմ տալիս, բայց նա չի վերցնում·* 6· *ուստի, հետևապես, ուրեմն·* он обещал и сделает *նա խոստացել է, ուրեմն կանի յել·* 7· *առանց այդ ել, առանց դրան ել* он и так обеспечен *նա առանց այդ ել ապահովված է:*
иафети'ческий (— ая, — ое) *տես* **яфети'ческий.**
ибери'ец (— и'йца) *իբերիացի:*
ибери'йка *իբերուհի:*
ибери'йский (— ая, — ое) *իբերական:*
Ибе'рия *աշխգր· 1· Իբերիա (Սպանիա). 2· Իվերիա (Վրաստան):*
и'бис *կենդ· իբիս, նեղոսահավ:*
и'бо *քանի որ, որովհետև:*
и'ва *ուռ, ուռենի·* — плакучая *վարսավոր ուռենի, սգավոր ուռենի·* — корзиночная *ճլուռ·* — ломкая *դյուրաբեկ ուռենի:*
Ива'н *Իվան, Ոհան, Հովհաննես:*
Иван - да - Марья *բուս· կովկորեն, լորահատիկ, յեռագույն մանուշակ, զառ-մանուշակ·* — червяк *կենդ· լուսատատիկ, լուսաճճի, կայծոռիկ:*
ива'новская: кричать во всю ивановскую *բարձր բղավել, ամբողջ ձայնով դոռալ·* пить во всю ивановскую *լա'վ խմել, կոնծել:*
ивня'к 1· *ուռուտ·* 2· *ուռի փայտ:*
и'вовый *ուռի..., ուռենու, ուռենուց լինած:*
и'волга *կենդ· պիրոլ (յերդիչ թռչուն):*
игла' 1· *ասեղ, մախաթ, մախաթասեղ, միլ·* 2· *փուչ·* 3· *վարսոց·* 4· *կենդ· ասեղնաճուկ, ծովասեղ·* — зажига'тельная *վառիչ ասեղ, լուցասեղ:*
игли'стый *փշոտ, փշապատ, փշավոր, փշաչատ, ասեղնավոր:*
иглова'тый, иглообра'зный *ասեղնաձև, ասեղանման, փշաձև:*
иглоко'жий (— ая, — ее) *փշամորթ:*
игнори'рование *անտեսում, անդիտացում, անտեսելը, անդիտանալը, հաշվի չառնելը:*
игнори'ровать (— рую, — руешь, — руют) *անտեսել, անդիտանալ, հաշվի չառնել:*
и'го *լուծ:*
иго'лка *տես* **игла'.** сидит как на иголках *կարծես փշի վրա նստած լինի:*
иго'лочка *ասեղիկ, ասղիկ·* с иголочки *նոր, նոր կարած, բոլորովին նոր, նորաձև:*
иго'лочник *ասեղ չինող, ասեղ ծախող:*
иго'лочный *տես* **иго'льный.**

иго́льник *ասղաման, ասղատուփ:*
иго́льный *ասղի, ասեղի.* — ое ушко *ասղածակ, ասեղի ծակ:*
иго́льчатый *ասեղնաձեւ, ասեղնաձեւ.* — ое ружьё *ռազմ. ասեղնաձեւ հրացան:*
иго́льщик *ասղագործ, ասեղ չինող:*
иго́льщица 1. *ասղագործուհի.* 2. *ասղագործի կին:*
иго́рный *խաղի.* — дом *խաղատուն, խաղարան.* — притон *խաղորէջ, թղթախաղանոց:*
игра́ *խաղ, նվագ, նվագում, վերվերում (դինու և այլն).* — азартная *բախտախաղ, աղարտ խաղ.* — в карты *թղթախաղ.* — в жмурки *աչքակապուկ.* — в прятки *տափկնոցի (խաղ).* — на рояли *դաշնամուրի նվագ, դաշնամուրի նվագում, դաշնամուր նվագելը.* — биржевая *բորսախաղ.* — на разницу *տարբերախաղ, տարբերության վրա խաղալը.* — на словах (слов) *բառախաղ.* игра не стоит свеч *չարչարանքին չարժե, քաշած նեղությանը չարժե:*
игра́льный *խաղի, խաղալու.* — ые карты *խաղաթուղթ:*
и́граный *խաղացած, խաղացված.* — ая пьеса *խաղացված պիես.* — ые карты *գործածված խաղաթուղթ:*
игра́ть 1. *խաղալ.* 2. *նվագել.* игра́ть чем-либо *մի բանով խաղալ.* — с кем-либо *մեկի հետ խաղալ.* — во что-либо *մի բան խաղալ.* — на что-либо *մի բանի վրա (մի բանով) խաղալ.* — в шахматы *շախմատ խաղալ, ճատրակ խաղալ.* — на скрипке, — на флейте *ջութակ, ֆլեյտա նվագել.* — на деньги *փողի վրա (փողով) խաղալ.* — за деньги *վողով (վարձատրությամբ) խաղալ.* — по копейке *մի կոպեկով խաղալ, դրույքը մի կոպեկով խաղալ.* — на понижение (на бирже) *ինչոման վրա խաղալ, ինչոման նկատառումով խաղալ.* — кому-либо в руку *նպաստել մեկին, մեկի ջրաղացին ջուր լցնել.* играй назад *պտկր. հետ քաշվիր, նահանջի՛ր, նահանջ նվագի՛ր.* румянец играет у него на щеках *նրա թշերը կարմրությունից վառվում են, կարմրությունը կաթում է նրա այտերից.* волны играют на море *ալիքները խաղում են ծովի յերեսին, ծովը ծփում է.* судьба играет человеком *ճակատագիրը խաղում է մարդու հետ.* вино играет *գինին փրփրում է, գինին յեփ է գալիս.* он хорошо играл простаков *նա լավ եր խաղում պարզամիտ մարդկանց դերերը:*
игри́во *ժրաջան, աշխուժորեն, կայտառորեն:*
игри́вость ի. *ժրություն, աշխուժություն, կենսուրախություն, կայտառություն, խաղլիկություն, խաղունություն, խաղացկանություն:*
игри́вый *ժիր, աշխույժ, կայտառ, խաղուն, խաղլիկ, խաղացկան.* — ое воображение *աշխույժ յերեվակայություն:*
игри́стый *յեռացող, փրփրակալած, փրփրուն:*
игро́к *խաղացող, նվագող:*
игру́н *չարաճճի, կատակաբան, խաղասեր:*
игру́нья *չարաճճուհի, կատակաբանուհի, խաղասիրուհի:*
игру́нка կենդ. *խաղկան (կապիկ):*
игру́шечка *փոքրիկ խաղալիք:*
игру́шечный *խաղալիքի, խաղալիքային:*
игру́шка *խաղալիք.* պտկր. *խաղուպար:*
игуа́на կենդ. *իգուան (մողես):*
игу́мен *վանահայր:*
игу́менья *վանամայր, մայրապետ:*
идеа́л *իդեալ:*
идеализа́ция *իդեալականացում, իդեալականացնելը:*
идеализи́ровать (— рую, — руешь, — руют) *իդեալականացնել, իդեալացնել:*
идеали́зм 1. *իդեալիզմ.* 2. *դաղափարականություն:*
идеали́ст 1. *իդեալիստ.* 2. *դաղափարական մարդ:*
идеали́стка 1. *իդեալիստուհի.* 2. *դաղափարական կին:*
идеалисти́ческий (— ая, — ое) *իդեալիստական:*
идеа́льно 1. *իդեալականորեն, իդեալապես, յերևակայաբար.* 2. *դերազանցորեն, կատարյալ կերպով:*
идеа́льность ի. *իդեալականություն, դաղափարականություն, յերևակայականություն, դերազանցություն:*
идеа́льный 1. *իդեալական, կատա-*

ըյալ, գերաղանց. 2. յերևակայական:

иде'йно *իդեապես, գաղափարապես:*

идейность 1. *իդեականություն, գաղափարայնություն.* 2. *գաղափարականություն:*

иде'йный 1. *իդեական, գաղափարային.* 2. *գաղափարական.* — **коммунист** *գաղափարական կոմունիստ:*

идентифика'ция *նույնացում, նույնացնելը:*

идентифици'ровать (— рую, — руешь, — руют) *նույնացնել:*

иденти'чность *f.* *նույնություն:*

иденти'чный *նույնական:*

идеогра'фия *գաղափարագրություն, իդեոգրաֆիա:*

идео'лог *իդեոլոգ, գաղափարախոս:*

идеологи'ческий (— ая, — ое) *իդեոլոգիական, գաղափարախոսական:*

идеоло'гия *իդեոլոգիա, գաղափարախոսություն:*

иде'я *իդեա, գաղափար.* **ассоциация идей** *գաղափարների զուգորդում:*

идилли'ст *հովվերգու, իդիլլիստ:*

идилли'ческий (— ая, — ое) *հովվերգական:*

иди'ллия *հովվերգություն, իդիլլիա:*

идио'м, идио'ма *լեզվի առանձնահատկություն, բարբառ, իդիոմ:*

идиомати'зм *իդիոմատիզմ, լեզվական առանձնահատկություն:*

идиомати'ческий (— ая, — ое) *իդեոմատիկ, լեզվահատկական:*

идиосинкрази'я *իդիոսինկրազիա (անդիմադրելի համակրություն կամ հակակրություն):*

идио'т *ապուշ, իդիոտ.* **идиот от рождения** *ի ծնե ապուշ, բնածին ապուշ:*

идиоти'зм *ապուշություն, իդիոտիզմ.* 2. *տես* **идиоматизм.**

идиотико'н *բարբառական բառարան, բարբառարառարան:*

идиоти'ческий (— ая, — ое) *իդիոտային, ապուշ (ած.), ապշային:*

идио'тский (— ая, — ое) *իդիոտական, ապուշի:*

идио'тка *ապշուհի, իդիոտուհի:*

идио'тство *ապուշություն, իդիոտություն:*

и'дишь *լիդիշ, գերման-հրեերեն:*

и'дол *կուռք:*

идолопокло'нник *կռապաշտ:*

идолопокло'нница *կռապաշտուհի:*

идолопокло'нический (— ая, — ое) *կռապաշտական:*

идолопокло'нничество, идолопокло'нство, идолослуже'ние *կռապաշտություն:*

идолослужи'тель *ա.* *կռապաշտավոր, կռապաշտ:*

идолослужи'тельница *կռապաշտավորուհի, կռապաշտուհի:*

и'дольский (— ая, — ое) *կռքի:*

идти' *տես* **итти.**

и'ды *f.* *իդոսները (մարտի, մայիսի, հուլիսի, հոկտեմբերի 15-ը և մնացած ամիսների 13-ը հռոմայեցիների մոտ):*

Иего'ва *Յեհովա:*

иезуи'т *յեզվիտ, ճիզվիթ:*

иезуити'зм *յեզվիտություն, ճիզվիթություն, յեզվիտականություն:*

иезуи'тский (— ая, — ое) *յեզվիտական, ճիզվիթական.* — **о'рден** *յեզվիտական միաբանություն, յեզվիտների միաբանություն:*

Ие'на *աշխգր.* *Յենա:*

ие'на *յեն (ճապոն. դրամ):*

иера'рх *թեմակալ, հոգևոր պետ, քահանայապետ:*

иерархи'ческий (— ая, — ое) *թեմական, քահանայապետական.* 2. *յերարխիական, նվիրապետական:*

иера'рхия 1. *թեմ, քահանայապետություն.* 2. *յերարխիա, նվիրապետություն:*

иере'й (— ре'я) *քահանա, յերեց:*

иере'йский (— ая, — ое) *քահանայական:*

иеремиа'да *յերեմիական (վողբ):*

иерихо'нская труба' *յերիքովյան փող:*

иерогли'ф *գաղափարագիր, պատկերագիր, յերոգլիֆ:*

иероглифи'ческий (— ая, — ое) *գաղափարագրական, պատկերագրական, յերոգլիֆային:*

иеродиа'кон *կուսակրոն սարկավագ:*

иеромона'х *աբեղա, կուսակրոն քահանա:*

иждиве'нец (— нца). *խնամատու (մեկի ծախսով ապրող):*

иждиве'нка *խնամատուհի (մեկի ծախսով ապրող).* **он иждивенец отца** *նա հոր ծախսով է ապրում, նա հոր խնամատուն է:*

иждиве'ние *ծախս, խնամք, ապ-*

բուստ· на своём иждивении *իր ծախսով, իր խնամքի տակ*:

и'же 1· *որ, որը* (*դերանուն*)· 2· *ռուսական այբուբենի 9-րդ տառը* (и)։

и'жица *ռուս*· *հին այբուբենի վերջին տառը* (V)։

находи́ться (— ожу́сь, — о́дишься, — дятся) 1· գտնվել, լինել, կենալ· 2· չչփոթվել, իրեն չկորցնել· не найдётся-ли у него? չի՞ գտնվի արդյոք նրա մոտ, արդյոք նա չի՞ ունենա· находиться под подозрением կասկածի տակ լինել, կասկածի տակ գտնվել· — под судом դատի տակ գտնվել, դատի տակ լինել· он нашёлся и ответил նա տակը չմնաց և պատասխանեց· он не нашёлся что ответить նա չիմացավ ինչ պատասխանի:

наха́дка դյուտ, գտնված իր· бюро находок դյուտերի բյուրո· это для него находка այդ նրա համար գյուտ է:

наха́дчивость ի· ճարտարամտություն, հնարագիտություն, ճարպիկություն, հնարամտություն:

наха́дчивый ճարտարամիտ, հնարագետ, ճարպիկ· — ответ ճարպիկ պատասխան, ճարտար պատասխան:

на ходу́ ընթացքում, ընթանալիս, գնալու ժամանակ, աշխատելիս, բանելիս:

находя́щийся (— щаяся, — щееся) գտնվող, յեղող:

нахожде́ние գտնելը, գտնվելը, լինելը:

нахола́живать, нахолоди́ть (— ожу́, — оди́шь, — дя́т) սառեցնել, սառցնել, պաղեցնել, հովացնել:

наха́хливаться, наха́хлиться փետուրները ցցել, փշաքաղվել:

нахохота́ться (— очу́сь, — о́чешься, — чутся; հրմ· — очи́сь) կուշտ ծիծաղել, ծիծաղելուց կչտանալ, հոհոալ, քրքջալ:

нахра́пом զոռով, բռնությամբ, բռնաբար, վրա տալով:

нац = национа́льный.

нацара́панный ճանկռված, ճանկռոտված, խղդված։
нацара́пать, нацара́пывать ճանկռել, ճանկռոտել, խղդել։
нацеди́ть (— ежу́, — еди́шь, — дя́т), **наце́живать** քամել, մզել, վորոշ քանակով քամել, վորոշ քանակով ածել, լցնել։
наце́ливаться, нацели́ться նշան բռնել, նպատակել։
нацелова́ться (— лу́юсь, — у́ешься, — у́ются) կուշտ համբուրել, պաչպչել։
нацепи́ть (— плю́, — е́пишь, — е́пят), **нацепля́ть** կախել, կախոտել, մեծ քանակով կախել։
национализа́ция 1. ազգայնացում. 2. պետականացում։
национализи́ровать (— рую, — руешь, — руют) 1. ազգայնացնել. 2. պետականացնել։
национали́зм նացիոնալիզմ, ազգայնականություն։
национали́ст նացիոնալիստ, ազգայնական։
национали́стка նացիոնալիստուհի, ազգայնականուհի։
национа́л - социали́сты ազգայնական սոցիալիստներ, նացիոնալ-սոցիալիստներ։
национа́льность թ. ազգայնություն, ազգություն։
национа́льный ազգային. — ое государство ազգային պետություն. — гимн ազգային հիմն, ազգային օրհներգ. — язык ազգային լեզու. — ая гвардия ազգային գվարդիա. — ая культура ազգային կուլտուրա, ազգային մշակույթ. — ое собрание ազգային ժողով. — ое самоопределение ազգային ինքնորոշում. — ое меньшинство ազգային փոքրամասնություն. — ые цвета ազգային գույներ։
на́ция ազգ, ազգություն. наиболее благоприятствуемая нация ամենից ավելի բարենպաստ պայմաններ ստացող ազգություն, ամենից բարենպաստավորվող ազգություն. — господствующая տիրող ազգություն։
нача́ло 1. սկիզբ, սկզբնավորություն. 2. սկզբունք. 3. իշխանություն. начала սկզբունքներ, հիմունքներ. с самого начала հենց սկզբից, հենց այն գլխից. быть под началом իշխանության տակ գտնվել. брать начало սկիզբն առնել, սկսվել. доброе начало пол дела откачало լավ սկիզբը գործի կեսն է. от начала до конца սկզբից մինչև վերջը. начала политической экономии քաղաքատնտեսության սկզբունքները. на кредитных началах վարկային հիմունքներով։
нача́льник պետ, իշխանավոր, մեծավոր. воинский — զինվորական պետ. — караула պահակապետ, պահակի պետ. — станции կայարանապետ, կայարանի պետ. — училища դպրոցի վարիչ, դպրոցի պետ։
нача́льница պետուհի, իշխանավորուհի, վարչուհի։
нача́льнический (— ая, — ое) պետի, իշխանավորի, իշխանավորական։
нача́льный սկզբի, սկզբնական, տարրական. — звук սկզբի հնչյուն, սկզբնահնչյուն. — ая буква գլխատառ, սկզբնատառ. — ая школа տարրական դպրոց. — ое образование տարրական կրթություն։
нача́льственный գլխապետական, մեծավորական, իշխանավորական, իշխանության։
нача́льство իշխանություն, գլխապետություն, հրամանատարություն. под начальством իշխանության տակ, հրամանատարության տակ, հրամանատարությամբ։
нача́льствовать (— ствую, — ствуешь, — ствуют) իշխանավոր լինել, իշխել, գլխապետել, գլխապետ լինել։
нача́тки (— тков) ա. տարերք, նախահիմքեր։
нача́точный տարերքային, նախահիմնական։
нача́ть (— чну́, — чнёшь, — чну́т; հրմ. — чни́) տես **начина́ть.**
нача́ться (— чну́сь, — чнёшься, — чну́тся; հրմ. — чни́сь) տես **начина́ться.**
начека́нивать, начека́нить կտրել (փող), մեծ քանակով կտրել (դրամ)։
на́ - чеку́ զգուշ, զգաստ, պատրաստ։
начёркать խազել, խաղմղել, գծանշել։
на́черно սև, սևագիր, վոչ մաքուր. написать — սևագիր պատրաստել, սևագրել։

наче́рпывание *հանելը (հեղուկ), հանելով ածելը, հանելով լցնելը, քաշում:*

наче́рпывать, наче́рпать *հանել (հեղուկ), հանելով ածել, հանելով լցնել, քաշել:*

начерта́ние 1· *գծագրում, ուրվագրում, ուրվագծում, գծագրելը, ուրվագրելը, ուրվագծելը.* 2· *հիմնագիծ, ուրվագիծ:*

начерта́тельный *գծագրական, ուրվագրական, ուրվագծական.* — ая геометрия *գծագրական երկրաչափություն.* — ое искусство *գծագրական արվեստ, գծարվեստ:*

начерта́ть, наче́ртывать *գծագրել, ուրվագրել, ուրվագծել:*

начерти́ть (— рчу́, — ртишь, — ртят), **наче́ртить** *գծել, գծագրել.* — план *պլան ուրվագծել, պլան նկարել:*

начеса́ть (— ешу́, — е́шешь, — е́шут; *հրմ.* — еши́), **начёсывать** 1· *սանրել, քրքրել, ղրել.* 2· *քերծել, քորելով առաջացնել:*

наче́сть (— чту́, — чтёшь, — чту́т; *հրմ.* — чти́; *անց.* — чёл, — чла́) *տես* **начи́тывать, насчи́тывать.**

начёт *պակասորդ, հաշվեպակասորդ.* сделать начёт на кого-либо *մեկի վրա պակասորդ դրել, պակասորդը մեկի վրա հաշվել, մեկի վրա պակասորդագրել:*

начётистый *անձեռնտու, վնասաբեր:*

на четвере́ньках *չորեքթաթ տալով, չորեքթաթ:*

на́четверо *չորս մասի, չորսի:*

начётчик 1· *գրակարդաց (առյանուսի յեկեղեցական գրքեր կարդացող), դպիր, տիրացու.* 2· *հաշվեստուգիչ, պակասորդը պարտք գրող, պակասորդագրող:*

начётчица 1· *գրակարդացուհի, դպրուհի, տիրացուհի.* 2· *հաշվեստուգչուհի, պակասորդը պարտք գրող կին, պակասորդագրուհի:*

начина́ние *սկսելը, ձեռնարկելը, սկսում, ձեռնարկում:*

начина́ть, нача́ть (— чну́, — чнёшь, — чну́т; *հրմ.* — чни́) *սկսել, ձեռնարկել.* — играть *նվագել սկսել, խաղալ սկսել.* — дело *գործ սկսել, գործի ձեռնարկել.* — действия *գործողություններ սկսել.* — кампанию за коллективизацию *կոլեկտիվացման պայքար սկսել.* — песню *յերգ սկսել.* — разговор *խոսակցություն սկսել.* — сражение *ճակատամարտ սկսել.* успешно начинать *հաջող սկսել, հաջողությամբ սկսել:*

начина́ться, нача́ться (— чну́сь, — чнёшься, — чну́тся; *հրմ.* — чни́сь) *սկսվել, ձեռնարկվել, սկիզբն առնել.* начинается! *սկսվե՛ց:*

начинённый *լցրած, խճողակած, խորիզած, խորիզով:*

начини́ть I, начиня́ть *լցնել, խճողակել, խորիզել:*

начини́ть II, начи́нивать *վորոշ քանակությամբ սրել, վորոշ քանակով կարկատել, սրել, կարկատել:*

нача́нка *լցվածք, խճողակ, խորիզ:*

начисле́ние *վորոշ քանակով հաշվելը, պարտքը դրելը, վրան հաշվելը, պակասորդագրելը:*

начи́слить, начисля́ть *վորոշ քանակով հաշվել.* — на кого-л. *մեկի վրա պարտք դրել, պակասորդագրել:*

на́чисто 1· *մաքուր, հստակ, խոտակ.* 2· *բացեիբաց, ուղղակի:*

начистоту́ *տես* **чистота́.**

начи́танность *թ.* *շատ կարդացած լինելը, բազմընթերցություն:*

начи́танный *շատ կարդացած, բազմընթերց.* — человек *կարդացած մարդ, բազմընթերց մարդ:*

начита́ть, начи́тывать *վորոշ քանակով կարդալ, շատ կարդալ, կարդալով դանել:*

начита́ться, начи́тываться *շատ կարդալ, կարդալուց կշտանալ.* *հեգն.* *խմաստությունը գրքերից քաղել.* — бульварных романов *բուլվարային վեպեր շատ կարդացած լինել:*

начто́! 1· *ինչի՞ համար, ինչո՞ւ.* 2· *շատ, խիստ.* начто уж он хладнокровен... *վորքան էլ նա սառնարյուն է...:*

начха́ть, начиха́ть *շատ փռշտալ, շատ վռնգտալ.* а мне — на него *թքել եմ նրա վրա:*

начуде́сить (— е́шу, — е́сишь, — сят; *հրմ.* — е́сь), **начуди́ть** (— чужу́, — ди́шь, — дя́т) *հիմարությունները անել, սարսարությունները անել, տարօրինակ բաներ անել, տարօրինակություններով զարմացնել:*

наш, наша, наше *մեր.* по-нашему

1. *մեր կարծիքով, ըստ մեր հայացքի.* 2. *մեր ճևով, մեր յեղանակով, ըստ մեր սովորութեան.* наш брат *մեզ պես մեկը, մեզ պեսը, մեր նմանները.* наша взяла *մենք տարանք, հաղթանակը մեր կողմն է, մերը հաղթանակեց.* служить нашим и вашим *յերկու կողմերին էլ ծառայել.* *թե նային խփել, թե մեխին:*

нашали'ть *չատ չարութիւն անել, չատ չարաճճիութիւն անել, անհամութիւն անել:*

нашаты'рный *անուշադրի, անուշադրային, անուշադրե.* — спирт *անուշադրի վոդի, անուշադրասպիրտ:*

нашаты'рь ա. *անուշադր:*

наше'дший (— ая, — ее) *դանողը, ով գտել է:*

нашепта'ть (— пчу', — пчешь, — пчут; հրմ. — пчи'), **нашёптывать** 1. *քչփչալ, փսփսալ, շշնջալ.* 2. *կախարդել, դյութել:*

нашеромы'жку *խաբեբայութեամբ, նենգորեն, ուրիշի հաշվին:*

наше'ствие 1. *արշաւանք, հարձակում.* 2. *իջում, իջնելը:*

наши (наш, наша, наше բառերի հոգնակին) *մերոնք, մեր:*

на'шивать տես **носи'ть.**

наши'ть (— шью', — шьёшь, — шью'т; հրմ. — ше'й), **нашива'ть** 1. *վրայից կարել, վրակարել, մակակարել.* 2. *վորոշ քանակով կարել, չատ կարել:*

наши'вка 1. *վրակար, մակակար.* 2. *վրայից կարելը, վրակարում, մակակարում, վրան կարելը:*

нашивно'й *մակակարովի, վրակարովի:*

нашко'ливать *սովորեցնել, վարժեցնել, մարզել, կրթել:*

нашлёпка *հարվածում, շրպպացնելը:*

нашлёпать, нашлёпывать *հարվածել, շրպպացնել:*

нашуме'ть (— млю', — ми'шь, — мя'т; հրմ. — ми') *աղմկել, դոռդոռալ, աղմուկ հանել:*

нашути'ться (— чу'сь, — шу'тишься, — у'тятся) *չատ կատակ անել, կուչտ կատակել, հանաք անել, կատակել:*

нащепа'ть (— па'ю, — па'ешь; նաև — еплю', — е'плешь, — плют; հրմ. — пли'), **нащепи'ть** (— щеплю', — щепи'шь, — пя'т; հրմ. — щепи') *ծղան անել, ծղանել, վորոշ քանակով ճեղքել, ճղոտել:*

нащу'пать, нащу'пывать *շոշափել, շոշափելով դտնել, ղժալ.* — путь *շոշափելով ճանապարհ դտնել, ճանապարհ փնտռել, ճանապարհ ըստնել:*

наэлектризова'ть (— зу'ю, — зу'ешь, — зу'ют) *էլեքտրականացնել:*

наяву' *արթուն ժամանակ, զարթուն, հարթմնի, իրականում:*

ная'да *նայադա, ջրալք, ջրահարս, ջրային հավերժահարս:*

не 1. *վոչ, չ, չի, չե, մի'.* 2. *ան, տ, ժ, դ* (*իբրև բացառական նախածանց*) *ած.* я не знаю *յես չդիտեմ.* не говори! *մի' ասի, մի' ասա.* я ничего не знаю *յես վոչինչ չդիտեմ.* разве вы этого не сказали? *միթե դուք այդ չասացի՞ք.* скажите ему, чтоб он не двигался *ասացեք նրան, վոր չշարժվի.* это не шутка *այս հանաք բան չե.* это не беда *այդ դժբախտութիւն չե, վնաս չունի.* дела обстоят не лучше *գործերն ավելի լավ չեն, գործերն ավելի լավ դրութեան մեջ չեն.* не меньше, чем... *վոչ պակաս, քան...* не впускать! *ներս մի' թողնեք, ներս չթողնե'լ.* не говоря ни слова *վոչ մի խոսք չասելով, առանց մի բառ արտասանելու.* не говоря уже о... *չխոսելով արդեն այն մասին...* мне не на что купить книгу *յես գիրք առնելու փող չունեմ.* ему было не по себе պտկր. *նա իրեն լավ չեր զգում.* я не могу не сказать *յես չեմ կարող չասել.* не только, но и *վո'չ միայն, այլև.* не то плакал, не то смеялся *չդիտես՝ լաց եր լինում, թե ծիծաղում:*

неадэква'тный *անադեկվատ, անհամապատասխան:*

неаккура'тный *անճշտապահ:*

неакти'вный *վոչ-ակտիվ, անգործուն, անաղդու:*

неаполита'нец (— нца) *նեապոլցի:*

неаполита'нка *նեապոլուհի:*

неаполита'нский (— ая, — ое) *Նեապոլի, նեապոլյան, նեապոլական:*

Неа'поль ա. *Նեապոլ:*

неаппети'тный *անախորժելի, վոչ-ախորժաբեր:*

небезвы'годный *վոչ–անոգտավետ, վոչ–անչահավետ:*
небезопа'сность *ի· անապահովություն, վոչ–անվտանգ լինելը:*
небезопа'сный *անապահով, վոչ–անվտանգ:*
небезызве'стный *վոչ–անհայտ, վոչ–անծանոթ, հայտնի:*
небелёный *չսպիտակացրած, չծեփած, չքրած:*
небережли'вый *չխնայող, անտնտես, չտնտեսող:*
небе'режно *անխնամորեն, անհոգատար կերպով, անզգուշաբար:*
небеса' *տես* **небо.**
небесноголубо'й *յերկնակապույտ:*
небе'сный *յերկնային, յերկնքի, յերկնավոր·* царство небесное *յերկնքի արքայություն, յերկնային թագավորություն·* царство ему небесное! *աստված հոգին լուսավորի՛·* — свод *յերկնակամար·* Небесная Империя *պատմ· Յերկնային Կայսրություն (Չինաստան)·* небесная механика *յերկնային մեխանիկա·* — ые светила *յերկնային լուսատուներ:*
небеспристо'йный *վոչ–անվայել, վոչ–անվայելուչ, վոչ–անպատշաճ:*
неблагови'дный *վոչ–վայելչատես, անբարետես, անվայելուչ:*
неблаговре'менный *անժամանակ, ապաժամ, ապաժամյա:*
неблагода'рность *ի· անշնորհակալություն, ապերախտություն, յերախտամոռություն:*
неблагода'рный *անշնորհակալ, ապերախտ, յերախտամոռ:*
неблагозву'чный *անբարեհնչուն, անները դաշնակ:*
неблагонадёжность *ի· անբարեհուսալություն, անվստահելիություն:*
неблагонадёжный *անբարեհույս, անվստահելի:*
неблагонра'вный *անբարեբարո, վոչ–աղնվաբարո:*
неблагополу'чный *անհաջող, դըժբախտ, չարաբաստիկ, ձախորդ· 2· անապահով:*
неблагопристо'йность *ի· անբարեվայելչություն, անվայելչություն, անպարկեշտություն:*
неблагопристо'йный *անբարեվայելուչ, անվայելուչ, անպարկեշտ:*
неблагоприя'тный *անբարենպաստ, անբարեհաճո:*
неблагоразу'мие *անխոհեմություն, վոչ–խելամտություն:*
неблагоразу'мный *անխոհեմ, վոչ–խելամիտ:*
неблагоро'дный *անազնիվ, անազնվաբարո:*
неблагоскло'нный *անբարեհաճ:*
нёбный *քմքի, քմային· — звук քմային հնչյուն, քմահնչյուն:*
нёбо *քիմք:*
не'бо (հոգն· небеса') *յերկինք· как небо от земли ինչպես յերկինքը յերկրից և հեռու, սար ու ձոր տարբերություն կա·* с неба, с небес *յերկնքից·* к небесам *դեպի յերկինք, յերկինք·* в небе, в небесах *յերկնքում·* попасть пальцем в небо *տես* **палец.** быть на седьмом небе *իրեն յոթերորդ յերկնքում զգալ, աշխարհով մեկ լինել·* превозносить до небес *յերկինք բարձրացնել, չատ գովել·* под открытым небом *բաց յերկնքի տակ, բացօթյա·* под чужим небом *ոտար յերկնքի տակ, ոտար աշխարհում·* ему небо с овчинку показалось *նրա լեղին պատրվեց, նա վախից սրտաճաք եղավ:*
небога'тый *վոչ–հարուստ, վոչ–ունևոր:*
небоеспосо'бный *անմարտունակ:*
небожи'тель ա· *յերկնաբնակ, յերկնաքաղաքացի:*
небожи'тельница *յերկնաբնակուհի, յերկնաքաղաքացուհի:*
небольшо'й *վոչ–մեծ, փոքր, պստիկ·* триста с небольшим *յերեք հարյուրից մի քիչ ավելի, յերեք հարյուրից մի քան ավելի:*
небосво'д *յերկնակամար, յերկնքի հաստատություն, հաստատություն յերկնից:*
небоскло'н *հորիզոն, յերկնակամար, յերկինք:*
небоскрёб *յերկնահաս, ամպահաս, ամպահերձ, յերկնաբերձ:*
небо'сь (не бойся–յի կրճատ ձևն ե) 1· *մի՛ վախենա, անհանգիստ մի՛ լինի, հանգիստ եղի՛ր·* 2· *յերևի, հավանորեն:*
небреже'ние *անփութություն, անհոգություն, անփույթ վերաբերվելը, անհոգ վերաբերվելը:*
небре'жно *անփութորեն, անհոգությամբ:*

небре'жность ի· անփութութիւն, անհոգութիւն:
небре'жный անփոյթ, անհոգ· — ое отношение անփոյթ վերաբերմունք, անհոգ վերաբերմունք· — ая работа անփոյթ աշխատանք· — ый стиль անփոյթ ոճ:
небыва'лый 1· չեղած, չպատահած, հնարած, սուտ· 2· անփորձ:
небыва'ло до'рого չլսված թանգ, չտեսնված թանգ, անասելի թանգ:
небыва'льщина, небыли'ца չեղած բան, հնարովի բան, մտացածին բան, հեքիաթ:
небытие' չգոյութիւն, չէութիւն:
небью'щийся (— аяся, — ееся) չկոտրվող, չջարդվող:
Нева' Նեվա:
нева'жно: дела идут — գործերը լավ չեն գնում· это неважно այդ կարեւոր չէ, այդ անկարեւոր է:
нева'жный անկարեւոր, աննշան:
невдалеке' վոչ-հեռու:
невдога'д, невдомёк: мне было — ես դիմի չէի ընկնում, ես չէի կարողանում հասկանալ, մտքովս չանցավ:
неве'дение անգիտութիւն, անտեղեակութիւն, չիմանալը· быть в неведении անտեղեակ լինել, անգիտակ լինել, չիմանալ:
неве'домый անծանոթ, անհայտ:
неве'домо: — куда (где и т. п.) հայտնի չէ, թե ուր (վորտեղ և այլն), անհայտ է, թե ուր (վորտեղ) է:
неве'жа ընդ· անտաշ մարդ, կոպիտ մարդ, բիրտ մարդ, անքաղաքավարի մարդ:
неве'жда ընդ· տգետ, անկիրթ մարդ, անուս մարդ:
неве'жественный տգետ, անուս:
неве'жество 1. տգիտութիւն· 2. կոպտութիւն, անքաղաքավարութիւն:
неве'жливо անքաղաքավարի կերպով, անտաշորեն, կոպտաբար:
неве'жливость ի· անքաղաքավարութիւն, անտաշութիւն, կոպտութիւն:
неве'жливый անքաղաքավարի, անտաշ, կոպիտ:
невели'чек невели'чка, վոքրիկ, պստիկ, պուճուրիկ:
неве'рие անհավատութիւն:
неве'рно անճշտորեն, սխալաբար, անստույգ կերպով· — датировать անճիշտ թվադրել, թվականը ճիշտ չնշանակել· — прочитать սխալ կարդալ:
неве'рность ի· անճշտութիւն, անստուգութիւն, անվստահելիութիւն, անհավատարմութիւն, սուտ:
неве'рный 1· անճիշտ, անստույգ, անվստահելի, անհավատարիմ, սուտ· 2· անհավատ, այլահավատ, այլակրոն· — друг անհավատարիմ ընկեր· — ый слух անստույգ լուր, սուտ լուր· — ый расчёт սխալ հաշիվ:
невероя'тно անհավանական, անհավատալի, անասելիորեն:
невероя'тность ի· անհավանականութիւն, անհավատալիութիւն:
невероя'тный անհավանական, անհավատալի, անասելի· — ое предположение անհավանական ենթադրութիւն:
неве'рующий (— ая, — ее) անհավատ, չհավատացող:
невесёлый անուրախ, տխուր, տրտում· мне невесело սիրտս ուրախ չէ, ես տխուր եմ, ես տրտում եմ:
невесо'мый անկշռելի· нечто невесомое անկշռելի բան:
неве'ста հարսնացու, նշանած, հատած աղջիկ· искать богатую невесту հարուստ հարսնացու փնտռել:
неве'стин (— а, — о) հարսնացուի, հարսնացվպատկան:
неве'стка հարս, նոր:
неве'сткин (— а, — о) հարսնապատկան, հարսի:
неве'сть (кто, что, куда և այլն) ով գիտե (ով, ինչ, ուր և այլն), հայտնի չէ, ինչ իմանաս (ով, ինչ, ուր և այլն):
невеще'ственный աննյութ, աննյութական, անիրեղեն:
невеще'ственность ի· աննյութականութիւն, անիրեղենութիւն:
невзачёт հաշվից ավելի, հաշվից դուրս, ավելաբար:
невзго'да դժբախտութիւն, տգեղ, ճախորդութիւն:
невзира'я չնայելով, չնայած, ուշադրութիւն չդարձնելով:
невзнача'й պատահմամբ, պատահաբար, անակնկալորեն, դիպվածաբար:
невзра'чно выглядеть անբարեեռե-

յերևալ, ոչեղ յերևալ, աննշան տեսք ունենալ:

невзра'чность ի· *անքարետեսություն, անգեղատեսություն, աննշան տեսք ունենալը:*

невзра'чный *անքարետես, անգեղատես, աննշան տեսք ունեցող:*

невзыска'тельность ի· *անպահանջկոտություն, անխստապահանջություն:*

невзыска'тельный *անպահանջկոտ, անխստապահանջ:*

не'видаль ի·, **невида'льщина** *չտեսնված բան, չեղած բան, զարմացք, արմանք բան.* вот —! *հեգն. կարծես մե՛ծ հրաշք ե, այ քե՛զ չտեսնված բան, ի՛նչ մի զարմացք բան ե:*

невиди'м, невиди'мка *ընդ.* 1· *աներևույթ բան, անտեսանելի.* 2· *մարդանուշ, անմարդամուտ.* шапка — *աներևույթ գդակ.* сетка — *աներևույթ ցանց, անտեսանելի ցանց.* шпилька — *նրբին հերակալ, նրբին հերկակալ, նրբին մազաքորոց:*

неви'димость ի. *անտեսանելիություն, աննշմարելիություն, աներևութություն:*

неви'димый *անտեսանելի, աննշմարելի, աներևույթ.* видимо - невидимо *անթիվ-անհամար, անտուտ ու անտակ:*

неви'дный *անտեսանելի, աննկատելի, անքարետես, աննշան:*

неви'нность ի· *անմեղություն, չքմեղություն, միամտություն, անարատություն.* — детская *մանկական անմեղություն, յերեխայական միամտություն:*

неви'нный *անմեղ, միամիտ, անարատ.* — ая ложь *անմեղ ստություն, միամիտ սուտ:*

невино'вность ի· *անմեղապարտություն, անպարտություն, անհանցապարտություն:*

невино'вный *անմեղապարտ, անպարտ, անհանցապարտ:*

невку'сный *անհամ:*

невменя'емость ի· *անմեղսադիտակություն, անմեղսադրելիություն:*

невменя'емый *անմեղսադիտակ, անմեղսադրելի:*

не в ме'ру *չափից վեր, չափից դուրս, անչափ:*

невмеша'тельство *չխառնվելը, չմիջամտելը, միջամուխ չլինելը:*

невмоготу', невмо'чь *ուժից վեր, կրողությունից բարձր, անտանելի.* это становится — *այդ ուժերից վեր բան է դառնում, այդ անտանելի է դառնում:*

невнима'ние *անուշադրություն, ուշադրություն չդարձնելը:*

невнима'тельно *անուշադրությամբ, անուշադիր կերպով:*

невнима'тельность ի· *անուշադիր լինելը, անուշադրություն:*

невнима'тельный *անուշադիր:*

невня'тно *անպարզապուր, անլսելի.* — говорить *անպարզապուր կերպով խոսել, անլսելի ձայնով խոսել:*

невня'тность ի· *անպարզապուրություն, անլսելիություն:*

невня'тный *անպարզապուր, անլսելի:*

не'вод (*մեծ*) *ուռկան,* (*մեծ*) *ցանց:*

невозбра'нный *անարգել, անխափան, թուլլատրված, չարգելված:*

невозврати'мый, невозвра'тный *անդարձ, անդառնալի, անվերադարձելի:*

невоздержа'ние *անժուժկալություն, անզսպություն:*

невозде'ржно *անժուժկալությամբ, անզսպորեն, անժուժկալաբար:*

невозде'ржность ի· *անժուժկալություն, անզսպություն:*

невозде'ржный *անժուժկալ, անզուսպ.* — на язык *լեզվից անզուսպ, ասանձարձակ լեզվով:*

невозмо'жно *անկարելիորեն, անհնարին կերպով.* невозможно глупый *անչափ տխմար, անասելի հիմար:*

невозмо'жность ի· *անկարելիություն, անհնարինություն.* в случае невозможности *անհնարինության դեպքում, հնար չեղած դեպքում:*

невозмо'жный 1· *անկարելի, անհնարին.* 2· *անտանելի, անասելի:*

невозмути'мо *անվրդով կերպով, անխռով կերպով:*

невозмути'мость ի· *անվրդովություն, անխռովություն:*

невозмути'мый *անվրդով, անխռով:*

невознагради'мый *անհատուցելի, անվերադարձ, անվերադարձելի:*

нево'лить *հարկադրել, ստիպել, բռնադատել:*

нево'льник *ստրուկ, գերի, կալանավոր:*

нево'льница *ստրկուհի, ծառուհի, կալանավորուհի.*:
нево'льнический (— ая, — ое) *ստրկական, ծառու*:
нево'льничество *ստրկութիւն, ծառութիւն*:
нево'льничий (— чья, — чье) *ստրկական, ստրկապատկան, ստրկի, ծառու, ծառվապատկան*:
нево'льно *ակամա, կամքի հակառակ, չուզելով*:
нево'льный 1· *անազատ*· 2· *ակամա*:
нево'ля *անազատութիւն, ստրկութիւն, ծառութիւն*· волей - неволей *կամա-ակամա*:
невообрази'мо *աներեւակայելիորէն*:
невообрази'мый *աներեւակայելի*:
невооружённый *անզէն, չզինված*· — ым глазом *պարզ աչքով, հասարակ աչքով, չզինված աչքով*:
невоспи'танность ի· *անկրթութիւն, անդաստիարակութիւն*:
невоспи'танный *անկրթ, անդաստիարակ, չդաստիարակված*:
невпопа'д *անպատեհաբար, անտեղի*:
невразуми'тельно *անհամոզիչ կերպով, անհասկանալիորէն*:
невразуми'тельный *անհամոզիչ, անհասկանալի*:
невралги'ческий (— ая, — ое) բուժ· *նյարդախտական*:
невралги'я բուժ· *նյարդախտ*· — лица *երեսի նյարդախտ*· — седалищного нерва *նստեզատեղի նյարդախտ*:
невраste'ник բուժ· *նեվրաստենիկ, թուլանյարդ, նյարդազար*:
неврастени'ческий (— ая, — ое) բուժ· *թուլանյարդային, նեվրաստենիկային, նեվրաստենիական, նյարդազարական*:
неврастени'я բուժ· *նեվրաստենիա, նյարդազարութիւն, թուլանյարդութիւն*:
невреди'мо *անվնաս կերպով, անվնասաբար*:
невреди'мость ի· *անվնասութիւն, անվնաս լինելը*:
невреди'мый *անվնաս, չվնասված*:
невре'дный *անվնասակար, չվնասող, անվնաս*:
неври'т բուժ· *նյարդատապ, նյարդի բորբոքում*:
невро'з բուժ· *նեվրոզ, նյարդայնութիւն*:
невро'зный *նեվրոզային, նյարդային*:
невроло'г *նյարդաբան, նյարդագէտ*:
невроло'гия *նյարդաբանութիւն, նյարդագիտութիւն*:
невропато'лог *նյարդախտաբան, նեվրոպատոլոգ, նյարդարուժ*:
невропатоло'гия *նյարդախտաբանութիւն, նյարդախտագիտութիւն, նյարդարուժութիւն*:
невро'тик *նեվրոտիկ (հիվանդ)*:
невроти'ческий (— ая, — ое) *նեվրոտիկական*:
не'вский *Նեվայի*· Н — проспект *Նեվայի պողոտա, Նեվայի հրապարակ*:
невтерпёж: мне невтерпёж *ինձ համար անտանելի է, չեմ կարող համբերել*:
невшате'лец (— льца) *նեվշատելցի*:
Невшате'ль ա· *Նեվշատել*:
невшате'льский (— ая, — ое) *նեվշատելյան*:
невы'года *վնաս, անձեռնտու բան*:
невы'годно *անշահավետաբար, անձեռնտու կերպով, անհոգտավետորէն*:
невы'годность ի· *անշահավետութիւն, անհոգտավետութիւն, անձեռնտու լինելը*· — данной сделки очевидна *տվյալ գործարքի անշահավետութիւնն ակներև է*:
невы'годный *անձեռնտու, աննպաստ, անշահավետ, անհոգտավետ*:
невыноси'мо *անտանելիորէն, անհանդուրժելիորէն, անտանելի*:
невыноси'мость ի· *անտանելիութիւն, անհանդուրժելիութիւն*:
невыноси'мый *անտանելի, անհանդուրժելի*:
невыполне'ние *չկատարում, չկատարելը, չիրագործելը*· — чего - либо обязательного *վրաէ պարտադիր բան չկատարելը*:
невыполни'мый *անիրագործելի*:
невырази'мо *անասելիորէն, անպատմելիորէն, անարտահայտելիորէն*:
невырази'мость ի· *անպատմելիութիւն, անասելիութիւն, անարտահայտելիութիւն*:
невырази'мый *անարտահայտելի, անասելի, անպատմելի*:
невысо'кий (— ая, — ое) *վեր-բարձր, ցածրահասակ, ցածր*· человек невысокого роста *ցածրահասակ մարդ, կարճ մարդ*:

невы'спавшийся (— аяся, — ееся) *քունը չհանած, կիսաքուն:*
невы'ход на рабо'ту *դործի չդնալը, դործի չդալը:*
невя'зка տես **неувя'зка.**
не'га *դրդանք, դրդավայելք:*
негармони'рующий (— ая, — ее) *աններդաշնակող, աններդաշնակ:*
негати'в լուսանկր. *նեդատիվ, ժխտանկար:*
негати'вный 1. *բացասական, ժխտողական, ժխտական.* 2. *նեդատիվ, ժխտանկարի.* — ое суждение *ժխտական դատողություն, բացասական դատողություն:*
негашёный *չմարած, չհանդած.* — ая известь *չմարած կիր, չհանդած կիր:*
не'где *տեղ չկա, վոչ մի տեղ.* — сесть *նստելու տեղ չկա.* — взять *վոչ մի տեղից չի կարելի վերցնել:*
негиби'кий (— ая, — ое) *անճկուն:*
негиби'кость ի. *անճկունություն:*
негла'дкий (— ая, — ое) *անհարթ, խորտուբորտ:*
негла'дкость ի. *անհարթություն, խորտուբորտություն:*
негла'сно *վոչ-հրապարակով, վոչ-հայտնաբար, ծածուկ, դռնփակ:*
негла'сный *վոչ հրապարակային, դռնփակ:*
неглиже' *նեդլիժե, այդազդեստ, առավոտյան հադուստ:*
неглижи'ровать чем-либо (— рую, — руешь, — руют) *անփույթ վերաբերվել, անտեսել, արհամարհել, աննշադիր լինել:*
неглубо'кий (— ая, — ое) *վոչ-խոր, յերես, ծանծաղ, սադր.* — ая рана *վոչ-խոր վերք, սադր վերք.* — ое чувство *վոչ-խոր դդացում:*
негнию'чка բոտ. *կենսածառ:*
него'дник *անպետք մարդ, անպիտան:*
него'дница *անպետք կին, անպիտանուհի:*
него'дность ի. *անպետքություն, վոչպիտանիություն:*
него'дный *անպետք, անպիտան, վոչպիտանի.* с негодными средствами *անպետք միջոցներով, նպատակին չհասնող միջոցներով, նպատակավրեպ միջոցներով.* — ый чек *անպետք չեկ:*
негодова'ние *վրդովմունք, դայրույթ.* с негодованием *վրդովմունքով, դայրույթով:*
негодова'ть на кого-либо или на что-либо (— ду'ю, — ду'ешь, — ду'ют) *դայրանալ, վրդովվել:*
негодя'й *անպիտան, անդդամ:*
негодя'йка *անպիտանուհի, անդդամուհի:*
негорю'чий (— ая, — ее) *անկեզ, չայրվող:*
негостеприи'мно *անհյուրընկալորեն, անհյուրասիրաբար:*
негостеприи'мность ի. *անհյուրընկալություն, անհյուրասիրություն:*
негостеприи'мный *անհյուրընկալ, անհյուրասեր:*
негото'вый *անպատրաստ:*
негоциа'нт *խոշոր վաճառական, մեծ առևտրական, նեդոցիանտ:*
негр *նեդր:*
негра'мотность ի. *անդրադիտություն.* ликвидация неграмотности *անդրադիտության վերացում, անդրադիտության լուծարում:*
негра'мотный *անդրադետ:*
негрёнок (— нка; հոգն. негря'та, — я'т), **негритёнок** (— нка) *փոքրիկ նեդր, նեդր յերեխա, նեդրաճետ, նեդրիկ:*
негрито'с *նեդրիտոս (ժողովուրդ):*
негритя'нка *նեդրուհի:*
негритя'нский (— ая, — ое) *նեդրական, նեդրի.* — оркестр (джаз-банд) *նեդրական յերաժշտախումբ.* — ая мелодия *նեդրական մեղեդի:*
негроненави'стник *նեդրատյաց:*
негроненави'стница *նեդրատեցուհի:*
негроненави'стничество *նեդրատեցություն:*
негрообра'зный *նեդրանման, նեդրաերես:*
негрофи'л *նեդրասեր:*
негрофо'б *նեդրատյաց, նեդրակեր:*
не'гус *նեդուս (Հաբեշստանի թագավորի տիտղոսը):*
неда'вний *քիչ առաջ յեղած, նորերումս պատահած, վերջերս պատահած:*
неда'вно *քիչ առաջ, մի քիչ առաջ, նորերս.* — окончивший *նոր ավարտած, նորավարտ:*
недалёкий (— ая, — ое) 1. *վոչ հեռու, մոտիկ.* 2. *սահմանափակ.* недалёкий человек *սահմանափակ մարդ, կարճամիտ մարդ:*
недалёко' *վոչ-հեռու, մոտ:*

недальнови́дность ի· *անհեռատեսություն*:
недалнови́дный *անհեռատես*:
неда́ром *վոչ-դուր, վոչ-անհմն, դուր չե (վոր)*:
недви́жимость ի· 1· *անշարժություն, անշարժելիություն*· 2· *անշարժ դույք*· налог с недвижимости *անշարժ դույքի հարկ*:
недви́жимый *անշարժ*· — ое имущество *անշարժ դույք*:
недви́жный տես **неподви́жный.**
недвусмы́сленный *աներկիմաստ, աներկմիտ*:
недействи́тельность ի· *անվավերություն, անզորություն*· — этой сделки сомнительна *այդ գործարքի անվավերությունը կասկածելի յե*:
недействи́тельный *անվավեր, անզոր, անիրական*· — ая сделка *անվավեր գործարք*· делать недействительным *անվավեր դարձնել*· дело о признании брака недействительным *գործ՝ ամուսնության անվավեր ճանաչելու մասին*:
неделика́тно *աննրբավարի, աննրբազգացորեն*:
неделика́тность ի· *աննրբավարություն, աննրբազգացություն*:
неделика́тный *աննրբավարի, աննրբաընդացող*:
недели́мое *անբաժանելի, անտրոհելի, անհատանելի*:
недели́мость ի· *անբաժանելիություն, անտրոհելիություն, անհատանելիություն*:
недели́мый *անբաժանելի, անտրոհելի, անհատանելի*:
неделово́й *անգործարար, անգործնական*· спор принял неделовой характер *վեճն անգործնական բնույթ ստացավ*:
неде́лька *շաբաթիկ*:
неде́льный I *շաբաթական, շաբաթվա*:
неде́льный II *գործին չվերաբերող, անգործնական, վոչ լուրջ*:
неде́ля *շաբաթ*· — прерывная *ընդհատ շաբաթ*· непрерывная неделя *անընդհատ շաբաթ*· пятидневная — *հնգօրյա շաբաթ*· шестидневная — *վեցօրյա շաբաթ*· страстная — *չարչարանաց շաբաթ, ավագ շաբաթ*· к концу недели *շաբաթվա վերջերին*· через неделю *մի շաբաթից հետո, մի շաբաթ անց*:
недержа́ние: — мочи *մեզը չպահելը, անմիզապահություն, միզահոսություն*:
неде́ятельный *անգործունյա*:
недисциплини́рованность ի· *անկարգավարժություն, անկարգապահություն*:
недисциплини́рованный *անկարգապահ, անկարգավարժ*:
недо= *իբրև բայերի նախածանց նշանակում է՝ մինչև վերջը չանելը, չավարտելը*:
недобо́р *թերառք, ապառք, թերադանձված*· — налогов *հարկերի ապառք, հարկերի թերադանձում*:
недоброжела́тель ա· *անբարյացակամ, չարակամ (մարդ)*:
недоброжела́тельница *անբարյացակամուհի, չարակամուհի*:
недоброжела́тельный *անբարյացակամ, չարակամ*:
недоброжела́тельство *անբարյացակամություն, չարակամություն*:
недоброка́чественность ի· *վատորակություն, անվարոգություն*:
недоброка́чественный *վատորակ, անվարոգ*:
недобросо́вестно *անբարեխղճորեն, անբարեխղճաբար*· поступать — *անբարեխիղճ վարվել*:
недобросо́вестность ի· *անբարեխղճություն*:
недобросо́вестный *անբարեխիղճ*· — ая конкуренция *անբարեխիղճ մրցում*:
недо́брый *անբարի, չար*· замышлять недоброе *չարիք նյութել, չար մտադրություն ունենալ*:
недова́ренный *կիսեփ, թերեփ, կիսախաշ, թերխաշ*:
недове́рие *անվստահություն*:
недове́рчиво *անվստահաբար, անվստահորեն*:
недове́рчивость ի· *անվստահ լինելը, կասկածոտություն, անվստահություն*:
недове́рчивый *անվստահ, կասկածոտ, չվստահացող*:
недове́с 1· *թերակշռում, թերաքաշում*· 2· *կշռի պակաս, քաշվից*:
недове́сить (— е́шу, — е́сишь, — е́сят; հրմ· — ве́сь), **недове́шивать** *թերակշռել, թերաքաշել*:
недове́сок (— ска) 1· *թերակշիռ իր,*

թերաքաշ առարկա, կշռապակաս իր. 2· *քաշվից, քաշը լրացնող իր:*

недово'льно *անբավական կերպով, դժգոհությամբ:*

недово'льный *անբավական, դժգոհ, անգոհ.* — собой *ինքն իրենից դժգոհ:*

недово'льство *անբավականություն, դժգոհություն:*

недовы'работать *թերարտադրել, թերապատրաստել, նորմայից պակաս արտադրել:*

недовы'работка *թերարտադրում, թերարտադրելը, թերապատրաստում:*

недовы'ручка *թերհասույթ, թերաստացք:*

недога'дливо *դլխի չընկնելով, առանց դլխի ընկնելու, չկռահելով:*

недога'дливый *դլխի չընկնող, չկռահող, անֆահմ:*

недога'дливость ի· *անկռահողություն, անֆահմություն:*

недогляде'ть (— жу', — ди'шь, — дя'т; հրմ· — ди') *չնշմարել, թերանայել, աչքաթող անել, աչքից վրիպցնել.* я недоглядел этого *այդ չես աչքաթող արի:*

недоговорённость ի· *թերասածություն, անպարզություն:*

недогру'женность ի· *թերաբեռնվածություն, պակասաբեռնություն:*

недода'ча *թերատացք, թերավճարք, թերավճարում:*

недоде'лать *թերակատարել, անավարտ թողնել, թերի անել, թերաշինել:*

недоде'лка *թերակատարում, անավարտ թողնելը, թերաշինում, թերաշինելը:*

недоде'ржка (в фотографии) *թերապահում (ղուսանկարչության մեջ):*

недоеда'ние *թերակերություն, թերսնում:*

недоеда'ть *պակաս ուտել, թերի սընվել:*

недоеда'ющий (— ая, — ее) *թերի անվող, պակասակեր:*

недожа'ренный *թերատապակած, թերխորով, կիսախորով, կիսատվածք:*

недозво'ленный *չթույլատրվածք:*

недозре'лый *թերահաս, խակ, տհաս:*

недо'и'мка *ապառք, թերառք:*

недои'мочный *ապառքային, թերառքային:*

недои'мщик *ապառքավոր, ապառքապարտ:*

недои'мщица *ապառքավորուհի, ապառքապարտուհի:*

недоказу'емость ի· *անապացուցելիություն:*

недоказу'емый *անապացուցելի:*

недока'рмливать *թերասնել, թերաբտել, պակաս կերակրել:*

не'докись ի· *յենթաթթվուտ, յենթօքսիդ:*

недоко'нченность ի· *թերավարտություն, անավարտություն:*

недоко'нченный *անավարտ, թերավարտ:*

недо'лго *վոչ յերկար ժամանակ, կարճ ժամանակ, քիչ ժամանակ.* недолго думая *առանց յերկար մտածելու:*

недолгове'чность ի· *անհարատևություն:*

недолгове'чный *անհարատև:*

недолёт *չհասում, թերաթռիչք.* — ядра *հրագնդի թերաթռիչք, հրագնդի չհասում:*

недолю'бливать *չսիրել, այնքան էլ չսիրել:*

недо'ля *անբախտություն, դժբախտություն, քամբախտություն:*

недоме'р 1· *թերաչափում.* 2· *չափապակաս:*

недоме'ривать, недоме'рить *թերաչափել, պակաս չափել:*

недоме'рок (— рка) *չափապակաս (կոշիկ, մարդ և այլն):*

недомога'ние 1· *տկարություն, թուլություն.* 2· *տկար լինելը:*

недомога'ть *տկար լինել, թուլ լինել, կիսահիվանդ լինել:*

недомо'лвка *թերասություն, լրիվ չասելը:*

недомоло'т *թերաղալում, թերաղալվածք:*

недонесе'ние: — о преступлении *հանցագործության մասին իմաց չտալը, հանցագործությունը չտեղեկացնելը:*

недоно'сок (— ска) *որպակաս, որպակաս, վաղածին:*

недооце'нивать *թերագնահատել:*

недооце'нка *թերագնահատում, թերագնահատելը, թերագնահատություն:*

недопечённый *կիսաթուխ, թերաթուխ, կիսախորով, թերխորով:*

недополуча́ть, недополучи́ть լրիվ չստանալ, թերաստանալ:
недопроизво́дство թերարտադրություն:
недопусти́мость ի· անթույլատրելիություն, անհանդուրժելիություն:
недопусти́мый անթույլատրելի, անհանդուրժելի:
недопуще́ние թույլ չտալը, չթույլատրում, չթույլատրելը:
недора́зви́тость ի· թերաճություն, թերաճունություն, թերազարգացում:
недора́зви́тый թերաճ, թերաճուն, թերազարգացած:
недоразуме́ние թյուրիմացություն· по недоразумению թյուրիմացաբար, թյուրիմացորեն, թյուրիմացությամբ:
недорого́й ոչ-թանգ, ոչ թանգադին, էժան:
недоро́д վատ բերք, պակաս բերք, թերաբերք:
не́доросль (սեռ· — ля և — ли) ա· և ի· դեռահաս տղա, դեռատի աղջիկ, թերուս:
недослу́шать լուվին չլսել, թերալսել:
недослы́шать ծանր լսել, վատ լսել, լավ չլսել:
недосмо́тр թերանայում, թերանկատում, աչքաթողանք, աչքից վրիպելը· по недосмотру աչքաթողանքի պատճառով, աչքաթող անելու հետևանքով:
недосмотре́ть (— рю́, — ришь, — рят; հրմ· — ри́) թերանայել, թերանկատել, աչքաթող անել, աչքից վրիպցնել:
недосо́л թերաղում, անալիություն, աղապակասություն:
недостава́ть (— таю́, — таёшь, — таю́т), **недоста́ть** (— а́ну, — нешь, — нут; հրմ· — а́нь) չհերիքել, չբավականանալ, չբավել, պակասել· нам страшно Вас недоставало ձեր բացակայությունը մեզ համար չատ դժալի էր· этого недоставало! ա՛յդ եր պակաս, ա՛յդ եր մնացել· мне недостаёт слов, чтоб выразить բառ չեմ գտնում արտահայտելու, խոսք չեմ գտնում ասելու· у него недостаёт смелости նա համարձակություն չունի:
недоста́ток (— тка) 1· պակաս, պակասություն, կարիք· 2· պակասություն, թերություն, արատ· за недостатком денег դրամի պակասության պատճառով· находить недостатки в чём-либо վրաև բանի մեջ թերություններ գտնել· иметь недостаток в чём-либо վրաև բանի կարիք ունենալ, մի բանի պակասություն զգալ· достоинства и недостатки արժանիքներ և թերություններ:
недоста́точно վոչ բավարար, անբավարար, չավոլ, անբավականաչափ· — энергичный վոչ բավարար յեռանդուն:
недоста́точность ի· պակասություն, անբավարարություն, պակասավորություն, չբավորություն:
недоста́точный պակաս, թերի, անբավարար, պակասավոր, չբավոր· — ый человек չբավոր մարդ· — ое питание թերասնում, թերի սնունդ:
недоста́ча պակասում, պակասորդ:
недостаю́щий (— ая, — ее) պակասող, պակաս· — вес պակասող կշիռ, պակաս քաշ:
недостижи́мость ի· անհասանելիություն:
недостижи́мый անհասանելի:
недостове́рность ի· անստուգություն, անհավաստիություն, արժանահավատ չլինելը:
недостове́рный անստուգ, անհավաստի, անարժանահավատ:
недосто́йно անարժանաբար, անարժանորեն:
недосто́йный անարժան, ստոր:
недосту́пность ի· անմատչելիություն, անմերձենալիություն:
недосту́пный անմատչելի, անմերձենալի:
недосу́г ժամանակ չունենալը, անժամանակություն, անպարապություն· мне — յես ժամանակ չունեմ, յես պարապ չեմ:
недосчита́ть, недосчи́тывать թերահաշվել, պակաս հաշվել, բոլորը չհաշվել:
недосчита́ться, недосчи́тываться հաշվելիս պակաս գտնել· я недосчитался 10 руб. հաշվեցի, 10 ռուբլի պակաս եր:
недосыпа́ть I, недоспа́ть (— сплю́, — спи́шь, — спя́т; հրմ· — спи́)

քնից չկշտանալ, քունը չհանել, կիսաքուն մնալ:

недосыпа́ть II, недосы́пать (— сы́плю, — плешь, — плют; прш. — ы́пь) *պակաս ածել, կիսատ լցնել, թերածել, թերալցնել, թերացնանել:*

недосяга́емость ի. *անհասանելիություն:*

недосяга́емый *անհասանելի.* — ая высота *անհասանելի բարձրություն:*

недотро́га բնդ. *դերզգայուն մարդ, դյուրագրգիռ մարդ, չուտ վիրավորվող մարդ:*

недоу́здок (— дка) *պախուց, պախոցց.* повод недоуздка *պախուցի յերասան:*

недоумева́ть *տարակուսել, վարանել, տատամսել:*

недоуме́ние *տարակուսանք, վարանում, տատամսություն.* быть в недоумении *տարակուսանքի մեջ լինել, վարանել:*

недоуме́нный *տարակուսական, վարանման, տատամսելու:*

недоу́чка *թերուս:*

недохва́тка *պակասորդ:*

недочёт 1. *հաշվեպակաս, պակասորդ.* 2. *պակասություն, թերություն.* — в деньгах *դրամի պակասորդ.* — в работе *աշխատանքի թերություն:*

не́дра (հոգն. չ.) *բնդերք.* в недрах земли *յերկրի ընդերքում:*

недре́млющий (— ая, — ее) *արթուն, աչալուրջ, աննինջ:*

не́друг *թշնամի, հակառակորդ, վոսոխ:*

недружелю́бие *թշնամություն, անբարյացակամություն:*

недружелю́бно *թշնամաբար, անբարյացակամորեն:*

недружелю́бный *թշնամական, անբարյացակամ:*

не́ду́г *հիվանդություն, ախտ, ցավ:*

не́ду́жный *հիվանդ, ախտավոր, ցավագար:*

неду́рно 1. *վոչ-վատ, լավ.* 2. *վատ չե:*

недурно́й *վոչ-վատ, վոչ-տգեղ.* она недурна собой *նա տգեղ չե, նա սիրուն ե:*

недю́жинность ի. *արտասովոր լինելը, աչքի ընկնող լինելը:*

недю́жинный *արտասովոր, աչքի ընկնող:*

неевкли́дов *վոչ-եվկլիդյան.* — ова геометрия *վոչ-եվկլիդյան յերկրաչափություն:*

нееосте́ственность ի. *անբնականություն:*

нееосте́ственный *անբնական:*

нежда́н(н)ый *անակնկալ, անսպասելի, չսպասած:*

нежела́ние *չցանկանալը, չհամեցում, չհամենալը:*

нежела́тельность ի. *անցանկալիություն:*

нежела́тельный *անցանկալի:*

не́жели *քան, քան թե:*

нежена́тый *չամուսնացած, ամուրի:*

не́жень (— жня) ա., **не́женка** բնդ. *դրգասեր մարդ, փափկասեր մարդ, փափկասուն, դրգասուն:*

нежне́нственный *վոչ-կանացի, վոչ-քնքուշ, վոչ-մեղմ:*

нежило́й *անբնակ, անբնակելի:*

Не́жин աշխգր. *Նեժին:*

не́жить *դերդ կյանքի սովորեցնել, քնքշացնել, դրդանքի սովորեցնել:*

не́житься *դրդանք վայելել, դրգվել, իրար դդվել, քնքշանալ.* — на солнце *արևի տակ դրդռանալ, արևը վայելել:*

не́жничать с кем-либо *մեկին քընքշաբար վերաբերվել, քնքուշ խոսել, քնքշաբանել:*

не́жно *քնքշաբար, քնքշությամբ, դդվանքով:*

не́жность ի. *քնքշություն, դրդություն:*

не́жный *քնքուշ, նուրբ, դերդ.* — ая кожа *նուրբ կաշի, քնքուշ կաշի.* — ое растение *նուրբ բույս, քնքուշ բույս.* — ое сердце *քնքուշ սիրտ.* — ые взгляды *քնքուշ հայացքներ.* — ые звуки *նուրբ հնչյուններ.* — ые краски *նուրբ ներկեր, քնքուշ ներկեր.* — ые слова *քնքուշ խոսքեր:*

незабве́нность ի. *անմոռանալիություն:*

незабве́нный *անմոռանալի:*

незаби́дка 1. բուս. *մկնականջ, անմոռուկ.* 2. *հուշանվեր:*

незави́дно *աննախանձելիորեն:*

незави́дность ի. *աննախանձելիություն:*

незави́дный *աննախանձելի:*

незави́симо *անկախորեն, անկախ կերպով:*

незави́симость ի. *անկախություն.*

борьба за независимость անկախության պայքար, կռիվ անկախության համար:

незави'симый անկախ· — ое государство անկախ պետություն· быть независимым անկախ լինել:

незада'ча անհաջողություն, ձախողություն, փորձանք:

незада'чливый անհաջող, ձախորդ, քամբախտ· — день անհաջող որ, ձախորդ որ· — человек անբախտ մարդ:

неза'до'лго քիչ առաջ, վոչ շատ առաջ· — до этого события այս դեպքից մի քիչ առաջ· — перед его приездом նրա գալուց մի փոքր առաջ:

незаква'шенный չմերված, չմակարդված:

незако'нно ապօրինաբար, ապօրինությամբ:

незаконноро'ждённость ի· ապօրինածնություն:

незаконноро'ждённый ապօրինածին· — ребенок ապօրինածին յերեխա, ապօրինի մանուկ:

незако'нность ի· ապօրինություն, ապօրինի լինելը:

незако'нный ապօրինի:

незамени'мо անփոխարինելի կերպով:

незамени'мость ի· անփոխարինելիություն:

незамени'мый անփոխարինելի:

незаме'тно աննկատելիորեն, աննշմարելի կերպով:

незаме'тность ի· աննկատելիություն, աննշմարելիություն:

незаме'тный աննկատելի, աննշմարելի:

незамо'жник չքավոր, չունևոր (դյուղացի):

незамо'жница չքավորուհի, չունևորուհի (գեղջկուհի):

незамо'жный չքավոր, չունեցող:

незаму'жняя մարդու չընացած, չպսակված, ամուրի:

незамыслова'тый վոչ-բարդ, վոչ-խրթին, հասարակ, պարզ:

неза'нятый չզբաղված, չբռնված, ազատ:

незапа'мятный շատ հին, վաղեմի, հնագույն, անհիշելի· с незапамятных времён (սկսած) անհիշելի ժամանակներից:

незапя'тнанный չարատավորված, անբիծ:

незарабо'танный չվաստակած, անվաստակ, անաշխատ· — ый прирост անվաստակ աճ, անաշխատ աճ:

незара'зный անվարակիչ:

незаслужённо անարժան կերպով, հանիրավի, անարդարացիորեն:

незаслужённый 1· անվաստակ, վոչ-վաստակավոր· 2· անարժան, անարդարացի, անիրավացի:

незате'йливый անպահանջկոտ, հասարակ, համեստ:

незатуха'ющий (— ая, — ее) չմարող, չհանգչող, չիջնող:

незауря'дный արտասովոր, յերևելի, աչքի ընկնող· очень незаурядная женщина շատ արտասովոր կին, շատ աչքի ընկնող կին:

не'зачем կարիք չկա, հարկ չկա, պետք չկա· — было պետք չեր:

незащищённый անպաշտպան, չպաշտպանված:

незва'ный անկոչ, չհանչված· — гость անկոչ հյուր:

нездоро'виться: мне нездоровится յես լինձ վատ եմ զգում, տկար եմ, քեֆ չունեմ:

нездоро'вый անառողջ, վատառողջ, հիվանդոտ· — вид վատառողջ տեսք, անառողջ տեսք· — ые лёгкие հիվանդոտ թոքեր, վատառողջ թոքեր· — ая местность վատառողջ վայր:

нездоро'вье վատառողջություն, անառողջություն, տկարություն:

неземно'й վոչ-յերկրային, դերերկրային, չնաշխարհիկ:

незло'бивый անոխակալ, անհիշաչար, անչարակամ:

незло'бие անոխակալություն, անհիշաչարություն, անչարակամություն:

незлопа'мятность ի· անհիշաչարություն, անոխակալություն, անքինախնդրություն:

незлопа'мятный անհիշաչար, անոխակալ, անքինախնդիր:

незнако'мец (— мца) անծանոթ:

незнако'мка անծանոթուհի, անծանոթ կին:

незнако'мство անծանոթություն:

незнако'мый անծանոթ:

незна'ние չգիտենալը, անգիտություն

թյուն, անտեղյակություն, անծանոթություն:

незначи'тельно աննշանորեն, չնչինաբար, չնչին չափով:

незначи'тельный աննշան, չնչին. — ое большинство աննշան մեծամասնություն:

незначи'тельность ի. աննշան լինելը, աննշանություն, չնչինություն:

незре'ло տհասորեն, խակաբար:

незре'лость ի. տհասություն, խակություն, անհասունություն:

незре'лый տհաս, խակ, անհասուն:

незри'мость ի. անտեսանելիություն, աննշմարելիություն:

незри'мый անտեսանելի, չտեսնվող, աննշմարելի:

незы'блемо անսասանորեն, անհողդողդ կերպով, անդրդվելիորեն:

незы'блемость ի. անսասանություն, անհողդողդություն, անդրդվելիություն:

незы'блемый անսասան, անհողդողդ, անդրդվելի:

неизбе'жно անխուսափելիորեն, անխուսափելի կերպով:

неизбе'жность ի. անխուսափելիություն:

неизбе'жный անխուսափելի:

неизве'данный չփորձած, չճաշակած, անքնին, անծանոթ:

неизве'стно անհայտ է, հայտնի չէ. он живет — где հայտնի չէ, թե վորտեղ է նա ապրում:

неизве'стность ի. անհայտություն, անորոշություն, անծանոթություն. быть в неизвестности անհայտության մեջ լինել, անորոշության մեջ լինել:

неизве'стный անհայտ, անծանոթ. неизвестное մար. անհայտ. неизвестные величины անհայտ մեծություններ:

неизгладимо անջնջելիորեն, անմոռանալիորեն, անհարթելիորեն:

неизгладимость ի. անջնջելիություն, անմոռանալիություն, անհարթելիություն:

неизгладимый անջնջելի, անմոռանալի, անհարթելի:

неи'зданный չհրատարակված, լույս չտեսած:

неизлечимо անբուժելիորեն, անբժշկելի կերպով:

неизлечимость ի. անբուժելիություն, անբժշկելիություն:

неизлечимый անբուժելի, անբժշկելի:

неизменно անփոփոխաբար, հավատարմորեն, անդավաճան կերպով:

неизменность ի. անփոփոխություն, հավատարմություն, անդավաճանություն:

неизменный անփոփոխ, հավատարիմ, անդավաճան. — друг հավատարիմ ընկեր, անդավաճան ընկեր:

неизменяемый անփոփոխելի:

неизмеримо անչափելիորեն, անչափորեն:

неизмеримость ի. անչափելիություն:

неизмеримый անչափելի. — ая глубина моря ծովի անհատակ խորություն:

неизносимый չմաշվող, անմաշ:

неизречённый չասված:

неизъясни'мый անբացատրելի, անմեկնելի, չբացատրվող:

неиме'ние չունենալը. за неимением չունենալու պատճառով, չունենալով:

неимове'рно անհավատալիորեն, արտասովոր կերպով, չլսված կերպով:

неимове'рность ի. անհավատալիություն, արտասովորություն, չլսվածություն:

неимове'рный անհավատալի, արտասովոր, չլսված, չտեսնված:

неиму'щий (— ая, — ее) չունևոր, չքավոր:

неискорени'мость ի. անբնաջնջելիություն, անջնջելիություն:

неискорени'мый անբնաջնջելի, անջնջելի:

неи'скренне, неи'скренно վոչ-անկեղծորեն, կեղծաբար. говорить — վոչ-անկեղծ խոսել, կեղծաբար ասել:

неи'скренний վոչ-անկեղծ, կեղծ:

неи'скренность ի. անկեղծ չլինելը, կեղծություն:

неиску'сно անհմտաբար, անճարտար կերպով:

неиску'сность ի. անհմտություն, անճարտարություն:

неиску'сный անհմուտ, անճարտար:

неисповеди'мый անարտահայտելի, անասելի, անհասանելի, անքննելի:

неисполне'ние չկատարում, չիրագործում, չկիրարկում, չկատարելը. в случае неисполнения չկատարելու դեպքում:

неисполни'мый անկատարելի, անիրագործելի, անկիրառելի:
неиспо'рченность թ. չվնասածություն, անեղծություն:
неиспо'рченный չվնասած, անեղծ:
неисправи'мость թ. անուղղայություն, անուղղելիություն:
неисправи'мый անուղղա, անուղղելի:
неиспра'вно անճշտապահորեն, անկանոն կերպով:
неиспра'вность թ. անճշտապահություն, անճշտակատարություն, անկանոնություն, անսարքություն:
неиспра'вный անճշտապահ, անճշտակատար, անկանոն, անսարքին. — ый должник անճշտակատար պարտապան. — ый ученик անճշտապահ աշակերտ:
неиссяка'емость թ. անսպառելիություն, անսպառություն, անհատնելիություն:
неиссяка'емый անսպառ, անսպառելի, անհատնում:
неи'стово կատաղությամբ, մոլեգնաբար, դաղաղած կերպով:
неи'стовство կատաղություն, մոլեգնություն, դաղաղածություն:
неи'стовствовать (— ствую, — ствуешь, — вуют, — вуй) կատաղել, մոլեգնել, դաղաղել:
неи'стовый կատաղի, մոլեգին, դաղաղած. — ая буря կատաղի փոթորիկ. — ый гнев կատաղի բարկություն, մոլեգին ցասում:
неистощи'мость թ. անսպառելիություն, անսպառություն:
неистощи'мый անսպառ, անսպառելի, անհատնում:
неистреби'мость թ. անբնաջնջելիություն, անջնջելիություն:
неистреби'мый անբնաջնջելի, անջնջելի:
неисцели'мость թ. անբուժելիություն, անբժշկելիություն:
неисцели'мый անբուժելի, անբժշկելի:
неисчерпа'емость թ. անսպառելիություն, անսպառություն, անհատնելիություն:
неисчерпа'емый անսպառելի, անսպառ, անհատնում:
неисчисли'мость թ. անթվարկելիություն, անհաշիվ լինելը, անհամարություն:
неисчи'сли'мый անթվարկելի, անհաշիվ, անհամար:
нейтрализа'ция չեզոքացում, չեզոքացնելը:
нейтрализова'ть (— зу'ю, — зу'ешь, — зу'ют) չեզոքացնել:
нейтралите'т չեզոքություն. вооружённый — զինված չեզոքություն. соблюдать — չեզոքություն պահպանել:
нейтра'льный չեզոք. — человек չեզոք մարդ. — ое государство չեզոք պետություն:
некази'стый անբարետես, անգեղատես, վոչ-սիրունատես, աննշան տեսք ունեցող:
неквалифици'рованный անորակյալ, անորակ. — рабочий անորակ բանվոր, անորակյալ բանվոր. — труд անորակյալ աշխատանք, անորակ աշխատանք:
не'кий (— ая, — ое) մի ինչ-վոր, վոմն:
неко'вкий (— ая, — ое) անդյուրակուռ, անկռելի:
неко'вкость թ. անկռելիություն, անդյուրակուռություն:
не'когда I ժամանակ չկա. мне — յես ժամանակ չունեմ:
не'когда II մի ժամանակ, յերբեմն, ժամանակով. некогда знаменитый учёный յերբեմնի հռչակավոր գիտնական, մի ժամանակ ականավոր գիտնական:
не'кого մարդ չկա. — послать ուղարկելու մարդ չկա. мард չկա, վոր ուղարկենք. не у кого спросить մարդ չկա, վորից հարցնես:
некомпете'нтность թ. անձեռնհասություն, անիրավասություն:
некомпете'нтный անձեռնհաս, անիրավասու:
некорре'ктность թ. անկորրեկտություն, անբարեզուսպություն:
некорре'ктный անկորրեկտ, անբարեզուսպ:
не'который մի ինչ-վոր, ինչ-վոր. — ые из них նրանցից մի քանիսը. на — ое время մի վորոշ ժամանակով, կարճ ժամանակով. — ым образом մի ինչ-վոր ձևով, մի ինչ-վոր յեղանակով. в — ых случаях մի քանի դեպքերում, վորոշ դեպքերում:
некраси'во տգեղաբար, տգեղ:

некраси́вость ի· տգեղություն, դեղություն:
некраси́вый տգեղ, դեշ:
некро́з բուժ· նեկրոզ, մահացում, վոսկրափտություն:
некроло́г 1· նեկրոլոգ, մահախոսական· 2· մահախոս (մահախոսականները դրող):
некроло́гия մահախոսություն, մահախոսագրություն:
некрологи́ческий (— ая, — ое) մահախոսական, մահախոսագրական:
некрома́нт դիագուշակ, մեռելահարցույկ, դիահարցույկ:
некроманти́ческий (— ая, — ое) դիագուշակության, մեռելահարցության, դիահարցության:
некрома́нтия դիագուշակություն, մեռելահարցություն, դիահարցություն:
некро́поль ա· նեկրոպոլ, մեռելաքաղաք, դերեզմանատուն:
некста́ти անտեղի, անժամանակ, անդեպ· делать что - либо некстати մի բան անտեղի անել, մի բան անդեպ անել· кстати и некстати տեղի և անտեղի, իդեպ ու անդեպ:
не́ктар նեկտար:
не́кто վոմն, մի վոմն, ինչ-որ մի մարդ· некто по фамилии Иванов մի վոմն՝ Իվանով ազգանունով:
не́куда տեղ չկա, (ուր...)· мне́ некуда пойти չես տեղ չունեմ գնալու:
некульту́рность ի· անկուլտուրականություն:
некульту́рный անկուլտուրական:
некуря́щий (— ая, — ее) չծխող· купе для некурящих չծխողների կուպե, չծխողների խցիկ:
нела́дный անհաջող, վատ, անհամերաշխ· тут что - то неладно այստեղ ինչ-որ վատ բան կա, այստեղ վատ բանի հոտ է գալիս:
нелады́ ա· անհամերաշխություն, անհամուրյուն:
нелега́льно անլեգալ, անօրինական կերպով:
нелега́льность ի· անլեգալություն, որևէքով թույլատրված չլինելը:
